

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: [info@artsakhlis.am](mailto:info@artsakhlis.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



**ՍԵՐԳԵՅ ԱՂԱԶԱՆՅԱՆ**

**ԼԵՋՈՒՆ ԵՎ ԳԻՐԸ  
ՄԵՍԿՈՒՅՑԹԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ՍԵՐԳԵՅ Ա. ԱՂԱԶԱՆՅԱՆ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳԻՐԸ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ուսումնական ձեռնարկ

*Ի նշանավորումն  
հայոց հինգիարյուրամյա գրատպության*

*Զավակներիս  
և ուսանողներիս՝  
գլուխ խորհուրդն իբրև պատզամ*

Հրատարակության է երաշխավորել  
Հայկական պետական մանկավարժական համալսարանի  
գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհուրդը

Պատասխանատու խմբագիր՝ **Սեյրան Զաքարյան**  
փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
**Գրախոս՝ Արտաշես Մարտիրոսյան**  
բան. գիտ. թեկնածու, դոցենտ

### Աղաջանյան Սերգեյ

Ա 458 ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳԻՐԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ: Ուսումնական  
ձեռնարկ. /Ա.Աղաջանյան. – Եր. «Գիտություն», 2015, 141 էջ:

Ուսումնական ձեռնարկը նվիրված է մարդու մշակութաստեղծ  
գործութեության ամենաուշագրավ և իրար սերտորեն արնչակից  
ոլորտներից երկուսին՝ լեզվին և գրին: Այլ գիտությունների հա-  
մար ևս ուսումնասիրության նյութ այս արժեքները ձեռնարկում  
դիտարկվում են մշակութաբանական տեսանկյունով: Քննարկ-  
ված թեմաները նպատակառուղղված են մարդկային հասարակու-  
թյան համար լեզվի և գրի անփոխարինելի նշանակության մեկ-  
նաբանությանը:

Ուսումնական ձեռնարկը հասցեագրված է կրթահամակար-  
գում «Մշակութաբանություն» դասընթացն ունեցող բարձրագույն  
ուսումնական հաստատությունների ուսանողներին, միջին մաս-  
նագիտական կրթօջախների սովորողներին: Այս կարող է օգտա-  
կար լինել նաև յուրաքանչյուրին, ում հետաքրքրում են մշակու-  
թաբանության խնդիրները:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկրորդ հրատարակության առիթով .....	5
Նախաբան առաջին հրատարակության .....	6

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԸ

Մարդը՝ յուրօրինակ արարած .....	10
Մարդը տեղայնացված չէ .....	14
Մարդը մշակութաստեղծ է .....	16
Մարդը սոցիալական արարած է .....	21
Մշակույթ .....	25
Նախնական մշակույթ .....	29

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔ

Լեզուն .....	36
Լեզվի ծագումը .....	39
Լեզվի մշակութային նշանակությունը .....	40
Խոսքը .....	45
Խոսքի մշակութային նշանակությունը .....	49

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ ԳԻՐ ԵՎ ԳԻՐՔ

Գիրը .....	55
Գրի ծագումը .....	57
Գրի մշակութային նշանակությունը .....	59
Գրի պաշտամունքային ընկալումը .....	61
Գիրքը .....	64
Գրքի հասարակական հեղինակության մշակութաբանական ինաստը .....	67
Գրքի պատմականորեն ձևավորված տեսակները .....	72
Գրքի տեսակներն ըստ գրքարտադրության նյութերի ....	72
Գրքի տեսակներն ըստ տեքստի արձանագրնան ձևի ....	80

Գրքի տեսակներն ըստ բովանդակության .....	86
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</b>	
(Մշակութաբանական հիմնախնդիրներ քննարկելու համար)	
Բանականության հիմնախնդիրը և հարակից հարցեր .....	94
Արտագաղթի հայկական ֆենոմենը .....	106
Եղելություն, պատմություն և ազգային ինքնագիտակցություն .....	110
Մաշտոցը և նախաճաշտոցյան հայոց գրի խնդիրը .....	121
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	124
ՑԱՆԿ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ .....	137
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	138

## ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Սա ծեռնարկի երկրորդ հրատարակությունն է՝ պայմանավորված առկա պահանջարկով։ Առաջին՝ 2012 թ. հրատարակության տպաքանակը սպառվեց համեմատաբար կարծ ժամանակում։ Ինձ համար հաճելի էր իմանալը, որ այն որոշակի հետաքրքրություն է առաջացրել նաև մասնագիտական կրթության ոլորտից դուրս, այսպես ասած՝ շարքային ընթերցողների շրջանում։

Նոր հրատարակությունն առիթ դարձավ նորովի անդրադարձու արդեն եղածին։ Այդ ընթացքում համոզվեցի, որ ծեռնարկը բաժինների ու թեմաների փոփոխությունների և հավելումների կարիք չունի։ Այս հրատարակության համար արածն իհմնականում լեզվական-խմբագրական է, որի ընթացքում որոշ թեմաներ հարստացան նոր նյութերով։

Իրականացրածն կառուցվածքային միակ փոփոխությունը վերաբերում է շարադրամքի տեքստում համարակալումով ներկայացվող ծանոթագրություններին։ Առաջին հրատարակությունում դրամք տեղակայված են տողատակերում՝ ըստ էջերի։ Սակայն այս անգամ, նկատի ունենալով դրանց ծավալը և երբեմն էջից էջ անցնելու հանգամանքը, նպատակահարմար համարեցի ներկայացնել գործի վերջում՝ առանձին բաժնով։

Ս. Ա. Աղաջանյան

## ՆԱԽԱԲԱՆ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Քաղաքակրթության հազարամյակների պատմական ընթացքը ծևավորել է մի շարք գիտություններ, որոնք ջամանակ են ծանաչել մարդու բնույթը, գոյության իմաստը, տեղն ու դերն աշխարհում: Դրանք հասարակական գիտություններն են, որոնց ուսումնասիրության ոլորտ ներառված խնդիրները յուրահատուկ են նրանով, որ հաճախ դառնում են նաև առօրյա, ոչ մասնագիտական խոսք ու գրույցի նյութը: Ինարկե, դա լավ է. մարդու իմքնածանաչողության ձևերից մեկն էլ քննարկում–գրույցն է, որին յուրաքանչյուրը մասնակից է դառնում իր փորձի, իմացության, մասնավորի մեջ ընդհանուրը (նաև հակառակը՝ ընդհանուրի դրսնորման մասնավոր դեպքերը) տեսնելու կարողությամբ: Այդ գրույցը հազարամյակներ է տևել ու տևելու է, քանի դեռ այս երկրագնդի վրա գոյատևում է մեր տեսակը: Սերունդներն իրար են հաջորդել, վերանայվել են անվիճելի թվացող ճշմարտություններ, նորովի են հայտնաբերվել մոռացվածները: Թվում է՝ այլևս ինչը կարող է չփորձված կամ չիմացված լինել: Բայց, բարեբախտաբար, այդպես չէ. այլապես կյանքը կկորցներ իր իմաստը և ամեն մի նոր սերնդի հետ չէր նորոգվի:

Սակայն մի բան է առօրյա, ոչ մասնագիտական, հաճախ պարագը լցնող խոսք ու գրույցը, միանգամայն այլ բամ՝ մասնագիտական իմացությունը: Միրողական, հաճախ նաև սխալական այն մակարդակը, որը թույլատրելի է ոչ մասնագետին, թույլատրելի չէ մասնագետին: Իսկ մարդու երկրային առաքելության իմաստը, գոյության ու նկարագրի, գործունեության օրինաչափությունները մասնագիտական ուսումնասիրության անսպառ նյութ են հատկապես «Փիլիսոփայություն» և «Մշակութաքանություն» գիտությունների համար:

Կարող է թվալ, թե ավելորդ են այն ջամքն ու ժամանակը, որը մարդը ներդնում է՝ նորից ճանաչել-հասկանալու համար այն, ինչը թվում է, թե արդեն որոշակիացել է յուրաքանչյուրի կեն-

սափորձի և կենցաղային մակարդակով գրույցի միջոցով: Իհարկե սխալվում են այդպես մտածողները: Մարդկանց մեծ մասի արատներից մեկն էլ այն է, որ երբեք չեն կասկածում իրենց ծշմարտությանը: Դավատացնում են ձեզ, որ եթե մի քիչ հետևողական լինեք և թեկուզ դասագրքային մակարդակով ուսումնասիրեք փիլիսոփայություն ու մշակութաբանություն, ապա հեշտությամբ կհայտնաբերեք մարդուն ճանաչելու, կենսական իրողությունները գնահատելու կարողության առումով այն հսկայական տարրերությունը, որը կօնավորվի ձեր մեջ այդ աշխատանքի արդյունքում: Դրանով դուք կապրեք գյուտի, ճանաչողության երջանկությունը, որը մարդու կարևորագույն հոգևոր հաճույքներից մեկն է:

Ձեզ ներկայացվող այս ուսումնական ձեռնարկը մշակութաբանական տեսանկյունով անդրադարձ է մարդու կենսագործունեության ընդամենը երկու կարևոր ոլորտների՝ մշակույթի համակարգում լեզվի (խոսքի) և գրի (գրքի) նշանակությանը: Գրքիս բնույթը (ուսումնական ձեռնարկ) իմքնին պայմանավորել է բովանդակության և շարադրանքի մի քանի հանգանանքներ:

Նախ՝ այն, որ ամեն կերպ աշխատել են խուսափել գիտական բանավեճին պատշաճող հարցեր ընդգրկելուց և մնալ նյութին առնչվող գիտելիքի անվիճելի ծշմարտությունների շրջանակներում: Իսկ այն դեպքերում, երբ որոշ թեմաներ «պարտադրել են» այդպիսի հարցեր, ապա նախընտրել են դրանք առանձնացնել և ներկայացնել «Դավելվածներ» լրացուցիչ բաժնով: Իհարկե կարող էի խուսափել դրանից: Սակայն այդ հավելյալ բաժնի գոյությունը նպատակահարմար թվաց հետևյալ պատճառով: Դուք արդեն դպրոցական չեք, որը նոր է առնչվում հանրահայտ ու ոյուրըմբռնելի գիտական ծշմարտություններին: Դասունության ժամապարհի ձեր այս շրջանը (ուսանողական տարիներ) ձեզնից արդեն իսկ պահանջում է ձևավորել սեփական աշխարհայացք, իմանալ ուրիշներինը, խորհրդածել ու բանավիճել (նկատի ունեցեք, որ սա էականորեն տարբեր է մեզ բնորոշ ու լավ ծանոթ լեզվակրովից) մասնագիտական հարցերի շուրջ:

Ուզում եմ ասել, որ «Դավելված» բաժնի նյութերը և բովանդակությամբ, և հարցադրումներով, և լեզվաոճական առումներով մասնակիորեն տարբեր են բուն տեքստից ու նպատակաուղղված են ծեր՝ ինքնուրույն աշխատանքով ավելի ակտիվ ճանաչողական գործունեության ծավալմամբ:

Զեռնարկի երեք հիմնական բաժիններից («Սարդ», «Լեզու և խոսք», «Գիր և գիրք») յուրաքանչյուրն առաջադիր խնդրի մշակութաբանական բացատրությունն է որոշակի խումբ թեմաների շրջանակում: Նկատի ունենալով գործի տեսակը (ուսումնական ձեռնարկ), աշխատել եմ գիտական ծշմարտությունները շարադրել հնարավորինս մատչելի լեզվով: Սակայն դա չեմ իրականացրել նյութի մեկնաբանության համար անհրաժեշտ հասկացությունների անտեսումով, որովհետև առանց դրանց հնարավոր չէ ձևավորել մասնագիտական մտածողություն և իմացություն:

Իմ խնդրը լուծած ու նպատակս իրագործած կլիմեմ, եթե գիրքը նպաստի ձեր ուսումնառությանը, հրահրի մշակութաբանության մեջ ավելի հմտանալու և ինքնուրույն աշխատանք ձեռնարկելու նախանձախնդրություն:

Միրով և երախտագիտությամբ կընդունեմ ձեռնարկի բովանդակության, կարուցվածքի ու ոճի վերաբերյալ յուրաքանչյուր առաջարկություն:

Ս. Ա. Աղաջանյան

## ՄԱՐԴԸ

Կարծես թե ամսիճելի ծշմարտություն է, որ մեր կենսահամակարգն ավարտել է իր կենսաբանական էվոլյուցիան, որի արդյունքում մարդը դարձել է գերակայող տեսակ: Գիտությունը որքամ կարողացել է ծշտել, Երկիր մոլորակի գոյության ողջ ընթացքում մարդն աննախադեպ է նրանով, որ մշակութաստեղծ է: Դրա էական հատկանիշը ոչ թե բնությանը հարմարվելն է, այլ այն վերափոխել–վերստեղծելով՝ իրեն հարմարեցնելը:

Մշակութաստեղծման գործընթացն էվոլյուցիայի թերևս յուրօրինակ շարունակությունն է: Սակայն եթե կենսաբանական էվոլյուցիան դժվարնկատելի է, դանդաղընթաց, տեսակներ ծևավորող և բազմազանություն ապահովող, ապա, ի հակադրություն դրա, մշակութային էվոլյուցիան (մանավանդ նոր ժամանակներում) հարահոս է, որն անզսպորեն վերափոխում, ոչնչացնում է բնության մեջ առկա կենդանի ու անկենդան տեսակները: Մարդու բանական ծեռքբերումները, ցավոք սրտի, զենք են դառնում իր նյութական պահանջմունքների և կենդանական բնագդների ձեռքին:

Մարդն է այդ էվոլյուցիան իրականացնողը, ուրեմն և՝ հետևանքների պատասխանատուն:

## ՄԱՐԴԸ ՅՈՒԹՈՐԻՆԱԿ ՄՐԱՐԱԾ

Ողջ տիեզերքը, նրա յուրաքանչյուր հյուլեն կայացել և գոյատևում են զարմանալի ու անթերի տրամաբանությամբ: Դրա ակնհայտ և անխախտ սկզբունքներից են հավերժական շարժումը, բաղկացուցիչների համակարգային (փոխպայմանավորող) գոյակերպը, շնչավոր (կենդանիներ և բույսեր) ամեն ինչի ինքնավերարտադրությունը, գենետիկ կոդավորվածության հետ նաև էվոլյուցիայի հնարավորությունը և այլն: Ըստ արդի գիտական տվյալների՝ կաթնասունները (մենք և համակարգի մյուս տեսակները) ներկայացնում են երկրագունդը երբեք բնակեցրած վեցերորդ կենսահամակարգը: Ուրեմն եղել և ժամանակի ընթացքում վերացել են (իհարկե ոչ ամբողջությամբ) հինգ կենսահամակարգեր: Յուրաքանչյուր կենսահամակարգ ունեցել է իր գերակայող տեսակը, որը տեղը գիշել է այլ տեսակի՝ նոր կենսահամակարգում թողնելով իր կենսունակ ներկայացուցիչներին: Օրինակ՝ այժմ կաթնասունների հետ հաջողությամբ գոյակցում են բազմաթիվ կենդանիներ ու թռչուններ, որոնք դիմոզավր տեսակի ներկայացուցիչներ են: Ծագումով շատ ավելի հին են ձկները, խեցիավորները, ցանաքում՝ փափկամորթները, միջատները և այլն:

Մեր ժամանակաշրջանը կաթնասունների գերակայությամբ բնութագրվող էտապն է: Ավելորդ է ասելու, որ նախորդ հինգ համակարգերն ել բաղադրիչների փոխպայմանավորող կապերով ամբողջական ու ինքնօրինակ են եղել: Բայց մի օր քանովել են՝ սպառելով ամբողջի և յուրաքանչյուր հյուլեի գոյության իմաստն ու ժամանակը: Իսկ գոյության իմաստը եղել է նախասահմանված անխախտ պահանջնունքը՝ տեսակի պահպանումը: Կենսահամակարգերը որքան էլ փոխվեն, դա եղել ու մնալու է իբրև գոյության առաջնային իմաստ և խնդիր:

Յուրաքանչյուր տեսակի ու համակարգի համար ինչ-որ քանակի, հզորության, պոտենցիալ կամ պահեստային հնարավորու-

թյան էներգիա, կենսունակություն է նախասահմանված, կողավորված: Այն սպառվելու հետ սպառվում է գոյության իմաստը, վերանում է տեսակը, քանդվում է համակարգը: Իսկ համակարգերը և իրենց բաղկացուցիչները միշտ իրար փոխարինել են թերևս կոպիտից, խոշորից, ոչ ճկունից դեպի նուրբը, կատարյալն ու բարդը, դեպի ավելի հղկվածն ու կենսունակն ընթացքի սկզբունքով:

**Ակնհայտ է, որ կա անկասելի մի ուժ, որը պարբերաբար քանդում է ու նորից հավաքում երկրագունդը, հղկում, կատարելագործում իր արարչությունը: Եա արարում է անհմանալի և անսպառելի տրամաբանությամբ՝ միաժամանակ ինքն իր արարչությունն ասես լուրջ չընդունելով, իր արարածի մեջ ներդնելով նաև անխափան գործող բացասման մեխանիզմը:**

Ըստ վերջին գիտական ուսումնասիրությունների՝ կենսահամակարգերում առկա բազմազանությունը գենետիկ տարրեր բազաների արդյունք չէ: Ի սկզբանե և առ այսօր էլ բնության մեջ կա անխախտ պահպանվող գենետիկ մեկ բազա: Դա այն շինանյութն է, որի բաղկացուցիչների տարբեր համադրություններով ստացվել են զանազան կենսահամակարգեր, կենդանի օրգանիզմներ: Մի տեսակ գործունեություն, որի նմանն իրականացնում է նաև մարդը՝ իհարկե իր անհամենատելիորեն խեղճ կարողությունների շրջանակներում: Օրինակ՝ լեզվի նույն բառակազմի զանազան համարություններով ծևավորում ենք տարբեր մտքեր արտահայտող նախադասություններ, նույն տեսակի ու քանակի շինանյութերով՝ տարբեր, իրար չկրկնող կառույցներ և այլն: Էլ չեմ ասում երաժշտության մասին, որի բազան ընդամենը ... յոթ նոտա է:

Անհմանալի բազմազան և անկրկնելի է կենդանի ու անկենդան նյութով լցված այն աշխարհը, որի բնակիչն է նաև մարդը: Թերևս երբեք էլ վստահելիության չափ հավաստի չի դառնալու մարդ տեսակի գոյության տարիքն այս կապույտ–կանաչ մոլորակի վրա: Բայց մի բան անառարկելի է. եթե մենք ենք կենդանի նյութի<sup>1</sup> էվոլյուցիայի բարձրագույն արդյունքը, ուրեմն կրում ենք

այդ ընթացքի միլիոնավոր տարիների էտապային փոփոխությունները, տեսակային անցումների վերաբերյալ տեղեկությունը՝ որպես կենդանի նյութի գենետիկ հիշողություն:

Իր տեսակի ինքնաճանաչողության օգտումը (Ծանեա զքեզ - ճանաչիր ինքո քեզ,- դեռևս ամտիկ ժամանակներում էր հանձնարարում Սոկրատեսը) մշտապես եղել և մնալու է մարդու ակտիվ հետաքրքրությունների շրջանակում: Այդ խնդիրը համարյա անմնացրոդ լուծել են բնական գիտությունները՝ ստեղծելով ծագումնաբանական, ֆիզիոլոգիական ու անատոմիական անառարկելի մեկնաբանությունների ճանաչողական հսկայական նյութ: Դեմք այդ իմացականությունն է հնարավոր դարձնում արդիական գործնական գիտաճյուղերի (օրինակ՝ գենետիկական ինժեներությունը) զարգացումը:

Սակայն նույնը չի կարելի ասել մարդու հիմնախնդրով զբաղվող հասարակական գիտությունների վերաբերյալ: Ոչ թե այն պատճառով, որ այդ գիտակարգերն են պակաս զարգացած կամ համապատասխան գիտնականները՝ նյութի ուսումնասիրության մեջ պակաս ջանադիր: Բոլորովին: Դասարակագիտությունը միշտ էլ բնագիտությունից հարուստ է եղել գիտական ուսումնասիրության և մեթոդաբանությամբ, և տեսություններով: Մշակութաստեղծ մարդու էռլյան, կեցության ինաստի, գործունեության հետևանքների և այլնի վերաբերյալ վերջնական ու անառարկելի մեծաբանակ ճշմարտություններ ասելն է ամիսար: Խնդիրը հասարակագիտության մեջ չէ, այլ նրա ուսումնասիրած նյութի, որին ամենից բնորոշը հարափոփոխ, միաժամանակ բազմադեմ լինելն է: Դրանից էլ տեսակետների այն ողջ բազմազանությունը<sup>2</sup>, որը մշտապես առկա է թե՛ կենցաղային-առօրյա մակարդակի խոսակցություններում, թե՛ գիտական ուսումնասիրություններում: Ահա թե ինչումն է հասարակագետ գիտնականի գործի բարդությունը և հետաքրքրությունը:

Նույն այդ գործոններն են (հարափոփոխություն և միաժամանակյա բազմադիմություն), որ մարդու և նրա կենսագործունեության վերաբերյալ ճշմարտություններ ասելու ցանկություն

ունեցողից պահանջում են մշտապես լինել շրջահայաց: Թե՛ անհատ մարդը, թե՛ համակեցական ամբողջությունն ակտիվորեն վերափոխվող էություններ են՝ ըստ իրենց կենսական հանգամանքների, առաջնահերթ արժեքների, նպատակների և այլն:

Կարծում եմ՝ իր ինքնաճանաչողության մեջ մարդու սխալականության գլխավոր պատճառներից մեկն էլ դարերով ամրապնդված տեսակային էգոիզմն է, եսակենտրոն, հաճախ անհիմն, ինքնամեծար հիացումը:

Մարդու էության, գործունեության հարուցած բազմազան խնդիրների վերաբերյալ ամենաընդգրկուն, ամբողջական և ընդհանրական գիտելիքները ձևավորվում են հատկապես երկու գիտակարգերի՝ փիլիսոփայության (փիլիսոփայական մարդաբանություն) և մշակութաբանության շնորհիվ: Որովհետև սրանք են այն գիտությունները, որոնք ի մի են բերում մարդու ճանաչողությանը նպատակառուղղված գիտաճյուղերի (պատմագիտություն, հոգեբանություն, սոցիոլոգիա, իրավագիտություն, արվեստագիտություն, կրոնագիտություն և այլն) ձեռքբերումները:

Այսպես թե այնպես, ակնհայտ է, որ մարդն իր ամեն ինչով նույնքան երկրային է, որքան որ երբեւ այս մոլորակը բնակեցրած և այժմ էլ բնակեցնող շնչավոր ու անշումչ ամեն ինչը: Եթե այդ ամբողջության մեջ նույնությունները և նմանությունները բնական–կենսոլորտային և ծագումնաբանական ընդհանրությունների ցուցիչներն են, ապա առանձնահատուկ տարրերությունները՝ տեսակային ինքնատիպության:

Մարդը մոլորակը երբեւ բնակեցրած և բնակեցնող արարածներից մեկն է՝ կենդանիներին բնորոշ բազմաթիվ ընդհանուր իրողություններով: Բայց եթե ցանկանանք մարդուն միայն մշակութաբանական առումով վերաբերող տարրերակիչ հատկանիշները նկատի ունենալ, ապա պետք է առանձնացնենք նրանք, որոնք էականորեն կարևոր են ինց բանական մարդ տեսակի կենսաբանական ժամանակի մեջ ձևավորված լինելով:

Ահա դրանցից մի քանիսը:

## ՄԱՐԴԸ ՏԵՂԱՅՆԱՑՎԱԾ ԶԵ

Ցամաքային և ջրային նույնիսկ որոշ կենդանիների կենսակերպին ծանոթանալով՝ կարելի է անմիջապես նկատել, որ նրանցից յուրաքանչյուրին սովորաբար բնորոշ է տեղայնացվածությունը: Ասել է թե, նրանք իրենց տեսակը կարող են պահպանել, անհրաժեշտ կենսագործունեություն ծավալել որոշակի աշխարհագրական, բնակլիմայական, կենսոլորտային պայմաններում: Տեսակներից ամեն մեկը հրաշալիորեն հարմարված է իր կենսատարածքին: Դրանից դուրս նա կամ դատապարտված է ոչնչացման, կամ առնվազն կանգնում է գոյատևման խնդիրներ լուծելու առաջ: Ընդ որում, ընդհանուր սկզբունքը մնում է անխախտ. ի սկզբանե տրված են բնական պայմանները, իսկ կենդանիների տեսակներն անպայման իրենք են հարմարվում երկրագնդում առկա բազմազան պայմաններից որևէ մեկին կամ մի քանիսին: Նույնը վերաբերում է նաև բույսերին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կենդանիներն ու բույսերը կյանքի առաջին՝ ձևավորման շրջանում բնությունից օժտված են լինում այնպիսի կառուցվածքով ու կարողություններով, որ ժամանակի մեջ հարմարվում են բնական միջավայրին՝ դրա համար իրենց ֆիզիկական կարողություններից և կենսագործունեության ձևերից զարգացնելով և ուժեղացնելով հատկապես մի քանիսը՝ ելնելով բնական միջավայրի կամ իրենց տեղակայության առանձնահատկություններից: Ժամանակի ընթացքում նրանք ընդգծում և ուժեղացնում են իրենց այդ՝ տեսակային տարրերակիչ կարողությունները՝ ձևավորելով ավարտուն նկարագիր: Երկրի վրա բնական պայմանների յուրաքանչյուր փոփոխություն ըստ էության ստուգում է էվոլյուցիայի նրանց կարողությունների պահեստային մասի առկայությունը կամ բացակայությունը: Դրանից է, որ բնական պայմանների ակամա կամ մարդու միջամտությամբ տեղի ունեցած փոփոխությունը կարող է հասցնել տեսակների նույնիսկ զանգվածային ոչնչացման:

Եթե ընդհանրացնելու լինենք, ապա պիտի նկատի ունենանք, որ և բույսերի, և կենդանիների կենսագործունեության համար օրինաչափություն է ըստ բնական պայմանների տեղայնացվածությունը: Այդ օրինաչափության մեջ ակնհայտը հետևյալն է: Յուրաքանչյուր տեսակ (իրեն բնորոշ առանձնահատկություններով, կենսակերպով) բնական ինչ–ինչ պայմանների հետ անքակտելի ներդաշնակություն է: Այդպես նա իր չափով մասնակից է համերկրային (նաև համատիեզերական) մեծ, անկասելի նյութափոխանակություն–շրջապտույտին: Բայց մի կարևոր նախապայմանով. նա այդ շրջապտույտի ակտիվ մասնակիցն է որոշակի սահմանների մեջ, որն ինքը չի կարող խախտել: Արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ մարդու կողմից կենդանիների (նապաստակները՝ Ավստրալիայում, առնետները՝ աշխարհի շատ երկրներում և այլն) ու բույսերի տեղայնացվածության, բնական տարածվածության խախտումը հասցրել է բնապահպանական լուրջ աղետների:

Ակնհայտ է, որ կեցության տեղայնացվածության առումով միակ բացառությունը մարդն է: Իր կենսաբանական առանձնահատկություններով նա տեղայնացված չէ. առանց հագուստի, գործիքների, բնակարանի և այլնի չի կարող գոյատևել որևէ բնակլիմայական միջավայրում: Բայց և մարդու կենսաբանական առանձնահատկություններն այնպիսին են, որ նրան հնարավորություն են տալիս բնակելի դարձնելու երկրագնդի բոլոր լայնությունները: Ժամանակակից հնագիտությունը շատ թե քիչ փաստարկվածությամբ ցույց է տալիս աշխարհագրական այն տարածքները, որտեղ տեղի են ունեցել մարդ տեսակի ծագումն ու եկույուցիան: Բայց ժամանակի մեջ աստիճանաբար ճգրտվել ու որոշակիացել է նաև, որ մարդն ակնհայտորեն կաշկանդված չի եղել տեղայնացվածությամբ: Նա որքան հարմարվում է բնակլիմայական պայմաններին, նույնքան էլ բնակլիմայական պայմաններն է հարմարեցնում իրեն:

Իր այդ առանձնահատկության շնորհիվ մարդը վերածվել է մի տեսակ ունիվերսալ կենդանու, որի համար ժամանակի ըն-

թացքում երկրագնդի աշխարհագրական բոլոր լայնությունները դարձել են բնակելի, ներառվել նրա ամենօրյա կենսագործունեության, զանազան հետաքրքրությունների ու պահանջնունքների ոլորտներ: Դրա արդյունքում մարդը դարձել է մի արարած, որի համար, ըստ Էության, չկա բնական շրջապտույտին, նյութափոխանակությանը մասնակցության սահմանափակություն: Այսօր արդեն ակնհայտ է, որ ողջ Երկիր մոլորակի դեմք-դիմագիծը, այն բնակեցնողների ճակատագիրն անառարկելիորեն պայմանավորված են հենց մարդու կենսագործունեությամբ: Այդպես ձևավորվել է երկրագնդի նկարագիրը պայմանավորող Երկրորդ (առաջինը մարդուց անկախ բնական, տիեզերական ուժերն են) կարևորագույն գործոնը՝ մարդու ամենօրյա կենսագործունեությունը: Ժամանակակից մարդն արդեն Արեգակնային համակարգության այլ մոլորակների յուրացման վերաբերյալ ծրագրեր է մտմտում, գործնական քայլեր իրականացնում:

Եթե փորձենք ի մի բերել, ապա ակնհայտ կդառնա, որ մարդը բնության հերթակամ, զարմանալի ստեղծագործությունն է: Դարձարեցված չլինելով (իսկ որ ավելի ծիշտ է՝ տեղայնանալու բնական նախադրյալներով այլ արարածների հետ մրցակցային հմարավորություններ չունենալով) բնական պայմաններից որևէ մեկին՝ թույլ, անպաշտպան թվացող մարդը, ըստ Էության, միակ արարածն է, որը կարողանում է իր համար պիտանի կենսատարածքի վերածել ողջ Երկրագունորդ:

Եվ դա՝ շնորհիվ միայն իրեն բնորոշ կարողության՝ մշակութաստեղծ լինելու:

## ՄԱՐԴԸ ՄՇԱԿՈՒԹԱՍԵՂԾ Է

Որպես այլ արարածներից էական տարբերակիչ հատկանիշ՝ մարդու մասին խոսելիս առաջին հերթին սովորաբար մատնանշվում է նրա բանական լինելը: Իհարկե, մարդը բանական է, որի անառարկելի արտահայտությունն ամենուր և մշտապես

դրսնորվող յուրօրինակ կենսագործունեությունն է: Բայց եթե վստահենք համապատասխան բնագավառի մասնագետներին, նույնիսկ մեր առօրյա փորձին, ապա բանական վարքի ինչ-ինչ դրսնորումներ կամ գործունեության տարրեր (հաճախ նույնիսկ բավականին բարդ ու հետաքրքիր մտահղացմանք) բնորոշ են նաև այլ կենդանիների: Սակայն մարդու դեպքում բանական լինելն արտահայտվում է հարափոփոխ գաղափարների մտահղացումով, մշտապես կատարելագործվող առարկաների ստեղծումով: Դա գործընթաց է, որի վերջն առայժմ չի երևում: Այդ ընթացքի մեջ մի անգամ հաջողությամբ ձեռք բերվածն անշարժ նույնությամբ չէ, որ փոխանցվում է սերնդեսերունդ: Յուրաքանչյուր հաջորդ սերունդ (սակավաթիվ ժողովուրդների բացառությամբ) իր բաժինն է հավելում նախորդի ստեղծածին: Բանական մարդու գործունեության էական տարբերությունը սա է մնացած կենդանական աշխարհի բոլոր ներկայացուցիչներից: Թե չէ բոլոր կենդանիները, նույնիսկ բույսերն ինչ-որ բանով զբաղված են, ինչ-որ բան անում են կամ դառնում, նույնիսկ ստեղծում:

Ինչպես յուրաքանչյուր կենդանի արարածի, այնպես էլ մարդու մարմնի ձևն ու կառուցվածքն իդեալական են՝ տեսակին բնորոշ գլխավոր տարբերակից կանխորոշումն իրականացնելու համար: Տեղը չէ մանրամասնելու վերն ասվածը, սակայն նույնիսկ հպանցիկ դիտարկումնով էլ ակնհայտ է դառնում, որ ուղղահայաց կեցվածքը, հարյուրավոր գործողությունների համար ձեռքերի անմրցելի ձկունությունը, ուղեղի հոգեմտավոր անսահմանափակ հնարավորությունները և այլն նրան դարձել են մշակութաստեղծման համար աննախադեպ արարած: Հասկանալու համար, թե մշակութաստեղծման առումով մարդու կենսարանական ձևն ինչքան իդեալական է, անհրաժեշտ է միայն պատկերացնել, թե որքան անճարակ կլիներ նրան բնորոշ բանականությունն այլ կենդանու գանգում: Ի վերջո, մարդու մշակութաստեղծ լինելն արդյունք է բարենպաստ բնական նախադրյալների և իր կենսաբանական առանձնահատկությունների եզակի գուգադրության:

Իհարկե, դա չի նշանակում, թե տեսականորեն կամ գործնականում բնությունը սպառել է մշակութաստեղծ այլ էակի գոյության հնարավորությունը մարմնի այլ կառուցվածքով, այլ կարողություններով։ Միայն թե դրա համար թերևս անհրաժեշտ լինեն բնակլիմայական այլ պայմաններ, որոնք հնարավոր կդարձնեն կյանքի և կենսակերպի ուրիշ ձևեր ու տարրերակներ։

Սակայն վստահորեն կարելի է պնդել, որ մարդը եզակի է ոչ թե բանական լինելով, այլ բանականության այն տեսակով ու չափով, որի շնորհիվ միակ մշակութաստեղծն է բոլոր արարածների մեջ<sup>3</sup>։ Մշակութաստեղծ լինելը մարդու գոյության միակ հնարավոր կերպն է։ Յակառակի դեպքում մարդն անպայմանորեն դուրս է մնում տեսակի շրջանակներից, և կարելի է խոսել ընդամենը մարդանմանի մասին։ Բայց չի կարելի նաև ծայրահեղության մեջ ընկնել և միամտաբար կարծել, թե մարդու գործունեության մեջ ամեն ինչն է մշակութային բովանդակության։ Այն ամենը, ինչով մարդը նույնական է կենդանական աշխարհին, համարյա գուրկ է մշակութային բովանդակությունից։ Մշակութային է մարդու գործունեության այն շերտը, որով ինքն էականորեն տարրերվում է մնացած բոլոր կենդանիներից։ Դա նրա՝ հիմնականում գիտակցության մակարդակով գործունեությունն է, որին հաճախ մասնակից են դառնում (նույնիսկ անհմանալի ու անբացատրելի ձևերով) նաև անգիտակցականն ու ենթագիտակցականը։ Ուրեմն մարդու մշակութաստեղծմանը բնորոշ է հոգեմտավոր գործունեության առաջնայնությունը։

Մշակութաբանության մեջ ընդունված է մշակությը համակարգել նյութականի ու հոգևորի տարրերակունով։ Սկզբունքն այն է, թե մարդու ստեղծած արժեքն իր որ պահանջնունքի (նյութակա՞ն, թե՞ հոգևոր) բավարարման համար է։ Սակայն պիտի հաշվի առնել, որ նման տարրերակումը զգալիորեն պայմանական է հետևյալ պատճառով։ Արժեքների այդ երկու տեսակներն ել մինչ առարկայանալը նախապես ծնվում, մտովի ձևավորվում, իրագործվում են մարդու գիտակցության մեջ։ Պարզ ասած՝ քարից պարզագույն հատիչ պատրաստող նախնադարյան մարդ

լինի, ժամանակակից էլեկտրատեխնիկա հավաքող որակյալ վարպետ թե տաղանդավոր գիտնական ու արվեստագետ, չի կարող որևէ նյութական կամ հոգևոր արժեք ստեղծել, քանի դեռ դրա մանրակերտը, թեկուզ որոշ մոտավորությանք, չունի իր գիտակցության մեջ իբրև մտապատկեր: Մարդուն բնորոշ այս մտավոր գործունեության պարզագույն տարբերակն է մանկական կոնստրուկտորական այն խաղը, որի իմաստն է անհրաժեշտ դետալները ճիշտ համադրությամբ կցելը՝ կողմնորոշվելով նախապես տրված նկարով (մտապատկեր):

Մարդու գործունեության մեջ զգալի տեղ ունի էպիգոնությունը՝ բնության մեջ եղած գաղափարների և դրանց իրագործումների կրկնությունը՝ իհարկե շատ ավելի պարզունակ ձևերով<sup>4</sup>: Կյանքը, նրա շարունակականությունը կենսաբանական մակարդակի իրողություններ են, սակայն մարդու՝ անգամ բանականության (վերկենսաբանական) մակարդակում ստեղծածից շատ ավելի բարդ, կատարյալ, գեղեցիկ ու անկրկնելի: Ահա թե ինչու մարդու մշակութաստեղծ գործունեության ֆետիշացումը, չափ ու սահմանը կորցրած մեծարումը սխալ են և անընդունելի:

Սեկընդմիշտ պետք է նկատի ունենալ, որ մարդու ստեղծածը որքան էլ կատարյալ, ինքնօրինակ, միևնույնն է, չի կարող համադրվել կամ համեմատվել այն արարչությանն ու նրա արդյունքներին, ինչի մասնիկն ենք և մենք: Այդ իրողությունը բանաստեղծորեն ամփոփ ու դիպուկ ձևակերպել է Պ. Սևակը («Արվեստ», 1959 թ.).

*Քամին է երգում ինչ—որ եղանակ,  
Որ Բեթհովենին պատիվ կբերեր:*

*Սուր հորիզոնին աղոտ այգալուս՝  
Մի ռեմբրանդյան նորահայտ նկար:*

*Շեքսպիրին է կյանքը ձեռ առնում՝  
Իր ողբերգական դրամաներով...*

Իսկ մենք՝ են ու դու... արվեստ ենք խաղում  
Եվ ... մի այնպիսի՝ համոզվածությամբ,

Որ Սերվանտեսի հերոսն էլ չուներ...

Մեծ բանաստեղծի ասածին ձեզ համար հավելեմ միայն հետևյալը: Թեև նրա անառարկելի դիտարկումները վերաբերում են միայն արվեստի ոլորտին, սակայն միտքը հավասարապես ճիշտ է մարդու գործունեության բոլոր բնագավառների և ստացած արդյունքների համար:

Մարդու մշակութաստեղծ գործունեության մյուս կարևոր հատկանիշն օբյեկտիվ բովանդակությունից գուրկ լինելն է: Նա ստեղծում է միայն իրեն ձեռնտուի, միայն իր համար սկզբունքով, որն էականորեն տարբեր է այն մակրո (տիեզերք) և միկրո (երկրագունդ) աշխարհների արարման սկզբունքից, որոնց բաղադրիչն է նաև ինքը: Մինչդեռ տիեզերքն արարվել է կույր օրենքի սկզբունքով, որը հյուվեից մինչ գալակտիկաներ գործում է առանց վերապահության՝ բացառելով որևէ տեսակի շահի:

Եթե այլ կերպ ասելու լինենք, ապա կստացվի հետևյալը: Մարդն ամեն ինչ անում, ստեղծում է բնության մեջ առկա շնչավորների և անշունչների հաշվին և միայն հանուն իրեն, իր շահի, իր բարեկեցության: Մյուս արարածներն էլ են այդպես գոյատևում: Սակայն, ի տարբերություն մարդու, նրանց հնարավորությունները և պահանջնունքները սահմանափակված են ի սկզբանե: Մինչդեռ մարդու վարքագիծը կործանարար է և ինքնակործան: Մանավանդ մեր օրերում, երբ մարդու գործունեությունն արդեն հստակորեն դրսևորում է իր վտանգավոր եռթյունը:

Կարծես թե անվիճելի ծշմարտություն է, որ մեր կենսահամակարգն ավարտել է իր կենսաբանական էվոլյուցիան, որի արդյունքում մարդը դարձել է գերակայող տեսակ: Գիտությունը որքան կարողացել է ծշտել, երկիր մոլորակի գոյության ողջ ընթացքում մարդն աննախադեալ է նրանով, որ

**մշակութաստեղծ** է: Դրա էական հատկանիշը ոչ թե բնությանը հարմարվելն է, այլ այն վերափոխել – վերստեղծելով՝ իրեն հարմարեցնելը:

**Մշակութաստեղծման** գործընթացն էվոլյուցիայի թերևս յուրօրինակ շարունակությունն է: Սակայն եթե կենսարանական էվոլյուցիան դժվարնկատելի է, դանողաղընթաց, տեսակներ ծևավորող և բազմազանություն ապահովող, ապա, ի հակառություն դրա, մշակութային էվոլյուցիան (մանավանդ նոր ժամանակներում) հարահու է, որն անզապորեն վերափոխում, ոչնչացնում է բնության մեջ առկա կենդանի ու անկենդան տեսակները: Մարդու բանական ձեռքբերումները, ցավոք սրտի, գենք են դառնում իր նյութական պահանջմունքների և կենդանական բնագդների ձեռքին:

**Մարդն է այդ էվոլյուցիան իրականացնողը, ուրեմն և՝ հետևանքների պատասխանառուում:**

Ընդհանրապես մարդկությանը մշտապես զբաղեցրած հարցերից մեկն էլ իր ու երկիր մոլորակի ապագայի, այսպես ասած՝ ճակատագրի հարցն է: Դրան սերտորեն առնչվում է պատմական պրոցեսի ինանալիության արդեն գուտ գիտական խնդիրը: Սակայն այսին նկատի ունենալ, որ առ այսօր ինչ կա գիտական առօւնով շատ թե քիչ հավաստի, ճանաչելի ու բացատրելի, անցյալի մեջ է ու վերաբերում է անցյալին: Ոչ ոք չի կարող վստահորեն ասել, թե ինչ կստացվի մարդու հետագա մշակութաստեղծ գործունեությունից:

## ՄԱՐԴԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԱՐԱԾ Է

Ինչպես բազմաթիվ կենդանիների, մարդուն ևս բնորոշ է կենսապահովման գործառույթների իրականացումը խմբային կեցությամբ: Դա մի պարզ բան է նշանակում. այն, որ այդ կենսակերպով գոյատևող կենդանու առանձնյալի համար խմբից դուրս նույնիսկ ֆիզիկական գոյությունը համարյա դառնում է անհնար:

Բայց մի էական հանգամանքի մասին չպիտի մոռանալ: Խմբային կենսագործունեությամբ գոյատևող կենդանու առանձնյակը, բնական պայմաններում թեկուզ խմբից դուրս գոյատևելով, ժամանակի ընթացքում, համենայնդեպս, ձևավորում է իր տեսակին բնորոշ հմտությունները, կարողություններն ու կենսափորձը: Եթե այդ առանձնյակը նույնիսկ ձեռք էլ չբերի բանական գործունեություն հիշեցնող կարողությունների և իմացությունների միջոցով կուտակվող կենսափորձ ու հմտություն, ապա պակասողը չի կարող այնքան էական լինել, որ լրջորեն վտանգի նրա գոյությունը: Դա շնորհիվ այն բանի, որ մարդուց բացի՝ մյուս արարածների համար բնության կանխորոշած կենսաբանական մակարդակի կարողությունների շրջանակը լիարժեքորեն բավարար է տեսակի պահպաննան համար:

Մի բան, որը մարդ տեսակի համար բացառվում է: Եթե խմբից (մարդկային հասարակություն) դուրս մնացած մարդում<sup>6</sup> նույնիսկ հաջողվի էլ պահպանել ֆիզիկական գոյությունը (այդպիսի դեպքեր հայտնի են մարդկությանը), նա չի կարող ձեռք բերել իր տեսակին անհրաժեշտ կարողություններն ու հմտությունները: Դրա պատճառն այն է, որ մարդու կայացման համար որքան կարևոր է կենսաբանականը, նույնքան էլ՝ վերկենսաբանական մակարդակի (գիտակցական) գործունեությամբ ձեռք բերվող սոցիալական կազմակերպման փորձը, հոգևոր ու նյութական արժեքները, իմացությունը: Այդ ամենի համախումբը մշակույթն է, որն արարվում է, պահպանվում ու փոխանցվում խմբային գործունեությամբ:

Իրենց կեցության և կենսագործունեության բնույթով խմբային–սոցիալական են նաև շատ այլ կենդանիներ: Նրանց գոյությունն էլ երբեմն հանգում է փոփոխվող, անսպասելի հանգամանքների, որոնք նորովի վարքագիծ, նախկինում չեղած լուծումներ են պահանջում: Ընդհանրապես պիտի նկատի ունենալ, որ ցանկացած կենդանու (նաև մարդու) վարքագծային, կենսափորձային նոր ձեռքբերում, գյուտ երբեք խմբային չեն լինում: Ոչ ստանդարտ իրավիճակների առաջադրած խնդիրները միշտ լու-

ծուն են անհատները և ոչ թե ողջ հանրությունը: Յետո է նրանց ձեռքբերումը դառնում հանրային իմացություն կամ կարողություն: Թերևս ահա այս պահից էլ ընդգծված դրսևորվում է մարդ տեսակի տարբերությունը մյուս կենդանի արարածներից: Մարդու մշակութաստեղծ լինելը գիտակցական մակարդակի այնպիսի գործունեություն է, որի ողջ արդյունքն ու փորձը ժառանգորդման մեխանիզմի զանազան միջոցներով և ամրակայվում է, և փոխանցվում հաջորդ սերնդին: Մյուս կենդանիների փորձը խմբի և հաջորդ սերնդի համար չի դառնում առօրյա իմացություն, կենսափորձ: Կամ էլ եթե անգամ դառնում է, ապա այնքան դանդաղ ու առանց հետագա ծավալումների, որ չի կարող էականորեն փոխել նրանց կենսակերպը, շրջակա բնության վրա ներգործելու հնարավորությունները: Թերևս ամեն ինչ հենց այդ գիտակցական մակարդակի գործունեության և ժառանգորդման մեխանիզմի գաղտնախորհուրդ հանգամանջներով է պայմանավորված:

Խմբային կենսակերպ ունեցող կենդանիներից միայն մարդն է դարձել իր կեցությունն ապահովող ու կազմակերպող հարավորփոխ սոցիալական կառույցների ստեղծող: Դրանց միջոցով է տեղի ունենում մշակութային արժեքների ժառանգորդումը, հոտային–խմբային կենսակերպի փոխարկումը միայն մարդուն բնորոշ սոցիալականի<sup>7</sup>: Մարդու սոցիալականացումը կամ որոշակի մշակութային միջավայրի արդյունք լինելն էականորեն կարևոր նշանակություն ունի: *Մի շարք այլ գործուններից բացի (օրինակ՝ պատմաաշխարհագրական՝) մարդու, ժողովուրդների գենետիկ-կենսաբանական առանձնահատկությունները միգուցե որոշակի դեր ունեն ստեղծվող մշակույթի բովանդակությամ մեջ, սակայն մշակույթը երբեք չի կարող ժառանգորդվել գենետիկ-կենսաբանական ճանապարհով: Մշակույթը փոխանցվում է միայն սոցիալական իրականությամբ, որն իր կենսապահովմամբ մտահոգ յուրաքանչյուրին պարտադրում է տվյալ արժեհամակարգի կրողը և դրանով իսկ՝ պահպանողը լինել:* Այլ կերպ ասած՝ հնարավոր չէ տեսականորեն (Էլ չեն ասում՝ սերնդեսե-

րունդ) ապրել, օրինակ՝ ֆրանսիական մշակութային մքնոլորտում, բայց մնալ հայկական մշակույթի ներկայացուցիչ:

Մարդն է մշակույթ ստեղծում: Հետադարձ ներգործության սկզբունքով մարդուն սոցիալականացնում է մշակույթը, որին բնորոշ բնութագրերն ու բաղկացուցիչները հաճախ հազարամյակների ժամապարհ են անցել: Գիտակցի թե ոչ, միևնույն է, ինչ-որ հասարակության մեջ իր գոյության համար մարդը պետք է անպայման սոցիալականանա՝ դառնալով այդ հասարակությանը բնորոշ մշակութային արժեքների, կենսակերպի առանձնահատկությունների գոնե էական մասի կրողը: Սա, կարծում եմ, անվիճելի ճշմարտություն է, մանավանդ եթե նկատի ունենանք, որ մարդու սոցիալականացումն սկսվում է ծնված օրից և ավարտվում այս աշխարհը թողնելով: Սա հաշվի առնելով՝ դժվար չէ կրահել, որ անգամ գիտնականի մակարդակով այլ մշակույթի լավ իմացությունը, նույնիսկ որոշ տարրերի ընդօրինակումն իբրև էկզոտիկա, մի բան է, և միանգամայն այլ բան է դրա սոցիալական միջավայրի ներկայացուցիչ լինելը: Վերջինն ամենօրյա կեցությամբ ու մտածողությամբ նորոգվող, շարունակվող կենսակերպն է:

Ասվածը գործնական կյանքի օրինակով ցույց տալու համար կարելի է նկատի ունենալ թեկուզ այսպիսի շատ պարզ տարրերակներ: Եգիպտագետ արաք գիտնական ինչքան էլ լավ իմանա Եգիպտական մշակույթը, իր գիտակցական ողջ կյանքն անցկացնի դրա ուսումնասիրության, ճանաչման մեջ, նախանձելիորեն հմուտ լինի, միևնույն է, երբեք չի դառնա դրա կրողը, առավել ևս՝ գործնական-ամենօրյա կյանքում շարունակականությունն ապահովողը: Այդ արաք գիտնականը կարող է նույնիսկ հարստացնել արաբական մշակույթը Եգիպտականի տարրերով, բայց միշտ մնալու է արաբականի կրող ու շարունակող (որքան էլ տարօրինակ թվա, այո՛, անգամ իր Եգիպտագիտական վաստակով):

Իսկ եթե հարցը փորձենք դիտարկել հենց մեր՝ հայերիս արդի կենսական կարևորության խնդիրների առումով, ապա կա-

րելի է նկատի ունենալ այս օրինակը: Ինձ միշտ զարմացրել է միամիտ ինքնավստահությունը կամ չիմացությունը Դայաստանից հեռացող այն հայերի, ովքեր համոզված են, որ կարող են օտար մշակութային միջավայրում հայ մնալ<sup>8</sup>: Բոլորովին էլ պետք չէ մասնագետ լինել՝ հասկանալու համար, որ մի եկեղեցու շուրջը համախմբվելով, մի թերթ տպագրելով, հեռուստաժամերով ու կիրակնօրյա դպրոց–հավաքատեղիներով օտարության մեջ հնարավոր չէ հայ մնալ: Դա սին հույս է, բարոյահոգեբանական պատրանք, որովհետև իրականում տեղի է ունենում հակառակը: Ուզեն թե չուզեն՝ իրենց հայկականությամբ նրանք հարստացնում, բազմազանություն ու բարմացնող կենսունակություն են հավելում օտար մշակույթին՝ դառնալով այդ մշակույթի կրողն ու շարունակողը:

## ՄՇԱԿՈՒՅԹ

Մշակույթը նույնքան հին է, որքան մարդ տեսակի (*homo sapiens*) գոյությունը երկրագնդի վրա: Մարդը և մշակույթն իրարից զատ նույնքան անպատճերացնելի են, իրարից նույնքան անբաժան, որքան յուրաքանչյուր արարածի ինքնատիպությունը բնութագրող, տեսակի գոյությունն ու կենսագործունեությունն իրենով պայմանավորող ամենակարևոր հատկանիշը: Ըստ Էրթյան, մշակույթը շրջակա աշխարհի հետ մարդու հարաբերության արդյունքն է, իսկ մշակութաստեղծումը՝ այդ աշխարհի հետ մարդու հարաբերվելու ամենաակտիվ ձևը: *Մշակութաստեղծ լինելը* մարդ տեսակի ամենաբնորոշ հատկանիշն է: Գիտությանը հայտնի չէ երկրագնդի վրա երբեմ գոյատևած այլ մշակութաստեղծ էակ: Յետևաբար, մշակութաստեղծ լինելը կարելի է նշել իբրև մարդ արարածի ամենակարևոր տարրերակիչ հատկանիշ: Մարդը մշակութաստեղծ գործունեությունը կամ տեսակային հեղակի առանձնահատկությունն իրականացնում է բնության հաշվին, բնությունից վերցվող նյութերի միջոցով: Մարդը մշա-

**Կութաստեղծ է ոչ միայն բնությունից իր ստացած կենսաբանական կարողությունների, այլև բնական այն միջավայրի շնորհիվ, որի շրջապատում հայտնվել, աչք է բացել:**

Թվում է, թե այսքան պարզ, հասկանալի և միանշանակ կենսական ճշնարտության որոշակիացումից հետո դժվար չի լինի սահմանել, թե ինչ է մշակույթը: Ի վերջո դա այն ամենն է, ինչը բնության մեջ չկա, բնությունը չի տվել, և ստեղծում է մարդ՝ ապահովելու, հնարավոր դարձնելու համար իր տեսակի գոյությունն ու կենսագործումներյունը: Դա հոգևոր և նյութական արժեքների, հասարակության սոցիալական կազմակերպման ու կառավարման ձևերի ողջ համախումբն է: Մշակույթը խնբային գիտակցության և կենսագործումներյան (փորձի) արդյունք է: Կարելի է մշակույթը բնութագրել նաև իբրև արժեքների համախումբ, որն արդյունք է մարդու կենսափորձի, հասունացած և գիտակցված պահանջմունքների: Եվ այլն, և այլն...

Այս ամենը ցույց է տալիս մի պարզ բան. իր ընդգրկման հարստությունից ելնելով՝ հեշտ է տարբեր տեսանկյուններից նկարագրել, թե ինչ է մշակույթը, բայց բավական դժվար է այն սահմանելը հենց նույն այդ հարստության, ընդգրկման բազմազանության պատճառով: Դրա համար էլ բավական հարուստ, նույնիսկ բազմալեզու մշակութաբանական գրականության մեջ դժվար է գտնել տարբեր հեղինակների մի քանի գրքեր, որոնցում մշակույթի սահմանումները համընկնեն, լինեն փոխադարձաբար ընդունելի<sup>9</sup>: Դամենայնդեպս, կարծում եմ՝ մշակույթը կարելի է սահմանել իբրև մարդու ստեղծագործական կարողությունների իրականացման արդյունքների ամբողջություն: Դժվար չէ այս սահմանումից ելնելով՝ տեսնել մշակութային արժեքների համախմբի այն տարբերությունը, որն առկա է թե՛ անհատների, թե՛ ազգերի պարագայում: Եթե մի քիչ ավելի կենցաղայնացմենք գիտական ճշնարտությունը, ապա կունենանք հետևյալ գործնական, կենսափորձային ճշնարտությունը. նայելով տվյալ անհատի, ազգի համար պահանջարկ ունեցող, նաև ստեղծված մշա-

**կութային արժեքներին՝ կարելի է անսխալ պատկերացում կազմել նրանց նկարագրի վերաբերյալ:**

Մարդն է մշակույթ ստեղծում: Ինչպիսին նարդն է, ազգը, այնպիսին էլ՝ իր ստեղծած մշակույթը: Բայց դա միակողմանի, անհետևանք գործընթաց չէ: Մշակույթը զարմանալի հիշողություն ունի, կարելի է ասել՝ նույնիսկ հիշաչար է: Դա պետք է հասկանալ հետևյալ իմաստով: Մշակույթն իր ստեղծողի համար ինքնարտահայտման միջոց է: Այդ գործընթացն իմաստավորվում է նաև ստեղծողի վերստեղծումով: **Ցանկացած մշակույթ, մշակութային մակրո-, անգամ միկրոմիջավայր վերարտադրվում է՝ վերստեղծելով իր ստեղծողին՝ մարդուն:** Վերստեղծելով ոչ թե ֆիզիկապես, գենետիկ կարողություններով ու առանձնահատկություններով, այլ որպես մշակութաստեղծ արարած: Դրա համար էլ հասարակական կյանքում տնտեսական, քաղաքական և այլ կարգի գործնական բնագավառներում փոփոխությունները հնարավոր է իրականացնել անգամ օրենքի ուժով, պարտադրանքով կամ փաստի առաջ կանգնեցնելով: Սակայն հասարակական գիտակցությունը հեղափոխական փոփոխությունների չի ենթարկվում, զգալի ժամանակ է պահանջում՝ որակապես թարմանալու համար և, սովորաբար, իրականանում է սերնդափոխությամբ: Մշակույթ ստեղծողը կամա թե ակամա ծևավորում է արժեքների մի համակարգ, որի առկայությամբ է կյանք մտնող սերունդն իր նկարագիրը ծևավորում: Դա նորա անխուսափելի, ճակատագրորեն կանխորոշված ժառանգությունն է, որի դերը երբեք չի նվազում նույնիսկ այն դեպքում, երբ նոր սերունդը ժխտում է այդ ժառանգությունը:

Ողջ ասվածը կարելի է համառոտել այսպես. **մշակույթն անխուսափելիորեն վերստեղծում է իր ստեղծողին՝ մարդուն:** Ահա թե որտեղից է զայիս ավագ սերնդի պատասխանատվությունն իրեն փոխարինողի առաջ՝ անկախ այն բանից՝ նորերն ընդունո՞ւմ են, թե՝ ժխտում հների ստեղծած, հների համար կենսականորեն կարևոր արժեքները: Նետևաբար, երիտասարդներից դժգոհելուց առաջ (իմիջիայլոց, ավագներին բնորոշ է բարձրա-

ձայն դժգոհելը, երիտասարդներին՝ նրանց լռությամբ արհամարհելը կամ անտեսելը) ավագները հանգիստ, առանց իրարանցման, լավ կլինի՝ ինքնամփոփ լռության մեջ փորձեն հաշիվ տալ իրենց ու ծշտեն իրենց ստեղծած մշակույթի դերը նրանց նկարագրի ծևավորման մեջ: Չէ՞ որ յուրաքանչյուր մշակույթ ստեղծում է ինչ-որ կենսակերպ, ամենօրյա, գործնական կյանքի ու աշխարհընկալման մի փորձառություն, որն ամենակարևորն է մարդկային նկարագրի ծևավորման մեջ:

Մշակույթի համակարգային ուսումնասիրությամբ զբաղվում է Նոր Ժամանակների ամենաերևելի գիտակարգերից մեկը՝ մշակութաբանությունը: Այն հասարակական գիտություն է և, ըստ Էության, մարդագիտություն: Գիտություն, որը մշակութային փաստերի (արտեֆակտ) վերլուծությամբ բացահայտում է դրանք ստեղծողի էությունը՝ ամենօրյա կեցության իրողություններից մինչ աշխարհընկալում, նրա տեղն ու դերը մեր մոլորակում:

Վերն ասվածից չպիտի եզրակացնել, թե մշակութաբանությունը գիտություն է, որն զբաղվում է միայն անցյալում ստեղծվածի ուսումնասիրությամբ: Իրականում այն իր Ժամանակի հիմնախնդիրներից բոլորովին էլ մեկուսացած չէ և նույնիսկ արդիական քաղաքական բովանդակություն ունի: Պատահական չէ մշակութաբանական ուսումնասիրությունների և տեսությունների ծավալումը մանավանդ մեր Ժամանակներում, եթե որոշ ուժեր ակնհայտութեն շահագործված են աշխարհն ըստ իրենց պատկերացումների գլոբալացնելու հարցում: Դա վաղուց արդեն շատ ակնհայտ է: Նպատակը նույնպես տեսանելի է՝ աշխարհը դարձնել իրենց համար կանխատեսելի ու կառավարելի:

Արդեն իսկ պարզ է, թե ինչպիսի բովանդակությամբ մշակութաբանական միտք ու աշխարհայացք պետք է զարգացնեն ավելի բույլ, իրենց ինքնությունը պահպանել ցանկացող փոքր ժողովուրդները:

Սա ընդամենը մի օրինակ է՝ համոզվելու համար, որ աշխարհը կառավարվում է ոչ թե բնական ու ծզգրիտ գիտությունների ձեռքբերումներով, այլ հասարակական գիտությունների

առաջադրած կոնցեպտներով։ Իսկ բոլոր գիտատեխնիկական ձեռքբերումները, հաճախ նաև արվեստի ստեղծագործությունները, կրոնական գաղափարները և այլն ընդամենը միջոցներ են, որոնք գործադրվում են աշխարհայացքային-գաղափարախոսական գիտությունների միջոցով նախանշված ծրագրերի իրականացման համար։

Մշակութաբանությանը վերաբերող հետաքրքիր այս նյութը ծավալելը թողնեն ավելի հարմար պահի։ Իսկ գիրքը շարադրելու իմ նպատակից ելնելով՝ թեման ամփոփեն հետևյալ նկատառումով։ **մշակույթի վերստեղծող գործառույթում չափազանց կարևոր է խոսքի (թե՛քանավոր, թե՛գրավոր) նշանակությունը։**

Այս իրողությանն ավելի մանրամասն կանդրադառնամ գրքի հաջորդ գլուխներում։

## ՆԱԽՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

Մշակութաբանության մեջ ընդունված է մարդու մշակութաստեղծ գործունեության սկիզբը, առաջին շրջանը բնորոշել նախնական, նախապատմական, նախնադարյան, հնադարյան, արխաիկ (հուն.), նույնիսկ պրիմիտիվ (պարզունակ) հասկացություններով։ Ըստ հնագետների՝ այն սկսվել է մեզնից մոտավորապես հիսուն–վարսուն հազար տարի առաջ։

Վերևում բերված բոլոր հասկացությունների բովանդակության մեջ ակնհայտ է ժամանակակից մարդու վերապահ վերաբերմունքը (նախնական, նախնադարյան, պրիմիտիվ և այլն) իր մշակութաստեղծ գործունեության առաջին շրջանի նկատմամբ։ Միանգամից նշեմ, որ դա պայմանական և խիստ վիճարկելի գնահատական է, ու չպետք է լուրջ ընդունել։ Այլապես կարելի է ներկայի բարձունքից հեշտությամբ թերագնահատել մշակույթի (մանավանդ գիտատեխնիկական) ցանկացած նախորդ շրջափուլի ձեռքբերումները։ Մինչդեռ երբեք չպիտի անտեսել, որ մշակույթի կենսունակությունը և պոտենցիալ կարողությունները

պայմանավորված են ժառանգորդմանը ու շարունակականությամբ:

Ժամանակների մեջ անընդհատ փոխվել են մարդու նշակութային մշակավայրը, հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, բայց ոչ երբեք բնատուր կարողությունները, տեսակային առանձնահատկությունները: Այս թե ինչու այսօրվա մարդու համար նախնական մշակույթի ուսումնասիրությունն էլ նույնքան հրատապ է, որքան ժամանակակիցը: Ինչպես ամեն մի սկիզբ, այն իր մեջ կրում է արդիականի նախահիմքերը, ծագման արմատները: Թեև այս թեմայի նպատակից դուրս է ասվածը մանրամասնելը, բայց նույնիսկ առանց մշակութաբանների, հնագետների, հոգեբանների և ազգագրագետների օգնության էլ առօրյա փորձով դժվար չէ համոզվելը, որ մանավանդ մարդու հոգեկանի, ենթագիտակցականի բազմաթիվ դրսևորումներ այսօր էլ պահպանում են նախնական մշակույթին բնորոշ իրողություններ:

Մասնագիտական գրականության մեջ ընդունված է նախնական մշակույթը բաժանել մի քանի ժամանակաշրջանների: Դրա հիմքը հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերված նյութերն են, որոնք, հասկանալի պատճառներով լիարժեք չլինելով էլ, համեմայնեպս, այդաիսի պարբերացումների հիմքեր տալիս են: Մոտավորապես մինչև մեր թվականության առաջին հազարամյակը հասած և տասնյակ հազարավոր տարիներ գոյատևած մշակութային այդ ժամանակաշրջանը բաժանվում է մի քանի էտապների: Գիտության մեջ ավելի տարածված է ա) քարի դար, բ) պղնձի դար, գ) բրոնզի դար, դ) երկաթի դար պարբերացումը: Կան նաև այլ պարբերացումներ՝ ա) վայրենության, բ) բարբարոսության, գ) քաղաքակրթության (Մորգան) կամ ա) հոտային, բ) տոհմային համայնքի, գ) տոհմային համայնքի քայլայման էտապներ (Էնգելս) և այլն: Պարբերացումներից յուրաքանչյուրի հիմքում ընկած է մարդկային հասարակության կենսագործունեության որոշակի առանձնահատկությունը՝ էական նշանակություն ունեցած գործուներից մեկը, որով էլ բնութագրվել է տվյալ ժամանակաշրջանը: Հասկանալի է, որ դրանցում

ակնհայտ է պայմանականությունը: Սակայն այդ բնորոշումների մեջ արձանագրվել է մարդկության մշակութաստեղծ գործունեության էական հատկանիշը՝ առաջընթացը (պրոգրես) ընթացքը պարզից, աղքատիկից դեպի բարդը, բազմազանը, կենսագործունեության ծավալների ընդարձակումը:

Ըստ առկա հնագիտական նյութի՝ հնարավոր է որոշակիորեն թվարկել նախնական մշակույթում էական ծեռքբերումները և իրողությունները: Իր կենսապահովման համար սկզբնական և հիմնական գրադարձունքներին զուգահեռ՝ մարդն աստիճանաբար ստեղծել է առաջին աշխատանքային գործիքներն ու գենքերը փայտից, քարից, ուկորից, մետաղներից, քարանձավներից հետո բնակվել իր մտահղացած ու կառուցած կացարաններում և այլն:

Մարդու մտածողությանը բնորոշ վերացարկման որակն այս շրջանում սկսում է ակտիվորեն դրսելու իր կարողությունները ծիսապաշտամունքային արարողությունների, քարանձավային նկարչության, ստեղծագործական գործունեության այլ բնագավառներում՝ նախնական դրսելումների ձևով: Մանավանդ մետաղների մշակումը և անասնապահության ու հողագործության տարբերակվածությունը նպաստում են նաև արհեստագործության տարանջատված (մասնագիտացված) զարգացմանը: Այս և մշակութային չթվարկված բազմաթիվ այլ իրողությունների հիմքի վրա աստիճանաբար ձևավորվում ու ծավալվում են մարդու նաև ինքնաճանաչողությունն ու աշխարհաճանաչողությունը, գիտագործնական իմացությունն ու հմտությունները:

Մարդու կեցության մեջ մշակույթի օրավոր մեծացող ծավալին ու նշանակությանը համապատասխան՝ փոխվում են նաև ամուսնաշնորհական հարաբերությունների, սոցիալական կյանքի կազմակերպման ձևերը, մակարդակները:

Նախնական մշակույթում հոգևոր բարձրագույն արժեքն առասպելն է: Դա է երկարուժիգ հազարամյակներ տևած մշակութային մի շրջափուլի հանրագիտարանը, որում գեղարվեստա-

կան խոսքի բարձրագույն մակարդակով ի մի են բերված մարդու կենսափորձային ճշմարտությունները, աշխարհայացքը, աշխարհաճանաչողությունը, շրջակա աշխարհի և իր գոյության իմաստի ըմբռնումը, կրոնական պատկերացումները: Այն սինկրետիկ հոգևոր արժեք է, որը միավորում, ամբողջական մի ձևի մեջ է ներկայացնում նախնական մշակույթի շրջանի մարդու մշակութաստեղծ գործունեության բազմազանությունը, նաև ի ցույց դնում տվյալ ժողովրդի կողեկտիվ ստեղծագործական կարողությունների գարնանալի, բացարիկ հնարավորությունները:

Ըստ Էության, նախնական մշակույթը հայտածել է առօրյա, գիտական, ստեղծագործական գործունեության հնարավոր ձևերի բազմազանության այն սաղմերը, որոնք հետագայում դառնալու էին մարդու մասնագիտացմանք տարբերակված գործունեության ոլորտներ: Նրա բոլոր դրսևորումներում չափազանց կարևոր էին մարդու կենսափորձը, օր օրի ավելացող մշակութային ձեռքբերումները, որոնցում միշտ միավորված, անբաժան են հանդես եկել մարդու մտքի և գործնական կարողությունների հնարավորությունները: Դա տևական մի գործընթաց էր, որում մշակույթն ակտիվորեն նպաստում էր մարդու և մտավոր, և ֆիզիկական կարողությունների գարգացմանը, մշակութաստեղծ գործունեության ծավալմանը:

Այս ամենն իր տեղում թվարկելով ու նկարագրելով հանդերձ, սակայն, ուզում եմ առանձնապես կարևորել հետևյալը: Նախնական մշակույթը, իր նախնականությամբ, թվայցալ պարզությամբ, «մարդկության մանկության» (Մարքս) ժամանակաշրջանը ներկայացնելով հանդերձ, մարդու համար աշխարհում իր տեսակի ինքնահաստատման էտապն էր, որին բնորոշ են, թող տարօրինակ չինչի, հանճարեղ գյուտերը: Թերևս այս շրջանում են ծշգրտվում ու հայտնաբերվում մարդու բոլոր այն պահանջմունքներն ու գաղափարները, որոնց բավարարմամբ և տեսական ու գործնական զարգացմամբ է գրադարձ մարդկությունն առ այսօր: Եթե նախնական մշակույթում նույնիսկ մի կողմ թողնենք գիտատեսական զարմանալի և առ այսօր անբացատրելի

**Կռահումները մարդու բնույթի, շրջակա բնության, նյութի, տիեզերքի կառուցվածքի և կազմության, կենդանի նյութի ծագման և այլնի վերաբերյալ, ապա անգամ գործնական կյանքի օրինակով կարող ենք համոզվել, որ այդ թվացյալ պարզունակի մեջ առկա են մեծագույն ծեռքբերումներ: Այսպես, կարծում եմ՝ բաց երկնքի տակ կամ քարանձավում բնակվող մարդու՝ բնակարան կառուցելու միտք հղանալը շատ ավելի հանճարեղ գյուտ է, քան հետագա ճարտարապետաշինարարական այն հրաշքները, որոնք ընդամենը դրա կատարելագործումն են: Նույնը կարելի է ասել նիզակից, նետ-աղեղից հետո հրող ուժի օգտագործմամբ հրագենին անցման, լծակի, ունելիի միջոցով աշխատանքի արդյունավետության ու գործադրված ուժի ավելացման գաղափարը ժամանակակից տեխնիկայով իրականացնելու և այլնի վերաբերյալ: Նման դիտարկումները կարելի է անվերջ շարունակել:**

Նախնական մշակույթը պարզունակ չէ, ինչպես որ մեզ կարող է թվալ: Եթե սերունդները գրկվեին այդ փորձից, կդառնային շատ անճարակ և ստիպված կլինեին կրկնել նախնիների անցած ճանապարհը: Իրականում հաջորդ սերունդները նրանցից ոչ թե ավելի խելոք ու կարող էին, այլ իրենց թիկունքում ունենալ այն հսկայական փորձն ու իմացությունը, որը կուտակվել էր իրենցից առաջ: **Մշակութաստեղծ մարդու առաջին սերունդներն այնքան խելոք են եղել, որ լրջորեն հաջողել են հիմնադիր, հեռանկար կամխորշող քայլերը:**

Ըստ Էռլեյան, նախնական մշակույթը մարդկության նախնական, բայց չափազանց կարևոր փորձն է: Այն մարդու համար եղավ իրեն անմիջապես շրջապատող աշխարհում իր ինքնահաստատման և գործնական հնարավորությունների հայտնագործման, դրանց գործադրման ժամանակաշրջան: Դրան հետո հաջորդելու էր իր կենսափորձի և ճամաչողության փիլիսոփայական իմաստափորման կարևորագույն էտապը (Զրադաշտ, Բուդդա, Կոնֆուցիուս, Լաո-ցզի, հույն անտիկ փիլիսոփաներ): Դա մանավանդ հնագույն ժողովուրդների հետադարձ հայացքն էր իր անցած պատմական ուղուն, ծևավորած կենսափորձի ընդ-

հանրացված իմաստավորումը, գալիքի համար ուղենիշ գաղափարների որոշակիացումը: Պատահական չէ, որ Կ. Յասպերսն այդ ժամանակաշրջանը (թ. ա. մոտ 6-5-րդ դդ.) անվանում է պատմության առանցքային ժամանակ („Смысл и назначение истории“)<sup>10</sup>:

Մարդու մշակութաստեղծ գործունեության մեջ շրջադարձային եղավ նստակյաց կենսակերպին անցումը: Այս փաստը մանրամասնելը մեկ այլ՝ համապատասխան տեղի թողնելով՝ միայն նշեմ, որ ժամանակակից քաղաքակրթությունը, այսպես թե այնպես, դրա արդյունքն է: *Սակայն ինչքան էլ կարևորենք նախնական մշակույթին բնորոշ իրողությունները, միևնույնն է, նրանցից ոչ մեկը չի կարող համադրվել ամենակարևորին՝ մարդկային լեզվին:* Ընդհանրապես բոլոր ժամանակներում մարդու մշակութաստեղծ գործունեության մեծագույն ծեռքբերումը եղել է, կառ մնալու է լեզուն:

*Ըստ էության, մեզ համար նախնականի և պարզունակի համարումով ներկայացող մշակույթին բնորոշ են եղել հաճարեղ մտահղացումներ ու ծեռքբերումներ, որոնք առ այսօր էլ ուժի մեջ են: Այդ թվում նաև ամենակարևորը՝ լեզուն:*

## ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔ

Լեզվի մեջ շնչավորվում է ամբողջ ժողովուրդը... Լեզուն ամենակենսունակ, ամենաառատ և ամուր կապն է, որը ժողովրդի՝ իրենց դարմ ապրած, ապրող և ապագա սերունդներին միավորում է մի մեծ, պատմական, կենդանի ամբողջության մեջ:

Խլեք ժողովրդից ամեն ինչ, նա ամեն բան կարող է վերադարձնել. սակայն խլեք լեզուն, և նա այլևս լեզու չի ստեղծի, կարող է նույնիսկ նոր հայրենիք ստեղծել, բայց լեզու՝ երբեք. մեռավ լեզուն ժողովրդի շուրթերում՝ կմեռնի նաև ժողովուրդը:

Կ. Ուշինսկի

## ԼԵԶՈՒՆ

Արդեն ասվեց, որ լեզուն ոչ միայն նախնական մշակույթի ամենանշանակալի, այլև ընդհանրապես մարդու մշակութաստեղծ գործունեության մեծագույն և անփոխարինելի ձեռքբերումն է: Դրանում կարելի է համոզվել նրա մշակութային նշանակության իմացությամբ:

Բայց որպես առաջին քայլ՝ կառաջարկեի ծանոթանալ լեզու հասկացության լեզվաբանական բացատրությանը: Դա ճիշտ ու նպատակահարմար է այնքանով, որքանով որ հասկացության ընդգրկումը, լեզվին բնորոշ հատկանիշները տարբեր մոտեցումներով ու տեսանկյուններով առաջին հերթին և ամենից շատ ուսումնասիրում է հենց լեզվաբանությունը<sup>11</sup>: Պակաս կարևոր չեն լեզվի ծագման, ժամանակի մեջ նրա ընթացքի տարբերակների, հասարակական դերի ու գործառույթների վերաբերյալ լեզվաբանության կուտակած իմացությունը:

Լեզուն միայն մարդ տեսակին բնորոշ մշակութային իրողություն է: Յուրաքանչյուրիս նույնիսկ առօրյա փորձը բավական է՝ գլխի ընկնելու համար, որ լեզուն մարդուն ի ծնե տրված առանձնահատկություն, կենսաբանական կամ գենետիկ ժառանգության բաղադրիչ չէ: Լեզուն ծագում, ձևավորվում, պահպանվում ու ժառանգվում է որպես որոշակի մշակութային համակարգի բաղադրիչ:

Մարդը բնությունից ստացել է լեզու ստեղծելու, պահպանելու և զարգացնելու կենսաբանական կարողություն, որը եզակի ունակություն է՝ ի տարբերություն մյուս բոլոր արարածների: Մարդկության փորձը լեզվին վերաբերող մի կարևոր ճշգրտում էլ ունի. միայնակ մարդը երբեք չի կարողացել և չի էլ կարողանալ լեզու ստեղծել: Լեզուն մարդու համար օրինաչափ կենսակերպի՝ խնբային–հասարակական կեցության հանգամանքներում իրականացվող մշակութաստեղծ գործունեության արդյունքներից է:

Բայց ոչ միայն այդքանը: Մարդու հասարակական կեցությունը և մշակութաստեղծ գործունեությունն ինչ—որ էտապից սկսած արդեն անհնար կդառնար, եթե չձևավորվեր լեզուն: Այն լավագույն միջոցն էր մտավոր գործունեության, մտքի ձևավորման, միջնարդկային հաղորդակցման, փորձի փոխանակման ու կուտակման: Ուրեմն՝ լեզուն մարդկային հասարակության օրինաչափ զարգացման անհրաժեշտ, անխուսափելի բաղկացուցիչներից է: Այժմ կյանք մտնող յուրաքանչյուր նոր սերունդ ստիպված չէ իր համար լեզու ստեղծել: Նա լեզուն ստանում է պատրաստի վիճակում՝ իբրև մշակութային իրողություն և ժառանգություն: Սակայն նրա առաջ էլ ազգային կյանքի ու միջազգային հարաբերությունների հանգամանքներն այլ խնդիրներ են դնում՝ լեզվի պահպանում, հարստացում և այլն, որոնց լուծունը տվյալ լեզուն կրող հանրության գոյության կարևորագույն նախադրյալներից է: Լեզուն ազգային կենսափորձի, մտածողության, աշխարհատեսության կերպի շտեմարանն է, ազգապահպան և ազգատարբերակիչ գլխավոր գործոններից մեկը: Ահա թե ինչու է այն հարուստ և հետաքրքիր նյութ գիտական տարբեր տեսանկյուններով ուսումնասիրելու համար: Մասնավորաբար, բառային փոխառությունների ուսումնասիրությունը կարող է տարբեր ժողովուրդների միջնշակութային կապերի հնագույն, որևէ այլ ձևով չարձանագրված իրողություններ բացահայտել:

**Այս ամենից ելմելով՝ կարելի է վստահորեն պնդել, որ ամեկախ իր գենետիկ ծագումից (ժնողների ազգությունը՝ յուրաքանչյուր անհատ ազգային իր նկարագիրը սովորաբար կայացնում է յուրացրած առաջին (հիմնական, մայրենիի արժեք ունեցող) լեզվի միջոցով ձևավորած լեզվամտածողությամբ, տվյալ լեզուն կրող հանրության ստեղծած մշակութային փորձով ու ժառանգությամբ:**

Սա նշանակում է, որ լեզուն մշակութային, ձեռքբերովի իրողություն է: Մարդու ի սկզբանե ասուն չի եղել այնպես, ինչպես որ մենք սովոր ենք նրան ճանաչել: Լեզուն, ինչպես մշակութային ցանկացած իրողություն, անցել է ծագման և ձևավորման ժամա-

նակաշրջան: Այն անպայման ընթացել է պարզից դեպի բարդը, քերականական իրողությունների բազմազանությունից դեպի միօրինակություն՝ մինչև լեզվական օրինաչափությունների հաստատում: Լեզուն ծագել է անվանողական միավորների (հնչյուն, բառ, բառակապակցություն) ձևավորումից՝ հասնելով հաղորդակցական ավելի մեծ միավորների (նախադասություն, պարբերություն, տեքստ) կազմավորմանը: Նույնը կարելի է դիտարկել (հանգամանքների, իհարկե, որոշ պայմանականությամբ) նաև խոսել սովորող յուրաքանչյուր երեխայի օրինակով: Թեև երեխան ընդամենը յուրացնում է արդեն վաղուց ձևավորված, իրեն պատրաստի մատուցվող լեզուն, սակայն դա էլ սկսվում է վերոնշյալ նվազագույն լեզվական միավորների (հնչյուն, բառ և այլն) յուրացումից: Ինչիայլոց, հասուն տարիքում անհամենատ ավելի դժվարությամբ հաղթահարվող այդ գործունեությունը, որը երեխայի համար հանճարենորեն ինքնարուիս է, առանց ճիգ ու ջանքի, հաճախ ուղեկցվում է նաև բառեր հորինելով, առարկաներն ու երևույթներն ինքնահնար արտահայտություններով անվանելով:

Լեզվի վերաբերյալ մեր մշակութաբանական գիտելիքում անպայման պեսոք է նկատի ունենալ նաև հետևյալը: Ցանկացած լեզու ձևավորվում է պատմականորեն և ուղղակիորեն արտացոլում է այն կրող հանրության պատմական ճակատագիրը, կենսապայմանների բնակլիմայական առանձնահատկությունները, մշակութաստեղծ գործունեության հանգամանքների ողջ բազմազանությունը: Յուրաքանչյուր լեզու բացարձակ նույնական է իր կրող հանրության մշակութաստեղծ գործունեության ակտիվությանը: Միջազգային ճանաչման են հասնում միայն այն լեզուները, որոնց կրող ժողովուրդները համարժեք նշանակության մշակույթ են ստեղծում: Լեզուն մշակույթ անվանվող կենդանի օրգանիզմի (ծագող, զարգացող, մարող) կենսունակության անխափան գործող ցուցիչն է և չի կարող ավելի բարվոք վիճակ ցույց տալ, քան է իրականում: Լեզուները գոյատևում են այնքան, որքան դրանցով գործառող հանրությունները:

## ԼԵԶՎԻ ԾԱԳՈՒՄԸ

Հասկանալի է, որ չի կարելի հարցի պատասխանի որոշակիացում փնտրել թվականների անգամ հազարամյակների մոտավորությամբ: Պատասխանը կարող է որոշակի լինել միայն հասարակական այն հանգամանքների, մշակութաստեղծման այն մակարդակի փաստարկման չափով, որը անով որ կարող էր հասունանալ մարդու կենսակերպի մեջ լեզվի անհրաժեշտությունը: Այսինքն՝ դա կարող է լինել ընդամենը մշակութաբանորեն տրամաբանական մի որոշակիացում: Ինչպես մշակութային ցանկացած արժեք, լեզուն ևս կարող էր ծագել-ձևավորվել միայն հասունացած պայմանների առկայության հանգամանքներուն: Հետևաբար կարելի է մտածել, որ մարդու մշակութաստեղծ գործունեությունը պետք է հասած լիներ մի այնպիսի մակարդակի, որի հետագա ընթացքի հերթական ու կարևորագույն անհրաժեշտությունը լեզուն էր: Այլապես նրա չլինելը կդադարեցներ, հետընթացի մեջ կգցեր մարդուն, կծախողեր նրա տեսակի գոյության կարևորագույն նախապայմանը՝ մշակութաստեղծումը: Եվ հակառակ՝ լեզվի ձևավորումը կնպաստեր մշակութաստեղծման գործընթացին՝ արագացնելով և կազմակերպելով մշակութաստեղծման նախընթաց վերելք:

Ինչևէ, ե՞րբ է ծագել լեզուն:

Մտտ հիսուն-վարսուն հազար տարի առաջ, երբ ակնհայտ դարձան նախամարդու տեսակներին փոխարինելու եկած բանական մարդու գոյությունն ու գործունեությունը: Այսինքն՝ լեզուն սկսել է ձևավորվել մշակութաստեղծման շեմին: Հոդաբաշխ խոսքի անհրաժեշտությունը հենց այդ շրջանում էլ պետք է որ ձևավորված լիներ, որովհետև.

1. հաղորդակցման, տեղեկության փոխանակման ենթադրվող նախնական ձևերը (ձայներ, դիմախաղ (միմիկա), մնջախաղ (պանտոմիմա) և այլն) չեն կարող երկար ժամանակ սպասարկել

մարդու խմբային համագործակցությամբ օրավուր ծավալվող կենսագործունեությանը.

2. մշակութաստեղծման ծավալունը, միջմարդկային հարաբերությունների բարդացունը և այլն արդեն կուտակել էին այնքան փորձ, իմացություն, որը և պահպանել-ամբարելը, և հաջորդ սերնդին փոխանցելն այլևս ի զրոյու չէին իրականացնելու հաղորդակցման ոչ լեզվական միջոցները:

Ահա այս հանգամանքներում պետք է որ ծագած լինի լեզվի անհրաժեշտությունը: Դարմար առիթը բաց չքողնելով՝ մի անգամ ևս հիշեցնեմ, որ դրա արդյունքում մարդն իրագործեց իր մշակութաստեղծ գործունեության մեծագույն ձեռքբերումը՝ ստեղծեց լեզու: Դա պատմականորեն հասունացած անհրաժեշտության արդյունք էր:

## ԼԵԶՎԻ ՄՇԱԿՈՒԹԱՅՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Լեզուն մշակույթի անփոխարինելի բաղադրիչն է: Ըստ Էռլեթյան, մշակույթը ոչ միայն անպատկերացնելի, նույնիսկ անհրագործելի է առանց լեզվի: Իսկ եթե ավելի հետևողական լինենք, ապա կարող ենք ուղղակի ասել, որ մշակույթի գործառույթներից ոչ մեկը լիարժեք չի իրականանա առանց լեզվի:

Հնարավորինս խմբավորելով և ընդհանրացնելով լեզվի մշակութային նշանակության գործառույթները՝ կարելի է առանձնացնել հետևյալները:

1. *Լեզուն մարդու մտածողության միջոցն է, գործիքը: Մտածողությունը՝ որպես իրականության մարդկային արտացոլման ձև, չի կարող իրականանալ առանց լեզվի:*

Լեզվի միջոցով է ձևավորվում ու ձևակերպվում միտքը, որը մարդու ճանաչողության, հույզի, դատողության և այլնի արտահայտությունն է: Լեզուն ձգտում է լինել ինքն իրեն, աշխարհը, տիեզերքը ճանաչել, բացատրել փորձող մարդու գիտակցության ստացած արդյունքի հայելային արտացոլքը: Դրա շնորհիվ, մա-

նավանդ գրառվելով, մարդկային անհատական մտավոր և գործնական փորձը, իմացությունը դառնում են համազգային ու համամարդկային՝ գոյատևելով հետագա ժամանակների մեջ:

**2. Լեզուն մարդկային հաղորդակցման կարևորագույն, անփոխարինելի միջոցն է և հաղորդակցության մյուս բոլոր միջոցների գոյության նախապայմանը:**

Լեզվի այս (կոմունիկատիվ) գործառույթը պայմանավորված է մարդ արարածի բնատուր առանձնահատկություններով: Ի տարբերություն այլ արարածների՝ մարդը չի կարող ապահովել իր տեսակի պահպանումը միայն կենսաբանական մակարդակում հաղորդակցվելու, իմացություն կուտակելու և ժառանգելու սահմաններում: Անհատներից կազմված հասարակությունը մշակութաստեղծ ակտիվ գործունեություն է իրականացնում, որը հնարավոր է միայն լեզվական հաղորդակցման ձևով: Այստեղ լեզուն իր սպասարկող դերի մեջ որևէ խսրականություն չի դնում և պատրաստակամորեն ծառայում է տվյալ լեզուն կրող հանրության յուրաքանչյուր անդամնեն: Լեզվի այս գործառույթի շրջանակներում է մարդն իրականացնում առօրեական միջանձնային, աշխատանքային հարաբերություններից մինչև համաշխարհային փորձի և իմացության ժառանգորդումը:

Մենք հաճախ չենք կարևորում, նույնիսկ թերագնահատում ենք միջնարդկային առօրյա հաղորդակցման նշանակությունը, որովհետև այն համարում ենք ավելորդ, պարապ գրադարձնք, այլ մարդկանց կյանքին վերաբերող հարցերին միջամտելու ձև (բամբասանք): Իրականում լեզվական այդպիսի հաղորդակցությունն արարածներից միայն մարդու արտոնյալ հնարավորությունն է, հասարակությանը համախմբող, հանրային կարծիք ստեղծող կարևորագույն միջոցներից մեկը: Մեզ դա դուր է գալիս թե ոչ, միևնույն է, մարդն իր ժամանակի զգալի մասը ծախսում է լեզվական հաղորդակցության վրա:

**3. Մշակույթում լեզվի կարևորագույն գործառույթներից է նաև տեղեկութիւն կուտակումը (պահպանումը) և փոխանցումը:**

Ընդհանրապես, մշակույթը, նրա յուրաքանչյուր միավորը որոշակի տեղեկույթի կրող է ու պահպանող: Սակայն մշակույթի մեջ չկա մի բաղադրիչ, որը մշակութային և ոչ մշակութային տեղեկույթի կուտակման, պահպանման հնարավորություններով կարողանալու մրցել լեզվի հետ: Այն ամենը, ինչը մարդն ստեղծել է, զգացել, լսել, երևակայել, ճանաչել իրեն շրջապատող աշխարհում կամ իր մեջ, անպայման անվանել է կամ բնութագրել լեզվական միավորներով: Այսինքն՝ կուտակել է լեզվի մեջ և կամապականա փոխանցում է այդ լեզուն յուրացնող ցանկացած մարդու: Եթե հանկարծ վերանա ոչ միայն մարդկության ստեղծած մշակույթը, այլ նաև ողջ այս երկրագունդն ու տիեզերքը, բայց իրաշքով պահպանվի միայն մարդու ստեղծած լեզուն, ապա նրա կուտակած տեղեկությամբ հնարավոր կլինի այդ ամենի մասին ավելի ամբողջական պատկերացում կազմել, քան տեղեկատու որևէ այլ աղբյուրով: Յետևաբար լեզուն է բոլոր ժամանակների ամենաընդգրկուն տեղեկատու աղբյուրը, շտեմարանն այն ամենի, ինչը երբեք որևէ չափով ներառվել է մարդու կենսագործունեության, իմացության և ճանաչողության ոլորտ:

Դժվար չէ գիտակցելը, որ մարդու նկարագիրն ածանցյալ է, արդյունք նաև որոշակի տեղեկատվական գործընթացի, որում անփոխարինելի է լեզուն: Մանավանդ ժամանակակից աշխարհում երկրների ու ժողովուրդների զարգացման, հզորների մրցավագրում առաջնահերթ նշանակություն են ստանում հենց տեղեկատվության արդյունավետության, հարստության ու բազմազանության, արդիականության և իհարկե արագության ու կազմակերպվածության որակական չափանիշները: *Մնացյալ ամեն ինչն ակնհայտորեն դարձնում է դրա գործնական ներդրման, կիրառության արդյունքում ձեռք բերված՝ սկսած նյութական արժեքներից և վերջացրած մարդու, հասարակության կյանքի որակով, բարոյականական նկարագրով: Իսկ դրանում անփոխարինելի է լեզվի նշանակությունը, որովհետև, ինչպես ասվեց քիչ առաջ, լեզուն է երբեք ստեղծված ամենակատարյալ և ընդգրկուն տեղեկատվական համակարգը:*

#### **4. Լեզվի կարևորագույն գործառույթներից մեկը լեզվամտածողության ձևավորումն է:**

Մարդկային լեզվի ընթանական և մեկնաբանության մեջ առկա վերացականությունն օգալիորեն նվազում է, եթե այն դիտարկում ենք իր գործնական դրսնորման կոնկրետ ձևերից մեկի՝ ազգային լեզվի նակարդակում: Այս դեպքում արդեն այն ձեռք է բերում որոշակի ազգային ճակատագրով, մշակութաստեղծ գործունեությամբ, աշխարհաճանաչողությամբ, կենսափորձով, աշխարհագրական և այլ հանգամանքներով պայմանավորված որոշակիություն:

Այս և չթվարկված բազմաթիվ այլ հանգամանքներ տվյալ լեզուն կրող հանրության համար ձևավորում են լեզվական ձևակերպմանը արտահայտվող աշխարհատեսության, մտածողության ուրույն կերպ, որն ընդունված է անվանել լեզվամտածողություն: Իր դրսնորման նաև այս ձևի մեջ է լեզուն դառնում տվյալ ազգի կամ հանրության հարափոխության փաստական նյութի և դրա մեկնաբանության, ազգային հիշողության, պատմականորեն ձևավորվող հոգեկերտվածքի կրողը: Լեզվի ազգային լինելը իրողություն է, որն արտահայտվում է ոչ միայն գուտ լեզվական նակարդակություն, այլ նաև իրենով ձևավորվող ու դրսնորվող լեզվամտածողությամբ: Դրա համար էլ ցանկացած ազգային լեզվի յուրացում շատ մակերեսային գբաղմունք կդառնա, եթե սահմանափակվի միայն լեզվական իրողությունների (բառապաշար, թերականություն և այլն) սերտունով: Եվ հակառակը՝ ցանկացած ազգի ինքնատիպությունից, ազգային նկարագրից գրկելու, ծուլելու լավագույմ և առաջնահերթ միջոցը նրա համար օտար որևէ լեզու մայրենիի տեղ պարտադրելն է: Իսկ դա, դժվար չէ զիսի ընկնելը, լինում է ոչ միայն անթաքույց, այլ, ցավոք սրտի, նաև դժվար նկատելի, շահագրգռող, միջնորդավորված նախածեռնություններով:

Լեզվի ազգային դերին ու նշանակությանը վերաբերող այս հարցերը հետաքրքիր ուսումնասիրության նյութ են տարբեր առումներով<sup>12</sup>: Մշակութաբանական առումով նրա ազգատարբե-

րակիչ և ազգապահպան նշանակություններն ամվիճարկելի են: Մեկընդիշտ պետք է նկատի ունենալ, որ լեզուն լինում է միայն ազգային: Այն ազգային է, եթե նույնիսկ կենդանի գործածությունից դուրս եկածների (մեռած լեզու) շարքում է: Ավելորդ չեն համարում մի անգամ ևս ընդգծել, որ մայրենին կամ մարդու առաջին լեզուն ազգային ինքնության ցուցիչն է, ինքնության պահպանման միջոցը: Իր լեզվական նախընտրությամբ մանավանդ հասուն տարիքում մարդը (գիտակցաբար կամ ինտուիտիվ) ըստ եռության իրականացնում է հոգեբանական կարևոր գործառույթ: Դա ազգային ինքնության ընտրությունն է՝ իդենտիֆիկացիան, հայերեն՝ նույնացումը: Դրան հաջորդում է իմիտացիան (նմանակում), որով նա աշխատում է իրեն տեղափոխել այդ լեզվակիր հանրության մշակութային դաշտ, դառնալ նրա սուբյեկտներից մեկը:

Վստահ եմ, որ այսքանն իմանալուց հետո դժվար չէ գլխի ընկնելը, որ միջազգային դարձած լեզուների գործառույթը չի սահմանափակվում առաջին հայացքից այդքան չեզոք թվացող դերով՝ զուտ խոսքային-հաղորդակցականով: Միջազգայնացած ցանկացած լեզու կամա-ակամա իրականացնում է գլոբալացնող ֆունկցիա հօգուտ այդ լեզվակիր հանրության մշակույթի:

Ասվածից չպիտի ենթադրել, թե ազգային լեզուն և մշակույթը պահպանելու համար պետք է ամեն կերպ խուսափել միջազգային լեզուների իմացությունից: ճիշտ հակառակը: Պետք է ուղղակի պետականորեն իրականացնել մշակութային այնպիսի քաղաքականություն, որով միջազգային լեզվի համար կրացառվի ներազգային կյանքում նայրենիի հետ մրցակցելը:

Անընդհատ ծավալվելու հնարավորություն ունեցող այս նյութն ամփոփենք հետևյալ մտքով: *Լեզվի ազգատարբերակիչ և ազգապահպան գործառույթներն իրականանում են ազգային նկարագրի վերարտադրության նրա ակամա գործառույթով, որի ակնհայտությունը դրսնորվում է իր կիրառական որոշակիության՝ խոսքի մեջ:*

## ԽՈՍՔԸ

Խոսքը լեզվի մասնավոր դրսնորումն է, նրա անհատականացած, որոշակի, գործնական կիրառությունը: Դետևաբար՝ այն ամենը, ինչ արդեն ասվել է լեզվի մասին, վերաբերում է նաև խոսքին: Տվյալ լեզվով գործառող յուրաքանչյուր ոք նրա հարցստությունից օգտվում է այնքանով, որքանով իր կենսափորձը և լեզվիմացության կարողությունն են դա թույլ տալիս: *Լեզվի գոյության ձևը խոսքն է՝ ամենօրյա, կենդանի գործածությունը. չի կարող գոյություն ունենալ որևէ լեզու՝ առանց խոսքային կիրառության:* Դրա համար էլ ընդունված է լեզուների տարբերակման մի ձև ևս՝ կենդանի և մեռած: Առաջին տեսակը կազմում են այն լեզուները, որոնք ունեն գոնե բանավոր մակարդակում կրող, գործառող հանրություն:

Խոսքի մակարդակում է վերանում լեզվի չեզոքությունն այն հանրության յուրաքանչյուր անդամի նկատմամբ, որն իր կողողն է: Խոսքը խոսքային գործունեության արդյունք է և դրանով իսկ՝ խիստ անհատական ու տարբերակված: Խոսքի նվազագույն միավորը նախադասությունն է: *Դա բառակազմ է (երրեմն՝ բառ, բառակապակցություն), լեզվական կապակցման օրենքներով ձևավորված, և արտահայտում է միտք: Դենց դա էլ՝ միտքը (բովանդակություն), ամենաէակամն է խոսքի մեջ: Խոսքի և բառակազմը, և՝ դրանց կապակցման հնարավոր տարբերակների ընտրությունը, և՝ արտահայտած միտքը խոսքի հեղինակի էության արտացոլքն են:*

Լեզուն մեծ, անընդգրկելի և անսպառելի հարստություն է, որը, սակայն, հանրության յուրաքանչյուր անդամի պարագայում մասնավորվում-որոշակիանում է: *Դա տեղի է ունենում ըստ այդ անդամի սոցիալական փորձի, անհատական նկարագրի, մասնագիտության և այլ հանգամանքների: Ուստի կարելի է ասել, որ խոսքի միջոցով յուրաքանչյուրը վերատեղադրում է ընդհանրական-ազգային լեզվի մի տարբերակ, որն իր էության հայելին է, իր*

Ակարագիրը: Յարուստ ներաշխարհով անհատների խոսքը նույն-քան անսպասելի, ինքնատիպ, յուրօրինակ է, որքան իրենց էու-թյունը: Նրանց խոսքում հաճախ են հանդիպում նորաստեղծ բա-ռեր, բառիմաստային անսպասելի կիրառություններ և ոչ ստան-դարտ շարահյուսական կառույցներ<sup>13</sup>: Ուրեմն, ըստ սոցիալական փորձի և անհատական էության շեշտվածության, խոսքը նույն-չափ անհատական է: Պատահական չէ, որ ժողովրդական առածն ասում է՝ խոսիր՝ տեսնեմ՝ ով ես: Նաև՝ հագուստով ընդունում են, խոսքով ճանապարհում: **Խոսքն ինքը մարդն է: Խսկ միջմարդ-կային հաղորդակցության կարևորագույն ձեզ եղել է, կա ու լի-նելու է խոսքայինը:** Ընդ որում, դա անխախտ օրինաչափություն է թե՝ բանավորի, թե՝ գրավորի դեպքում:

Մեզնից նույնիսկ հազարամյակներ առաջ ապրած մարդ-կանց գիրը կարդալը հեղինակին անմիջականորեն հաղորդակից լինելուն համարժեք գործընթաց է: Դրա համար էլ, հաճախ չխո-րանալով իրողության մեջ, հեղինակի հետ միջնորդավորված հա-ղորդակցումը մենք նույնացնում ենք անմիջականին՝ միջանձնա-յին կենդանի շփմանը: Այսպես, օրինակ, դուք էլ հաճախ գործա-ծած կլինեք խոսքի հետևյալ շատ տարածված կայուն տարբե-րակը: «Կարդում եմ Հովի. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը» ասելու փոխարեն կարող ենք ուղղակի ասել. «Կարդում եմ Հովի. Թումանյան»: (Լեզվական այս իրողությունն ընդունված է անվանել փոխանունություն) Ու ոչ միայն սիսալված չենք լինի կենսական փաստի լեզվական ձևակերպման առումով, այլև ականա կիաստատենք գրավոր խոսքի վերաբերյալ վերը նշվա-ծը՝ խոսքը (մանավանդ գեղարվեստական) ինքը մարդն է: Նույ-նիսկ եթե խոսքն անկեղծ է չէ, միևնույնն է, փորձառու լսողը այս ամենից, բանավոր խոսքին բնորոշ նաև հնչերանգից, դիմախսա-ղից, խոսողի հայացքից, դեմքի արտահայտությունից և այլնից կարող է անսխալ պատկերացում կազմել նրա մասին: **Ինչպիսին որ մարդն է, այնպիսին էլ իր խոսքն է: Մանավանդ՝ անկեղծ խոսքը:** Ոչնչում մարդն այնքան լավ չի երևում, որքան ան-հատական գործունեության ոլորտներում, մանավանդ խոսքում:

**Խոսքով ժանաչելի է ոչ միայն ինքը՝ հեղինակը, նաև այն ժամանակաշրջանը, որում ապրել է նա: Յանկացած խոսքի բնորոշ է որոշակի, անշփոթելի անհատական բովանդակային և ոճական նկարագիր:**

Խոսքը կարող է ունենալ երկու տարբերակ՝ բանավոր և գրավոր: Սկզբնապես և շատ ավելի վաղ ձևավորվել է բանավորը: Դենց բանավորն էլ մարդկությունը գործառում է ավելի շատ ու հաճախակի: Բանավոր խոսքն ավելի անմիջական է, նաև հնչերանգով հարուստ ու անհատական: Բայց և ունի լուրջ թերություն. պահպանվող չէ: Ապահովելով կենդանի, անմիջական հաղորդակցում՝ այն հաջորդ պահին դադարում է գոյություն ունենալ: Բանավոր խոսքի հեղինակը սովորաբար նույնքան հետևողական, ուշադիր չէ իր ասածի նկատմամբ, որքան գրավորի դեպքում: Գրավոր խոսքն ավելի կազմակերպված է, որովհետև հեղինակը ժամանակ է ունենում աշխատելու իր տեքստի ձևավորման վրա: Դրանով նա հասնում է (հիարկե ըստ կարողությունների) հաղորդելիք տեղեկությունների և դրանց (փաստ, միտք, հույզ և այլն) լեզվական ձևակերպման համապատասխանության առավելագույնին: Ըստ ձևավորված փորձի՝ մարդիկ գրավոր խոսքը բանավորից ավելի վստահելի են համարում, թեև դա չի նշանակում, որ գրվածը միշտ էլ ծշմարտություն է պարունակում: Ասածս այստեղ գրավոր խոսքի նկատմամբ վերաբերմունքի մասին է: Ու ընդհանրապես, գրվածը շատ ավելի կարևոր փաստ է, քան ասվածը:

Գրավոր խոսքը նաև պահպանվող է: Կախված օգտագործված նյութերի երկարակեցությունից և այլ հանգամանքներից՝ գրավոր խոսքը հաջողությամբ հաղթահարում է ժամանակ և տարածություն՝ մատչելի դառնալով բազմաթիվ սերունդների, այլ ազգերի ու ժողովուրդների:

Մեկ հարյուրամյակից ավելի է, ինչ ձայնագրող սարքերի ու միջոցների շնորհիվ պահպանվում է նաև բանավոր խոսքը: Սակայն նրանք պարբերաբար թարմացման (կրկնօրինակնան) կարիք ունեն, և ձայնակիր նյութերը կենսունակությամբ չեն կարող

մրցել գիր կրող նյութերի հետ: Պահպանվող լինելու շնորհիվ է նաև, որ գրավոր խոսքը հեղինակին պարտադրում է պատասխանատվության ավելի մեծ չափաբաժին, քան բանավորը: Բանավորը տեղում ուղղելի է, իսկ գրավորը հեղինակից առանձնանալ-հեռանալուց հետո ապրում է իր ինքնուրույն, անկախ կյանք՝ իբրև տեղեկատվական հաճախ բազմաշերտ, երբեմն նույնիսկ վերահմատավորվող դաշտ<sup>14</sup>: Մարդկության մշակութաստեղծ գործունեության առաջընթացը պայմանավորող էական գործոններից մեկն էլ մեր ժամանակներում այդքան սովորական դարձած գրավոր խոսքն է իր երեք տարբերակներով (ձեռագիր, տպագիր, էլեկտրոնային), որոնց մասին ավելի մանրամասն կասպի համապատասխան բաժնում:

Բանավոր խոսքի հնչերանգային հարստությունը գրավորում մասամբ պահպանվում է կետադրական նշանների օգնությամբ: Մասամբ, որովհետև որքան էլ բազմազանեցվեն կետադրական նշանները (տրոհական, հնչերանգային, բացահայտման), միևնույն է, դրանք լիուլի չեն արտացոլի բանախոսի հուզարտահայտչական ողջ լիցքը:

Այս ամենի մասին շատ ավելի մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ լեզվաբանության դասագրքերից:

Կազմակերպված, ասելիքով որոշակի ու հասկանալի խոսքը նույն որակներն ունեցող մտքի արգասիքն է: ճիշտ է նաև հակառակը: Թերուսը, ծանծաղ միտք ունեցողը, իր և ուրիշների կյանքի փորձը չիմաստավորողը չի կարող խելոք, ուշադրության արժանի, ինքնատիպ խոսք ասել: Իսկ եթե անգամ կրկնի ուրիշներից վերցրած խելոք նտքեր, ապա, կարող եք չկասկածել, կլինի միայն էպիգոն, վերապատմող, ավելի շուտ՝ նմանակող, մարդ, որը չի ընթառում այդ խոսքերի կենսական ճշնարտությունը:

Խոսքի որակն ունի չափանիշներ, որոնցից մեկն էլ լակոնիզմն է՝ հակիրճությունը: Դրա եռությունը խնայողության սկզբունքըն է, որը բոլոր ժամանակներում էլ արժանիորեն գնահատվել է որպես սակավ բառերով բազում մտքեր արտահայտելու կարողություն: Եթե խոսքը մշակութային անգնահատելի արժեք է,

ապա (մի՛ զարմացեք) դա դեռևս չի նշանակում, թե նրա շատը լավ բանի նշան է: Ֆիշտ հակառակը՝ նախընտրելի է խոսքի համառոտը, այն նվազագույն անհրաժեշտը, որի միջոցով կարտահայտվի ասելիքը: Խոսքը կարող է և փառավորել, և ոչնչացնել հեղինակին: Շատախոսել–շաղակրատելը (թե՛ բանավոր, թե՛ գրավոր) քիչ մտածելու, ասելիքը լրջորեն ծանրութեքն չանելու ցուցիչներից է: Նման դեպքերում խոսքը դառնում է վրեժինդիր և բարոյապես ոչնչացնում է իր հեղինակին՝ ի ցույց դնելով նրա պախարակելի էռթյունը<sup>15</sup>:

Կա խոսքին վերաբերող մի ոլորտ, որն առավելապես մշակութաբանական քննարկման նյութ է: Դա խոսքի ստեղծող և վերստեղծող մշակութային նշանակությունն է, որին էլ նվիրված է հաջորդ թեման:

## ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒԹԱՎՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Խոսքին, մանավանդ գրավոր խոսքին, բնորոշ ամենանշանակալի մշակութային իրողություններից մեկը նրա վերստեղծող, վերարտադրող նշանակությունն է, որին էլ նվիրված չենք նստում:

Մշակութային այս հանգամանքը լավ պատկերացնելու համար թերևս ճիշտ կլինի նախ նկատի ունենալ բնության նախանշած և անխախտ հետևյալ օրինաչափությունը: Բոլոր բոլյսերի, կենդանիների վերարտադրությունն իրականանում է յուրաքանչյուրի մեջ ներդրված մեխանիզմով՝ գենուկոդով: Դա այդ տեսակի գոյությունը և շարունակականությունն ապահովող կողավորվածությունն է, որի մեջ նախորոշված է ամեն ինչ, ամենակարևորն ու տասներորդական ճանրամասնությունն անգամ: Բնությունն այնպես է կարգավորել նրանց կենսագործունեությունը, որ ինքնագործունեության տեղ և անհրաժեշտություն կարող են չառաջանալ հարյուրամյակներ շարունակ:

Մարդ արարածի պարագայում ակնհայտ է դարձյալ բնության նախանշած, սակայն միանգամայն հակառակ սկզբունքը: Իր եռթյան և կենսագործունեության կենսաբանական կողավորվածության հետ մարդը տեսակի վերարտադրության համար<sup>16</sup> ստիպված է զգալիորեն հենվել հենց իր իմպրովիզացիոն, ստեղծագործական գործունեության կարողությունների վրա: Կարծում եմ՝ կրահեցիք, որ խոսք մարդու մշակութաստեղծ գործունեության մասին է: Մարդու վերարտադրության, կենսագործունեության համար անվիխարինելի նշանակություն ունի բնությունից վերցված միջոցներով իր ստեղծած միկրոաշխարհը՝ մշակույթը:

**Մարդն է մշակույթ ստեղծում, բայց առանց այդ մշակույթի երեք չի կարող իրականացն իր վերարտադրությունը:** Մշակույթի ահա այդ շատ կարևոր գործառույթում է, որ խոսքն առանցքային նշանակություն ունի: Մասնավորեցնելով արդեն ասվածը՝ կարելի է ուղղակի սահմանել. խոսքի արարիչը մարդն է, բայց խոսքն էլ ուղղակի և միջնորդավորված բազմաթիվ ձևերով մասնակցում է մարդու վերարտադրությանը: Ասվածը հավասարապես վերաբերում է թե՛ բանավոր, թե՛ մանավանդ գրավոր խոսքին:

Եվ ահա թե ինչպես:

Չեզ լավ հայտնի է, որ մարդու կենսափորձի ու ճանաչողության ողջ արդյունքն ամբարվում է իբրև խոսք: Խոսքով արձանագրվող այդ ամենն ընկալվում է որպես եղելության պատմություն, ուսանելի փորձ, կենսական ծշմարտություն: Ուստի, կախված բովանդակությունից, խոսքը կարող է լինել արարիչ, կարող է նաև դատապարտել ոչնչացման: Նա ոչ միայն արձանագրում է մեզնից անկախը և մարդու մասնակցությամբ եղածը, նաև ականա ծրագրում է լինելիքը՝ ապագան: Մենք ամեն ինչ գիտենք այնպես, ինչպես ներկայացվում է խոսքի մեջ: Այն ամենը, ինչը մենք խոսքային ծշմարտության մեջ համարում կամ ընկալում ենք որպես մեզ վերաբերող, մեր նկարագրի ու կենսակերպի առումով եական, շարունակում է գոյատևել, մասնակից լինել մեր ֆիզիկական ներկայային: Եվ հակառակը: Դետևաբար անցյալին

Վերաբերող մեր հիշողության դաշտը որոշակիորեն բովանդակավորված ռեալություն է, որը ձևավորվում է որոշակի ընտրությամբ գոյացած մշակութային արժեքների խճռով։ Եվ անհատները, և ազգերը, թեկուց բազմաթիվ միջնորդավորումներով, զգալիորեն դրանով են իմաստավորում իրենց ֆիզիկական ներկան ու ապագան։ Այս թե ինչու արժեհամակարգը պահպանելը, արքետիվերին (նախատիա) ընդօրինակելը և հաջորդ սերունդներին ոչ միայն փոխանցելը, այլև նրանցից նույնը նախանձախնդրորեն պահանջելը դառնում են նույնիսկ չգիտակցված, բայց կենսական կարևորության համազգային նպատակ, վարքագծի ուղեցույց, գոյության իմաստ։

*Դրա համար էլ կարելի է վստահորեն պնդել, որ դեռևս գոյատևող ազգերի կյանքում ինչ լինելու է, արդեն եղել է, ինչ ասվելու է, վաղուց ասվել է։ Այսինքն՝ եղելությունների կրկնություններն արդեն ըստ այնմ, թե մենք նրանց ինչ իմաստներ ենք վերագրում, հաճախ անխուսափելի են այնքանով, որքանով որ խոսքի միջոցով դրանք նախապատրաստվում-ծրագրվում են։ Իսկ ապագայի ծրագրավորումը (արդեն դժվար չէ գլխի ընկնելը) տեղի է ունենում երկու ձևով՝ կամ եղելությունը գաղափարականացնելով, կամ գաղափարը պատմականացնելով։ Առաջինը եղելության իմաստավորումն է, երկրորդը՝ չեղած, բայց անհրաժեշտ եղելության հորինումը։ Պիտի ասեմ, որ կեղծարարության այս երկու ձևերն էլ և անցյալում, և այժմ ակտիվորեն գործադրվել են մանավանդ պատմագրության և պատմագիտության մեջ։*

Ինքնըստինքյան հասկանալի է, որ ցանկացած անհատ ու ազգ խոսքի մեջ ձևավորված արժեհամակարգի միջոցով դարեդար ունենում է այն, ինչն ակնհայտ է որպես փաստացի կեցություն։ Յուրաքանչյուր կեցություն բացարձակ նույնական է տվյալ ազգի ու անհատի արժեհամակարգին և ինքնագիտակցության կողավորվածությանը։

Այս այսպես խոսքը վերստեղծում է և մարդուն, և ազգին, և նրա ձեռակերտ կենսուլորտը՝ մշակույթը։

Խոսքն անմրցելի և անփոխարինելի միջոց է մարդկային հասարակության մշակութաստեղծ նկարագրի, մշակույթի բովանդակության կայացնան առումով։ Խոսքն անպայման ունի նաև սուբյեկտիվ (հեղինակային-անհատական) բովանդակություն։ Խոսքով արտահայտվող աշխարհընկալումը միշտ ունի մասնավոր-սուբյեկտիվ սկիզբ։ Դրա համար էլ շատ հնարավոր է, որ նրա բովանդակությունը ոչ միայն շեղված, նույնիսկ չափազանց հեռու լինի այն իրականության օբյեկտիվ բովանդակությունից, որն արտացոլում է։ Դրա դրսևորման ձևերը տարբեր են։ Երկրորդականը կամ մասը կարող է ներկայացվել էականի կամ ամբողջի, անհատական ընկալումը՝ օբյեկտիվ ճշմարտության տեղ։ Քիչ չեն դեպքերը, երբ հեղինակները դիմում են մտքի սպեկուլյատիվ մանիպուլացիաների թե՛ իրողության ներկայացման, թե՛ դրա բովանդակության մեկնաբանման ժամանակ և այլն։

Ահա այդպես խոսքն անհատի և հասարակության համար ստեղծում է մի այնպիսի պատկեր, որը կարող է նույնական, մասսամբ նույնական կամ բացարձակ անհամապատասխան լինել օբյեկտիվ իրականությանը։ Պատմությունից հայտնի են ոչ միայն անհատներ, սոցիալական խմբեր, անգամ ամբողջ ժողովուրդներ, որոնք տասնամյակներ շարունակ ապրել են իրականությանը, փաստական իրողությանը չհամապատասխանող խոսքաստեղծ, կեղծ գաղափարախոսական միջավայրում։ Դասկանալի է, որ դա որոշակի շահերով իրականացվող և պահպանվող մքննոլորտ է։ Բայց մի օր այդ փուչիկներն ու պղպջակները պայթում են՝ ծննդով համաշխարհային կամ համազգային ողբերգություններ։ Այս առումով ամենաթույլ, կիսադեմոկրատական ազատությունների համակարգն անգամ նախընտրելի է բռնապետությունից։ Թեևուզ վերապահումներով և մասնակիորեն, համենայնդեպս, հասարակությունը հնարավորություն է ունենում ծանոթանալու իրարից տարբեր կարծիքների, և գոնե մտածող ու շրջահայց մասը չի հայտնվում անգիտությամբ երջանիկի այն վիճակում, որի վերջը միշտ լինում է ճշմարտության հայտնությամբ անխուսափելի շոկը, խարվածության, անտեղի անցած տասնամ-

յակների անդառնալիության ողբերգությունը։ Ել չեն ասում, որ թեկուզ մասնակի ազատությունների շրջանակներում էլ խոսել-քննարկել-գրելու հնարավորությունը հասարակական լարվածությունը, կոնֆլիկտային իրավիճակը լիցքաբափելու կարևոր միջոցներից մեկն է։

*Ահա թե ինչո՞ւ է խիստ անհրաժեշտ խոսքը ճիշտ լսելու և կարդալու հմտությունը (ըստ ժողովրդական իմաստության՝ լսածն ու կարդացածը հալած յուղի տեղ չընդունելը): Խոսքը ոչ միայն փաստագրում է, մեկնարանում իրականությունը, այլև կողավորում, կազմակերպում գալիքը<sup>17</sup>:*

## ԳԻՐ ԵՎ ԳԻՐՔ

Մարդկային ստեղծագործության բոլոր դրսևորումներից ամենազարմանալին և ուշադրության արժանին գրքերն են: Գրքերում ապրում են անցած ժամանակների խոհերը, ըմբռնելի և պարզորոշ հնչում են այն մարդկանց ծայները, որոնց աճունները վաղուց հողմացրիվ են եղել երազի նման: Այն բոլորը, որ մարդկությունը կատարել է, խորհել, այն ամենը, ինչին նա հասել է, այդ բոլորը, ասես թե կախարդանքով, պահպանվել են գրքերի էջերում:

Թ. Կարլայլ

## ԳԻՐԸ

Գիրը գրավոր նշան է, խորհրդանիշ: Սա մշակութային այդ իրողության թերևս ամենանսխալ բնորոշումն է: Բայց և ամենաընդհանրականը, որի շնորհիվ (նաև պատճառով) բացատրության ընդգրկումը դառնում է անսահմանափակ: Գրի այդպիսի ընկալման շրջանակներում կարող է ներառվել գրավոր տեսք ունեցող ցանկացած պայմանական նշան, նշանների համախումբ: Բայց մշակութարանության մեջ ընդունված է «գիր» հասկացությամբ անվանել մեզ համար սովորական դարձած մի արժեք: Գիր է այն խորհրդանիշը, որի օգնությամբ արձանագրվում, գրի է առնվում լեզվի կամ խոսքի բանավոր տարրերակը: Կամ էլ այլ կերպ՝ գիրը միջոց է, որով լեզվի բանավոր տարրերակը փոխարկվում է գրավորի: Այդ գրավոր խորհրդանիշը կարող է համարժեք լինել (այսինքն՝ փոխարինել) բանավոր խոսքի հնչյունին (հնչույթին), հնչյունախմբին, բառին, նախադասությանը: Այս ամենից արդեն որոշակի է, որ գրին բնորոշ է երկու կարևոր հատկանիշ:

1. Գիրը ծեռագիր կամ տպագիր պայմանական նշան է: Գրի նախնական ծևերում (պատկերագրություն) այն, ըստ էության, կրկնում էր իր անվանած առարկային, այսինքն՝ առարկայի գծանկարն էր:

Գրի հետագա զարգացման ընթացքում այն ավելի վերացրակած խորհրդանիշ դարձավ՝ աստիճանաբար հեռանալով առարկայի հետ ծևական նմանությունից: Գրի զարգացման ավելի արդյունավետ սկզբունք դարձավ արտասանական միավորներով կողմնորոշվելը, որը հանգեցրեց հնչյունագրին: Մանավանդ ժամանակակից գրի ծևը պայմանավորված չէ իր խորհրդանշած հնչյունային կամ խոսքային միավորով: Նայած հասարակական պայմանավորվածության, օրինակ, նույն հնչյունը կարող է նշանակվել մեկ այլ գծագրություն ունեցող նշանով, քան կա: Պատկերացրեք այսպես: Եթե Մաշտոցը հայերենի Ա հնչյունը նշանա-

կեր, ասենք, Բ նշանով, իսկ Բ հնչյունը՝ Ա նշանով, մենք այդպես էլ կսովորեինք և այդ գրերը կգործառեինք հենց այդ նշանակություններով։ Ու դրանում տարօրինակ ոչինչ չեր լինի։ Ա նշանի ձևը բացարձակ ոչ մի կապ չունի համապատասխան հնչյունի (հնչույթի) հնչման ձևի, դրան մասնակից հնչարտաբերական օրգանների, լսողական տպավորության և այլնի հետ։ Բայց երբ արդեն կայացել է այդ հասարակական համաձայնությունը, այն խախտելուց պիտի ձեռնպահ մնալ, որովհետև այդ պայմանական նշանների կամայական օգտագործումը կիանգեցնի գրավոր խոսքի խճողմանը, անընթեռնելիությանը։ Դուք հավանաբար դրանում համոզվել եք որևէ լեզվի ուղղագրությունը յուրացնելու թեև դժվարին, բայց անհրաժեշտ գործունեության ընթացքում։

2. Մեկ միավոր գրով կարելի է նշանակել լեզվի կամ բանավոր խոսքի զանազան բաղադրիչներ՝ հնչյուն (ա–ա, բ–բ և այլն), հնչյունախումբ (ե–յե, և–յէվ կամ էվ և այլն)։ Այս օրինակներում, հավանաբար գլխի ընկաք, որ մեկ միավոր գիրը տառն է։ Եթե պայմանավորվենք, որ որպես միավոր գիր պետք է ընկալենք որևէ սկզբունքով կից գրվող նշանների ինչ–որ խումբ (ասենք՝ բառի գրային պատկերը, ձևը), ապա այն կարող է նշանակել իմաստ (բարիմաստը), անգամ միտք (եսիմ – ես ինչ իմանամ, ինչկացե (ինչև) – ինչ էլ որ է, ինչ էլ որ եղել է, ինչ էլ որ կա)։ Եվ այսպես շարունակ, նայած թե ինչ հասարակական պայմանականությամբ է ձևավորվում և ընկալվում միավոր գրի ձևը։

Բերված բոլոր օրինակները մեր լավ յուրացրած հնչյունային գրի հնարավոր տարրերակներից են։ Սակայն նրան ավելի բնորոշ է, ինչպես արդեն ասվեց, հնչյուն նշանակելը կամ անվանելը։ Մինչդեռ հիմա էլ կան հազարամյակների ընթացքում հարուստ, ինքնատիպ մշակույթ ստեղծած ժողովուրդներ (օրինակ՝ չինացիները, ճապոնացիները), որոնց համար միավոր գիրը (հիերոգլիֆը) շատ ավելին է, քան հնչյունը կամ հնչյունախումբը։

## ԳՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Գիրը մշակութային կարևոր արժեք է և կարող է ծագել միայն համապատասխան կենսական հանգանաճներում: Եթե լեզվի ծագման ժամանակաշրջանի վերաբերյալ նյութական փաստեր չեն կարող պահպանվել (այն բանավոր էր), ապա գրի դեպքում հակառակն է: Շնորհիվ գրի պահպանվող նյութականության՝ հայտնի է, որ այն նախապես դրսնորվել է իբրև պատկերագրություն: Լեզվի պես գիրն էլ ձևավորվել է նախնական մշակույթի շրջանակներում՝ իհարկե հաջորդելով բանավոր խոսքին:

Դժվար չէ գլխի ընկնելը, որ գիրը չէր կարող միաժամանակ ձևավորվել բոլոր ժողովուրդների մշակույթում: Դրա համար անհրաժեշտ էր մշակույթի զարգացման որոշակի մակարդակ: Հայտնի է նաև, որ ոչ բոլոր, անգամ զարգացած կամ ակտիվորեն զարգացող մշակույթ ունեցող ժողովուրդներն են սեփական գիր ստեղծել հիմնականում բավարարվել են եղած գիրը փոխարելիրենց լեզվին հարմարեցնելով: Բայց նույնիսկ գրի փոխառումն էլ ենթադրում է մշակութային այդ անհրաժեշտության հասունացում և համապատասխան պահանջնունքի գիտակցման մակարդակ: Դրա համար էլ պատահական չէ, որ գրի նախնական ձևերն ու զարգացման դրսնորումները բնորոշ են Հին աշխարհի ամենաակտիվ մշակութաստեղծ տարածաշրջաններին՝ Եգիպտոս, Միջագետք, Հնդկաստան, Չինաստան և այլն:

Հազարամյակների ընթացքում գիրն անցել է փոփոխությունների և կատարելագործման երկար ժանապարհ: Այդ ընթացքում ձևավորվել են գրի երեք հիմնական տեսակներ՝ պատկերագիր (պիկտոգրաֆիա), գաղափարագիր (իդեոգրաֆիա), հնչյունագիր (Փոնոգրաֆիա): Այս ամենի վերաբերյալ բազմալեզու հարուստ գրականություն է ստեղծվել, ուստի այստեղ մանրամասնելը նպատակահարմար չեմ հանարում<sup>18</sup>:

Հարկ է նաև նշել, որ գրի թվարկված տեսակները հաճախ գործառվել են ոչ մաքուր՝ իրար մեջ ներթափանցած տարրերի համադրությամբ: Դա նշանակում է, որ գրի յուրաքանչյուր հա-

ջորդ տեսակի ծևավորումը եղել է նախորդի զարգացման և ժամանակի ընթացքում գրին վերաբերող հասարակական հասունացած պահանջմունքի դրսևորում: Ահա հենց այս օրինաչափությունից ելնելով էլ կարելի է այսպիսի մի վարկած առաջադրել: Միշտ է, հնչյունային գիրը դեռ լիարժեք ծառայում է մարդկությանը, սակայն չի բացառվում, որ հասարակական կյանքի առաջընթացը մի օր կարող է հանգեցնել մարդու միտքը գրի վերածող այլ նշանների, խորհրդանշիչների ծևավորմանը: Դա հնարավոր է, ինչպես որ եղավ անցումը պատկերագրից գաղափարագրին, վերջինից էլ՝ հնչյունագրին: Գաղափարագրեր գործածող գրչի (գրողի) մտքով երևի չէր էլ անցնում, որ մի օր հնչյունական գիր է ծևավորվելու և փոխարինելու է գաղափարագրին: Նույնը կարող է տեղի ունենալ նաև մեզ համար սովորական դարձած հնչյունային գրի հետ: Ի վերջո, գրի տեսակը կամ ձևը ինքնակա գոյություն չէ. այն միշտ էլ ածանցվել և ածանցվելու է մարդու մշակութաստեղծ գործունեության առկա մակարդակից ու գիտակցված պահանջմունքներից:

Արդի մշակույթին առավելապես բնորոշ են հնչյունագրի գերակայությունը և նախընտրվածությունը: Դա հնչյունի (հնչույթ) դիմաց տառ գրության տարրերակն է, որը նույնապես տեսակներ է ունեցել և անցել կատարելագործման ճանապարհ: Ընդունված է հնչյունագրի ծագումը վերագրել մ.թ.ա. 3–2 հազարամյակներին: Խոսքի հնչյունագիր տարրերակն աստիճանաբար տարածվել է համապատասխան զարգացման հասած ժողովուրդների մշակույթներում: Առ այսօր էլ հնչյունագիրն իրեն մրցակից գրի ձև չունի:

Հնչյունագիր ենք նաև մենք՝ հայերս: Մեր հնչյունագիր լեզվի սկիզբը համարվում է 405 թ., որը նշանավորվեց զարմանալիորեն կատարյալ մաշտոցյան այբուբենի ստեղծումով<sup>19</sup>: Ցանկացած ժողովորդի զարգացածության և մշակույթի հարստության ցուցիչներից մեկն էլ սեփական լեզվով գիրն է, դրա սկզբնավորման ու գործառության վաղեմությունը:

## **ԳՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅՑԻՆ ՆՇԱՆԱՎԿՈՒԹՅՈՒՆԸ**

Մշակութաբանությունը շատ է կարևորում գրի նշանակությունը՝ նկատի ունենալով նրա անփոխարինելի դերը հատկապես հասարակության առաջընթացի առումով։ Դրա դրսևորումներից մեկն էլ մարդկության զարգացման էտապների պարբերացումն է ըստ ամերիկացի գիտնական Լ. Մորգանի։ Նա, մասնավորաբար, մարդկության զարգացման առաջին շրջանն անվանում է վայրենություն, որի ավարտը նշանավորվում է բրուտագործության ձևավորմանը։ Երկրորդ շրջանի (բարբարոսություն) ավարտը նշանավորող իրադարձություն է համարում գրի գյուտը։ Դասկանալի է, որ դրանով միաժամանակ նաև երրորդ շրջանի (բաղաքակրթություն) սկիզբն է նշանավորվում։ Անկախ մարդկության մշակութաստեղծ գործունեության պարբերացման (վայրենություն, բարբարոսություն, քաղաքակրթություն) և հայտնի գիտնականի կողմից դրանց տրված բնութագիր–անվանումների վիճարկելիությունից (մարդուն միշտ էլ բնորոշ են եղել և են վայրենու վարքագիծը, բարբարոսությունը և այլն<sup>20</sup>)՝ մի բան անառակելի է. դա մշակույթի համար գրի շրջադարձային նշանակության ճշշտ դիտարկումն է։

Խոսքի ձևավորումը մարդու մշակութաստեղծ գործունեության կարևորագույն արդյունքն էր։ Այն հրաշալիորեն ծառայում էր մարդկանց ինչպես մշակութաստեղծ գործունեության մեջ, այնպես էլ կենսական բոլոր հանգամանքներում, անփոխարինելիորեն նպաստում մարդ տեսակի ձևավորմանը։ Սակայն դարձ դարի վրա հարստացող մշակութային դաշտը հայտածեց բանավոր խոսքի էական պակասությունը։ այն ժամանակի մեջ պահպանվող չէր։ Բանավոր խոսքով փոխանցվող մշակութային հարստության գգալի մասը դատապարտված էր մասնակի կամ ամբողջական նոռացության, անցանկալի փոփոխությունների։ Մի խոսքով՝ ակնհայտ դարձավ, որ բանավոր խոսքը չէր կարող մեկընդիշտ լիարժեքորեն բավարարել մարդու բազմազան գոր-

ծունեությանը և շրջակա աշխարհի ճանաչողությանը վերաբերող տեղեկությունների համապարփակ ընդգրկման, պահպանման և ժառանգորդման պահանջնունքը:

**Մարդու ակտիվացող և ծավալվող մշակութաստեղծ գործունեությունը հանգեցրեց խոսքի մեջ կուտակված տեղեկությունները ժամանակ և տարածություն հաղթահարելով անխախտ պահպանելու անհրաժեշտության գիտակցմանը: Դրա արդյունքում գտնվեց մշակութային հասունացած հերթական խնդրի լուծումը՝ գիրը:**

Ընդհանրապես հնարավոր չէ շատ թե քիչ զարգացած որևէ մշակույթ, առավել ևս՝ քաղաքակրթություն՝ առանց գրի: Մարդու մշակութաստեղծ գործունեությունը հենց նախնական շրջանում արդեն իսկ կիայտնվեր անհույս մի շրջապտույտի կամ տեղապտույտի մեջ, եթե չստեղծվեր գիրը: Իսկ գրի հայտնությանը մշակույթը ոչ միայն հետագա զարգացման հնարավորություն ստացավ: Շատ կարևոր է նաև իմանալը, որ մարդու մշակութաստեղծ գործունեության և տարածական, և խորքային (բարդացող) ծավալմանը, միավոր ժամանակում արդյունավետության ավելացմանը նպաստելու առումով ոչինչ չի կարող համեմատվել գրի հետ: Իհարկե կամ, հայտնի են բազմաթիվ ձեռքբերումներ, որոնք նպաստել են մշակույթի ծավալմանը (օրինակ՝ աշխատանքային գործիքները, գենքերը, մշակաբույսերի սելեկցիան, կենդանիների ընտանեցումը, անիվի գյուտը և այլն), նույնիսկ հեղափոխական նշանակություն են ունեցել (մարդու նստակյաց կենսագործունեությունը, գրատպությունը, գիտատեխնիկական առաջընթացը), բայց դրանցից ոչ մեկը չի կարող համեմատվել գրի հետ:

Առանց գրի հնարավոր չէին լինի ոչ միայն հոգևոր ու նյութական մշակույթի զարգացումն ու առաջընթացը, այլև մարդկության սոցիալական կյանքի կազմակերպման կատարելագործումը, որը սովորաբար անհրաժեշտ չափով չի կարևորվում: Առանց գրի հազիվ թե հնարավոր լինեին տոհմերից ցեղերի, վերջիններից՝ ժողովուրդների կազմավորումը, նրանց հիշողության

կազմակերպումը, նկարագրի ձևավորումը, կառավարման կազմակերպական մարմինների ստեղծումը և այլն: Ասել է թե՝ գրի մասին խոսելիս չպիտի սահմանափակվել մշակույթի միայն առանձին ոլորտներ նկատի ունենալով: Անգամ հպանցիկ դիտարկումը հեշտությամբ կհամոզի, որ յուրաքանչյուր ժողովրդի հասարակական կեցության բազմազանությունը, հարստությունը, կենսամակարդակն ուղիղ համեմատական են իր գրավոր խոսքի ընդգրկած նյութի հարստությանն ու բազմազանությանը:

Չափազանց ընդարձակ ու կարևոր է գրի մշակութային նշանակությունը: Այդ համակարգում չի կարող անտեսվել նրա կարևորագույն նշանակությունը համազգային գրական լեզվի կայացման գործընթացում: Մշակութային մի խումբ գործոններից թերևս ավելի կարևոր է հենց ազգային գրի և միասնական (համազգային) գրական լեզվի համախմբող նշանակությունը մանավանդ ազգապահպանման առումով<sup>7</sup>:

## ԳՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Գիրն անցել է հազարամյակների ճամապարհ: Այդ ընթացքում որոշակիացել ու ամրապնդվել են նրա մշակութային դերն ու անփոխարինելի նշանակությունը: Դընթացս հասարակական գիտակցության մեջ ամրակայել են գրին առնչվող բազմաթիվ իրողություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի ցույց են տալիս նրա հանրային ընկալման, հանրութեն արժենորման կերպը: Այս առումով ամենաուշագրավ ու խորիրդավոր իրողություններից մեկն էլ գրի նկատմամբ առկա ակնածալի վերաբերմունքն է, նրա նույնիսկ պաշտամունքային ընկալումը: Սա մշակութային ինքնատիպ իրողություն է, որին հարկ է լավատեղյակ լինել:

Նոր ժամանակների հատկապես եվրոպական մշակույթի նշանակալի ձեռքբերումներից մեկն էլ ազգաբնակչության համատարած գրագիտության իրագործումն էր: Դրա շնորհիվ գրավոր խոսքը մատչելի դարձավ բոլորին: Սա նոր ժամանակներում:

Մինչդեռ դրանից առաջ մարդկությունը թիկունքում հազարամյակների ակտիվ մշակութաստեղծ գործունեության փորձ ու տարածք էր ծևավորել հենց գրի նշանակալի մասնակցությամբ, սակայն ազգաբնակչության գերակշիռ մեծանասնության անմիտթար անգրագիտությամբ (բառիս բառացի՝ նախնական, ոչ բացասական իմաստով՝ առանց գիր գիտենալու – ան + գիր + ա + գետ + ություն): Այսինքն՝ անկախ հասարակության (տվյալ ժամանակաշրջանի չափանիշներով, իհարկե) մշակութային զարգացածության մակարդակից, այդ մշակությունը գրի անփոխարինելի նշանակությունից՝ գրով գործառելը տվյալ հանրության մի փոքր շերտի մասնագիտական կարողությունն էր, նույնիսկ նախանձելի ու արտոնյալ իրավունքը:

Դա արդեն իսկ լիարժեք իմք էր, որ թե՛ անգրագետ մեծանասնության, թե՛ գրագետ փորբանասնության միջավայրերում առանձնահատուկ վերաբերմունք ծևավորվեր գրի ու գրագետ մարդկանց նկատմամբ: Անգրագետների հսկայական զանգվածի համար գիրը խորհրդավոր և իրենց անմատչելի այն բանալին էր, որով բացվում էր գրերում կուտակված ու իմաստնացնող շտեմարանը, որն ապահովում էր հասարակական ճանաչում ու հեղինակություն, անգամ ճանապարհ հարթում դեպի բարեկեցություն: Գրի և գրագիտության նկատմամբ թերևս այսպիսի վերաբերմունքի փորձով է ծնվել «Կարդա», որ մարդ դառնաս» կենսափորձային իմաստնությունը, որը լավ հայտնի է նաև մեր ազգային միջավայրում ու համոզիչ՝ մեր իսկ փորձով: Ընդ որում, պետք է ծիշտ հասկանալ այս ասույթի խորհուրդը, որն անվիճելի է: Դագարամյակների փորձը ցույց է տվել, որ գրագետ լինելու կարևորագույն իմաստ–հետևանքը Մարդ լինելն է, իսկ հարստությունն ու բարեկեցիկ կյանքն ածանցյալ են (նորմալ երկրներում հենց այդպես է): Այսինքն՝ բարձրագույն արժեքի՝ Մարդ լինելու առաջնահերթ փաստարկը ոչ թե հարստությունն է, այլ գրագիտությունը (բարի արդեն ժամանակակից ըմբռնմամբ), իմացականությունը, բարեկրթությունը:

Մյուս կողմից, գրագետ փոքրանամանությունն էլ ակտիվ էր գրագիտության սահմանափակության, անմատչելիության պահպանման, քան տարածման մեջ. դա հասարակության մեջ իրենց արտոնյալ վիճակի գրավականն էր: Պատմանշակութային հանգամանքների առաջ չմեղանչելու համար պետք է ասել նաև, որ եթե գրագիտության ոլորտի ներկայացուցիչներն անգամ շահագրգիռ էլ լինեին դրա հանրայնացման հարցում, միևնույն է, չէին հաջողելու. դեռևս չէին հասունացել այնպիսի հանգամանքներ, որոնց պարտադրանքով մասսայական գրագիտությունը հանրորեն գիտակցված և իրագործելի անհրաժեշտություն լիներ:

Ինչպես նշվեց, այդ հանգամանքները ձևավորվեցին նոր ժամանակներում կապիտալիստորեն զարգացող եվրոպական երկրներում: Ինչևէ, հասարակության գրագետ խավը, հանուն իր հեղինակության, հասարակական դերի կարևորության ընդգծման, ինքն էլ զգալիորեն խորհրդավոր, միստիկ մթնոլորտով էր պարուրում իր իմացության կարևորությունը: (Իմիջիայլոց, դա բնորոշ է ընդհանրապես բոլոր արիեստավորներին, պարզ ու բարդ մասնագիտությունների ներկայացուցիչներին): Դրան զգալի չափով նպաստել է նաև այն, որ դարեր շարունակ կրթության գործը և գիրը հիմնականում հոգևորական խավի ու կրոնական հաստատությունների մենաշնորհն են եղել: Խորհրդավորության, ծիսականության, անհմանալիության և միստիկ էլությանը առանձնացող կրոնական գործունեության ոլորտում լինելը ևս, զգալիորեն նրան սպասարկելը հասարակության աչքում գրին տվել է հավելյալ միստիկ նշանակություն:

Մասնավորաբար, հայտնի իրողություն է, որ շատ ժողովուրդներ (նաև հայերս. տե՛ս Մ. Խորենացի, Կորյուն մատենագիրների աշխատությունները) գրի ստեղծումը համարել են աստծո բարեհաճ մասնակցությամբ իրականացված գործ<sup>22</sup>: Յետևաբար այդ գրով կարելի էր գրառել սուրբ տեքստեր, առօրեականությունից բարձր բովանդակություն ունեցող նյութեր:

Վերևում արված դիտարկումների պահպանված վկայությունները բազմազան են: Խոսքային մակարդակում դա դրսեոր-

վել է իբրև գրի զորավոր, անկասելի ուժը վկայող արտահայտություն, առած-ասացվածք և այլն: Այսպես: Ըստ մեր՝ հայերիս աշխարհընկալման՝ յուրաքանչյուր մարդ ունի իր ճակատագիրը: Ճիշտ է, դա աչքի համար տեսանելի գիր չէ, բայց այն կարծեցյալ անխուսափելի կանխորոշվածությունն է, որին մեր լեզվամտածողությունը հարմար է համարել բնորոշել «գիր» բառով: Կամ, ասենք, ամենքիս հայտնի այս օրինակը: Մեզնից շատերը զարմանալի լրջությամբ են վերաբերվում մինչև հիմա պահպանված կախարդանք-մոգության մի տարբերակի, որն անվանվում է ոչ այլ կերպ, քան «թուղթ ու գիր անել» կամ հակառակը՝ «թուղթ ու գիրը քանդել»: Դավանաբար գիտեք նաև, որ այդ գործերի մասնագետին անվանում են գրբաց: Գրով, գրքով տարբեր ժողովուրդներ առ այսօր էլ իրականացնում են բազմաթիվ աշխարհիկ և կրոնական ծիսական արարողություններ: Եվ այլն, և այլն...

Այս ամենի մեջ ակնհայտ է, որ գրավոր խոսքն ընկալվել է իբրև բարձրագույն արժեք, հավաստի, անշրջանցելի և անփոփոխսելի կանխորոշվածություն և այլն:

## ԳԻՐՔԸ

Մշակութային այս արժեքը ճիշտ գնահատելու համար հարկ է ի մոտո, ըստ էության ծանոթանալ հայերեն **գիրք**<sup>23</sup> բառին: Այն հնուց ավանդված բառ է՝ կազմված մեզ արդեն ծանոթ գիր արմատից և գրաբարյան ք (–եր, –ներ) հոգնակիակերտ մասնիկից: **Գիրք** բառի գրաբարյան հնաստին համարժեք է ժամանակակից հայերենի գրեր բառը: Ուրեմն, ինչպես մեր նախնիները, նրանց հետևելով՝ նաև մենք, մեզ լավ ծանոթ մշակութային արտեֆակտը պետք է ընկալենք իբրև շատ գիր՝ գրեր: Այսինքն՝ առարկա, որը պարունակում է գրված բաներ (խոսք, միտք), շարադրանք, տեքստ և այլն: Սա «գիրք» առարկան անվանելու հրաշալիորեն ճգրիտ, բոլոր ժամանակների համար կիրառելի և անսխալական բնորոշում է: Անկախ գրքի արտադրության հա-

մար օգտագործվող նյութերի հարափոփոխ լինելուց, գրքի ծավալից, ձևից և այլնից՝ այն միշտ եղել է գրերի համախումբ, ամբողջություն։ Նույնիսկ մեր օրերում, որի ընթացքում ձևավորվել է գրքի մի նոր՝ էլեկտրոնային տարբերակ, որը շոշափելի, սեղանին դրվող, ձեռքով էջ առ էջ թերթվող չէ։ Ուրեմն, ըստ հնուց ի վեր մեր ընթանան, գիրքը գրված լինելու է, գրավոր խոսքը՝ անկախ նյութից, որի վրա և որով գրվել է, գրվածի ծավալից, գրի տեսակից, գրքարտադրության եղանակից և այլն։

**Գիրքը պատմականորեն ձևավորված մշակութային հոգևոր ու նյութական արժեք է՝ բազմազան տեղեկություններ, մտքեր ամրակայել–պահպանելու և ժամանակ ու տարածություն հաղթահարելով՝ գալիքին փոխանցելու համար։**

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ–ի 1964 թ. երաշխավորության՝ գիրքը որոշակի կառուցվածքով տպագրական ստեղծագործություն է՝ երեք տպագրական մանուլից (48 էջ) ոչ պակաս ծավալով։ Դասկանալի է, որ այս բնորոշումը վերաբերում է գրքի այն տարածված տարբերակին, որը կարող էր ստեղծվել տպագրական եղանակով։ Սակայն մինչ գրքի պատմականորեն ձևավորված տեսակներին անդրադառնալը՝ նշեմ մշակութային այդ արժեքին բնորոշ մի քանի էական իրողություն<sup>24</sup>։

Նախ՝ գիրքը հոգևոր արժեք է (բովանդակությունը, գեղարվեստական ձևավորումն և այլն), որը որոշակի նյութական առարկայացում (տեսանելի–շոշափելի է) ունի։ Ցանկացած մշակույթ, սկսած ծագումից և վերջացրած ձևաբովանդակային բաղադրիչներով, անպայման ազգային է։ Մշակույթի ամենաընդգրկուն կուտակիչը լեզուն է, որն առարկայանում է գրքի (գրավոր խոսքի) ձևով։ Հետևաբար ցանկացած գիրք ազգային արժեք է։ Որքան էլ նրա բովանդակությունը նույնիսկ համամարդկային լինի, թվացյալ ապագային կամ վերագգային (ասենք՝ բնագիտական բովանդակության), միևնույն է, իր լեզվով, մարդկային գործունեության տվյալ բնագավառում արձանագրված ներդրմանը արդեն իսկ ազգային է։ Գիրքն ազգային մշակույթի արժեք է, կուտակում է աշխարհի ճանաչողության ազգային փորձ և հայացք, ազ-

գի ինքնաճանաչողության ու ինքնագնահատականի նույնիսկ հազարամյակների նյութը: Դրանով այն դառնում է ազգապահպան կովան թե՝ հզոր, թե՝ բույլ ազգերի համար:

**Ինչպիսին տվյալ ժողովրդի մշակույթի բովանդակությունն ու ոգին է, այնպիսին էլ՝ նրա գրավոր խոսքինը՝ գործինը:**

Գրքի համանարդկային նշանակությունը պայմանավորված է տվյալ ժամանակաշրջանի հոգևոր և նյութական պահանջմունքների բովանդակությամբ: Ազգայինը որքան խորն է իր փորձի բազմազանությամբ և դրան համարժեք իմաստավորմամբ, այնքան հավանական է նրա երկխոսությունն այլ ազգերի մշակույթների հետ: Պարզ է, որ դա էլ չի կարող իրականացն ինքնահոսի: Այդ գործում կարևոր նշանակություն ունեն տվյալ ժողովրդի իշխանության շահագրգոռությունը, իրականացրած մշակութային քաղաքականությունը:

Ըստ բովանդակության՝ գիրքը կարող է լինել գիտական, գրական-գեղարվեստական, ուսուցողական-հանրամատչելի, վավերագրական-փաստագրական և այլն:

Գիրք ստեղծելու համար մարդու օգտագործած նյութը դարերի ընթացքում փոխվել է: Յասարակության տնտեսական զարգացման մակարդակն իրենով որոշակիացրել է գրքարտադրության տեխնիկան, նյութերն ու ձևերը: Ըստ դրա էլ կայունացել են գրքի ձևավորման ավանդությները: Դրա համար էլ դժվար չէ գրքի միջոցով պատկերացում կազմել ժամանակի տեխնիկական զարգացման, գեղագիտական կողմնորոշչչների, ոճի և այլին մասին: Թիշ չեն դեպքերը, երբ գրքի գեղարվեստական ձևավորումն այնքան է կարևորվել, որ այն դարձել է նշանակալի հոգևոր արժեք: Ասենք, թեկուզ մեր մագաղաթյա մատյաններում պահպանվող անգնահատելի մանրանկարները:

Ցանկացած գրքի բնորոշ է որոշակի կառուցվածք՝ ծավալ, մասերի բաժանվածություն և այլն: Գրքերն իրարից տարբերվում են նաև իրենց նպատակառողվածությամբ. բոլոր գրքերը չեն, որ հավասարապես վերաբերում են ամենքին:

Գրքի բովանդակության նկատմամբ սպառողական պահանջարկը հնարավոր է դարձնում նրա տարածման հիմնական ձևերից մեկը դարձնել վաճառքը: Հնուց անտի ձևավորվել են գրքի տարածման, մասսայականացման նաև այլ ձևեր՝ գրադարաններ, նվիրատվություն, փոխանակություն և այլն: **Գրքի բովանդակությունն իր ձևից անկախ և ինքնակա գոյություն**<sup>25</sup>. յուրաքանչյուր գրքի ամենաէական տարրերակիչ հատկանիշը բովանդակությունն է: Գիրքը հոգևոր և նյութական արժեքների միասնության լավագույն դրսևորումներից մեկն է, տվյալ մշակույթի ամենաընդգրկուն հանրագիտարանը:

## **ԳՐՔԻ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԽԱՂԱՏԸ**

Բոլոր քաղաքակիրթ ժողովուրդներն էլ մշակութային զարգացման ինչ-որ մակարդակում անպայման հանգում են գրքի անհրաժեշտության գիտակցմանը: Գիրքն անշրջանցելի արժեք է, ազգի քաղաքակրթվածության չափանիշներից, մշակույթի հետագա զարգացման կարևորագույն և անհրաժեշտ պայման: Այդ արժեքով և նրա նկատմամբ ակնածանքով է կրթվել իմ սերունդը: Այդ ժամանակ գիրքն ուներ հանրութեն ընդունված և պետականորեն ամրակայված արժեքի հեղինակություն: Մի բան, որն այժմ, ցավոք, գրեթե բացակայում է: Դրանից գիրքը չի տուժում. անպայման տուժում են այն պետությունը, ժողովուրդը, որոնք անտեսում են իրենց ծառայելուն պատրաստական այդ մեծ արժեքը: Գիրքը մեռած կապիտալի վերածնելը կամ հասարակական արհամարհանքի առարկա դարձնելը հավասար է ինքնառչնչացման, խարակիրիի: Բայց եթե վերջինիս մեջ ընդգծված դրսևորվել է ինքնառողության գնացողի արժանապատվությունը, ապա գրքի նկատմամբ արհամարհական վերաբերմունքն արժանապատվությունից գուրկ ինքնասպանություն է՝ ուրիշներին ծուլվել-վերանալու անխուսափելի հեռանկարով<sup>26</sup>:

Մարդկության պատմական փորձը ևս դա է ցույց տալիս: Թշնամի ժողովուրդները կոնֆլիկտային իրավիճակներում իրենց պատժիչ գործողություններում երբեք չեն անտեսել հակառակորդի ազգային գրականությունը<sup>27</sup> ոչնչացնելու անհրաժեշտությունը: Նրանք շատ լավ գիտակցել են (կարո՞ղ եք պատկերացնել՝ նույնիսկ վանդալները՝ գիր ու գրականություն չունեցող մոնողուները, թուրքերը), որ դա ցանկացած ժողովրդի կարող է գրկել ազգային ինքնագիտակցությունից և վերածել հլու-հնազանդ բանող մեքենաների: Չե՞ որ պետականությունը կորցրած ժողովրդի համար ազգային լեզվով ստեղծված գրականության ոչնչացումից ավելի կործանարար կարող են լինել միայն ֆիզիկական ոչնչացումը և մայրենի լեզվի կորուստը:

Քաղաքակիրթ նվաճողներն իրագործել են իրենց հնազանդեցնելու, ծոլելու ավելի շրջահայաց մշակութային քաղաքականություն: Դա նվաճված ժողովրդի գրականությունը յուրացնելով (իրենց գրադարանների պարունակության հարստացում), թարգմանելով և անհրաժեշտը նրանցից փոխառելով՝ ավելի հզոր մշակույթ ստեղծելն է, հարատև ու անհաղթահարելի կախվածությունների մեջ պահելը: Դրան ընդդիմանալը, հակակշիր քայլեր ամելն ավելի ոժվար է և պահանջում է սեփական մշակույթը հզորացնող տևական ջանքեր:

Կան տվյալ հանրության միջավայրում գրքի հասարակական հեղինակության նաև շատ ակնհայտ, հեշտությամբ նկատելի ցուցիչներ: Մասնավորաբար գրադարանների, ընթերցասրահների, գրախանությների քանակը, պարունակությունը, այդ հաստատություններ հաճախողների քանակը և այլն: Մի խոսքով՝ ազգաբնակչության ընթերցասիրությունը: Երբ հասարակության մեջ իրականացվում է գրքի հեղինակությունն անրակայող պետական շահագրգիռ քաղաքականություն, ապա արդյունքն էլ իրեն երկար սպասել չի տալիս:

Դրանում կարելի է համոզվել ժամանակով մեզնից ոչ այնքան հեռու խորհրդային իրականության փորձով<sup>28</sup>: Այն բազմաթիվ մերժելի իրողություններով, հանիրավի ծավալված համապե-

տական ողբերգություններով կառուցված երկիր էր: Բացի այդ՝ հսկայածավալ տարածքը բնակեցնող ժողովուրդներն աննկարգրելի կորուստներ էին տվել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և դրան հաջորդած քաղաքացիական կրիվների ժամանակ (1914–1922): Դետն էլ՝ խորհրդային երկրի ժողովուրդներն առավելապես ասիական–միջնադարյան հետամնաց կենսակերպի ու մտածողության կրողներ էին: Սակայն, այս ամենով հանդերձ, պետական ծիշտ քաղաքականության շնորհիվ ընդամենը մեկ-երկու տասնամյակի ընթացքում համատարած գրագիտությունը դարձավ իրողություն, ընթերցասիրությունը՝ հասարակության դեմք-դիմագօծի կարևորագույն բնութագրերից, իսկ տնտեսությունը՝ աշխարհի ամենաարագ տենակերով զարգացողներից մեկը: Երկրի ազգաբնակչությունը տարին տարվա վրա շոշափելիորեն զգում էր իր կենսամակարդակի բարելավումը:

Իհարկե, գրքի հարգմ ու կշիռն իմացող հասարակություններին ու ժողովուրդներին բնորոշ են եղել ժամանակին տուրք տալու նաև ձևական դրսնորումներ: Օրինակ՝ խորհրդային տարիներին ձևավորվեց մասնավոր գրադարանների և գրքերի ժողովածուների հսկայական քանակ, որն ըստ Էության չէր օգտագործվում: Դա գրագետ և ընթերցասեր լինելու ձևական դրսնորում էր: Սակայն դրանում չպիտի անտեսել մի կարևոր բան. դա պատճառ չէր, հետևանք էր: Դա ցույց էր տալիս, որ այդ հասարակության համար գիրքը, գրավոր խոսքը, ուսյալ լինելը և անձնական գրադարան ունենալը հասարակայնորեն գնահատելի արժեք է: Այդ հասարակությունում ակտիվորեն աշխատում էր գրքարտադրությունը՝ ապահովելու համար հսկայական պահանջարկը: Գրախանութեներում հերթերն ու բաժանորդագրությունները երբեք չէին պակասում, շատ դեպքերում հնարավոր չէր գիրք ձեռք բերել առանց ծանօթ-բարեկամի, սպեկույատիվ գին վճարելու: Այդ հարածուն պահանջարկի և առատ արտադրության շնորհիվ է, որ այսօր Երևանի բազմաթիվ գետնանցումները և այգիները լի են հին գրքերի վաճառակետերով:

Գուցե մի քիչ էլ երկարած այս գրուցը ցանկանում եմ ամփոփել հետևյալ նկատառումներով: Չեմ ուզում տպավորություն ստեղծվի, թե իմ ասածը հենց միայն գրատպության մասին է: Այժմ գուցե նույնիսկ ավելի բազմազան և վերահսկողությունից ազատ, որակյալ գրականություն է տպագրվում: Խոսքս հասրակության կենսագործումներության մեջ գորի նշանակության ու չափաբաժնի մասին է: Կամ ընթերցասիրության մասին խոսելով՝ բոլորովին էլ չեմ կարծում, թե ամենքը, բան ու գործ թողած, գիշեր-ցերեկը մեկ արած, պետք է երջանկանան միայն կարդալով: Բոլորովին: Յուրաքանչյուրը նախ իր գործը պիտի անի: *Ուղղակի պետք է որոշակիորեն գիտակցել, որ գորի պատշաճ հեղինակությամբ գործառող հանրության մեջ բացառվում է գրի սևն ու սպիտակը չիմացող կիսագրագետի նախանձելիորեն բարեկեցիկ կյանքը: Այդպիսիներին երբեք չի հաջողվում դառնալ հասարակության մեջ վճռորոշ նշանակություն ունեցող, ընդօրինակելի կենսակերպի, նկարագրի կրող:*

Պետական և մասնավոր հսկայական միջոցներ են ծախսվում, մարդկային կարողություններ, իմացություն, ժամանակ ու ջանք է ներդրվում գրքարտադրության ոլորտում: Թվում է՝ այդ ամենը նյութական բարիքների արտադրության մեջ ներդնելու դեպքում մարդկանց կենսամակարդակը կարող է նկատելի դրական տեղաշարժ ունենալ: Միգուցե: Բայց գրքարտադրության հաշվին նույնիսկ հնարավոր այդ բարեկեցությունը չի կարող երկար տևել<sup>29</sup>:

Միով բանիվ՝ գրքարտադրությունը մշակութաստեղծ մարդու մշտական և լրջագույն գրաղնունքներից մեկն է եղել, և և լինելու է: Եթե դա անիմաստ և անպտուղ նվիրում լիներ, չարդարացներ ու չհատուցեր իր կլանած միջոցներն ու ջանքերը, վաղուց սպառած կլիներ իր նկատմամբ հետաքրքրությունն ու պահանջարկը, մնացած կլիներ պատմական անցյալի փոշոտ արխիվներում: Բայց այդպես չէ: Նույնիսկ ավելին: Պատմության փոշոտ արխիվներում մնալ-մոռացվելուն են իրենց դատապարտուն այն ժողովուրդները, ովքեր լուրջ չեն վերաբերվում գորի մշա-

կութային նշանակությանը, նրա նվիրյալ գրող և գիտնական մարդկանց: Դրանում անմնացորդ համոզվելու համար խորհուրդ կտայի կարդալ 1916 թ., բայց կարծես մեր օրերի համար Յովի Թունանյանի գրած «Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի» հոդվածը:

## **ԳՐՔԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՐԵՆ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Գիրքը հազարամյակների կյանք ու կենսագրություն ունի: Դա ձևավորման, փոփոխությունների երկար ու արդյունավետ ճանապարհ է: Այդ ընթացքում յուրաքանչյուր մշակութային միջավայր ձևավորել է գրքի և բովանդակության, և նյութական-առարկայական տեսքի, և արտադրական գործընթացի որոշակիորեն տարբերակիչ յուրահատկություններ: Դա միշտ էլ պայմանավորված է եղել տվյալ ազգի տնտեսական զարգացման մակարդակով, հանրային կյանքի կազմակերպման ձևերով ու սկզբունքներով, արժեհամակարգային գերակայություններով ու ավանդույթներով և, որը ոչ պակաս կարևոր է, այդ նպատակով օգտագործելու համար ձեռքի տակ ունեցած բնական նյութերով:

Ելենով գոյության երկարատև ժամանակաշրջանում ակնհայտ դարձած հանգամանքներից՝ կարելի է գիրքը տեսակավորել ըստ պատմականորեն ձևավորված որոշ գործոնների: Մասնավորաբար, ըստ գրքարտադրության նպատակով օգտագործված նյութերի (ըստ գրքարտադրության նյութերի), ըստ գրքի տեքստն արձանագրելու (կայացնելու) ձևերի (ըստ ձեռագիր թե տպագիր լինելու), ըստ բովանդակության և այլն, և այլն:

### **ԳՐՔԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՆՏ ԳՐՔԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ**

Գրքի տեսակավորման այս սկզբունքի հիմքում այն նյութերն են, որոնք օգտագործվել են գիրք արտադրելու համար: Իսկ դրանք շատ են, բազմազան: Բոլոր ազգերի համար, անկախ իրենց զբաղեցրած կենսատարածքից, գրքի ստեղծման երկու կարևոր կողմնորոշիչ սկզբունքներ են եղել.

ա) գրքի համար օգտագործվող նյութը պետք է հնարավորինս մատչելի լիներ.

բ) գրքի համար օգտագործվող նյութը պետք է ժամանակի քայլայիշ ներգործությանը դիմանար, որովհետև գիրքը գրվում էր նաև գալիքի համար:

Ահա այս նկատառումներից ելնելով՝ մեզնից դեռևս վեց-յոթ հազար տարի առաջ մարդն սկսել է գրքեր գրել՝ օգտագործելով քարը, կավը, պապիրուսը, փայտը, տարբեր մետաղներ, թուղթը և այլ նյութեր: Այժմ բավականին տարածված է գրքի մի նոր՝ ելեկտրոնային տեսակը՝ տարբեր կրիչներով:

\* \* \*

Թերևս Միջագետքին էր վերապահված գրքի առաջին տեսակի գյուտը: Դա շումերական *կավե սալիկմ*<sup>30</sup> է: Սա աշխարհի այն տարածաշրջանն է, որտեղ ամենամատչելի շինանյութից՝ կավից, պատրաստել ու կառուցել են կենցաղային առարկաներից մինչև հսկայական չափերի անարդիկ ամրոցներ, բուրգեր, հնարամիտ ու ինքնօրինակ լուծումներով շինություններ, ամբողջ բնակավայրեր (Բաբելոն և այլն): Ահա այս տարածաշրջանում է, որ կավը դառնում է նաև գրքարտադրության նյութ՝ դարերի ընթացքում ձևավորելով գրադարանային հսկայական հարստություն: Այդ գրքերն ընդունված է անվանել կավե սալիկներ: Մրանց պատրաստումը եղել է աշխատատար և անպայման համապատասխան մասնագիտական հմտություն պահանջող: Սակայն դեռևս չքրծված կամ արևի տակ չչորացված կավի վրա խազելով գրելը շատ ավելի հեշտ է եղել, քան քարի վրա: Այդ փափուկ հումքը թույլ էր տալիս վերանայել-ուղղել շարադրանքը՝ հարթեցնելով սալիկի մակերեսը և նորից գրելով: Մեզ հասած օրինակներից երևում է, որ կավե սալիկ-գրքերը եղել են տարբեր չափերի՝ հիմնականում ուղղանկյուն, թրծված կամ արևի տակ չորացված:

Կավե գրքերի բովանդակությունը նույնքան բազմազան է եղել, որքան մշակութաստեղծման մեջ ակտիվ ու ժրաջան շումերների կենսագործումներունը: Յնագետների հայտնաբերածը

հավանաբար չնշին մասն է ժամանակին ստեղծված այդ հարուստ գրականության, բայց, միևնույնն է, այն շատ տպավորիչ է իր պարունակած գիտագործնական, գեղարվեստական, պաշտամունքային, աշխարհաճանաչողության ինքնօրինակ բովանդակությամբ ու տեղեկություններով։ Կավե սալիկները տեղափոխելը, կուտակել-պահպանելը, ըստ բովանդակության խնբավորելը թեև աշխատատար, բայց միանգամայն հնարավոր գործ էր։ Եվ պատահական չէ, որ աշխարհի ամենահայտնի, ժամանակին հռչակված և իրենց ընդգրկած նյութի հարստությամբ այժմ էլ զարմանք ու հիացմունք հարուցող գրադարաններ են ծևավորվել կավե սալիկներով։ Դրանցից մեկն էլ եղել է Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի գրադարանը, որտեղ կուտակված գրականությունը հաշվվել է տասնյակ հազարներով։

\* \* \*

*Քարի* վրա գրելը շատ տարածված է եղել Եգիպտոսում, Մերձավոր Արևելքում, Փոքր Ասիայում, Հայկական և Իրանական բարձրավանդակներում, Կենտրոնական Ամերիկայում, ընդհանրապես՝ հնագույն ժողովուրդների մշակույթում։ Դա բավական աշխատատար գործ է եղել, որը, սակայն, մի առանձին հետևողականությամբ ու նախանձախնդրությամբ են իրականացրել մնացող-պահպանվող գրի արժեքն իմացող արքաներից մինչև քարիատ-փորագրիչ վարպետները։ Հայաստանը նույնական հայտնի է քարի վրա փորագրությամբ ստեղծված գրքերի առատությամբ։ Դրանք բազմազան տեղեկություններ են պարունակում հնագույն և իին ժամանակների անցուդարձի, հավատալիքների, մարդկանց տնտեսական ու հոգևոր գործունեության վերաբերյալ։ Թեև այդպիսի գրքի ստեղծումը բավական դժվար և աշխատատար (Բեհիսթունի հսկայական արձանագրությունը, դամբարանների և այլ շինությունների պատերին եգիպտացիների, շատ ժողովուրդների վիճագիր տեքստերը և այլն), բայց լիովին փոխհատուցված և ինաստավորված գործունեություն էր թե՛ իրենց, թե՛ հետագա բոլոր ժամանակների համար։

Մի հետաքրքիր դիտարկում ևս. դարերի մեջ գրքարտադրության տեխնիկան անընդհատ կատարելագործվել, արդյունավետությունը բարձրացել է, սակայն առ այսօր էլ գրքի տեսակներից այս մեկը եղել և մնում է ժամանակի ընթացքում հնարավոր բազմազան ներգործություններին ամենից լավ դիմացողը: Դասկանալի պատճառներով քարե գրքերով գրադարաններ ձևավորելը կլիներ դժվարին գործ: Այդ գրքերի մեծ մասն առ այսօր էլ մնում է իր ստեղծման տեղում՝ բացօթյա՝ աշխարհով մեկ սփոված:

\* \* \*

Համաշխարհային մշակույթին հայտնի հաջորդ գրանյութը պապիրուսն է: Նրա գյուտարարը և գործածության մեջ դնողը եղիպտացիներն են: Պապիրուսը պատրաստվել է Նեղոսի ափերին առատորեն աճող համանուն բույսի ծուծքի մանրակրկիտ մշակումով: Արդյունքում ստացվել են թղթի նմանվող, տարբեր երկարությամբ և լայնությամբ շերտեր, որոնց վրա արդեն ոչ թե փորագրել, այլ գրել են ներկով: Պապիրուսը չուներ քարի կամ կավե սալիկի ամրությունը և պահպանվելու համար ավելի մեծ ուշադրություն ու խնամք էր պահանջում: Սակայն, դրա փոխարեն, փաթեթի ձև ունեցող պապիրուսն գրքերն ավելի թերև էին, հեշտությամբ տեղափոխվող, քիչ տեղ զբաղեցնող (ոյուրակիր<sup>31</sup>):

Պապիրուսը նոր հնարավորություն էր գրավոր խոսքի ակտիվ օպարացման, գրքարտադրության նորովի ծավալման համար: Այն արագորեն տարածվեց և օգտագործվեց նաև Եվրոպական մշակույթում (օրինակ՝ հունական) և երկար ժամանակ ամենագործածական, պահանջարկ ունեցող գրանյութն էր: Պապիրուսի վրա շարադրված գրականության համաշխարհային նշանակության մասին կարելի է պատկերացում կազմել հենց միայն ծանոթանալով Ալեքսանդրիայի գրադարանի վերաբերյալ պահպանված պատմական փաստերին: Պապիրուսի փաթեթ գրքերի քանակն այստեղ հաշվում էր արդեն ոչ թե տասնյակ, այլ հարյուր հազարներով: Դա շատ խոսուն փաստ է ոչ միայն Ալեքսանդրիայի գրադարանի հարստության առումով: Մշակու-

թարանության տեսակետից փաստը հատկանշական է նաև մարդկության մշակութաստեղծ գործունեության, իմացության, հետաքրքրությունների ծավալման առումով։ գրադարանային ֆոնդի հարստությունը դրա ուղղակի ցուցիչն է։ Նույնիսկ ժամանակակից գրադարանների պարունակության համեմատությամբ գոքի նման պատկառելի քանակն անգնահատելի հարստություն էր հատկապես բովանդակության առումով։ Պատահական չէ, որ նվաճողական պատերազմների, հեղափոխությունների, հասարակության առաջնորդող գաղափարախոսական կտրուկ վոփոխությունների ժամանակ հաղթողները երբեք չեն անտեսում գրադարաններում կուտակված գրավոր հարստությունը և հաճախ ոչնչացնում են ամսխայորեն (վկա՝ Ալեքսանդրիայի գրադարանի ճակատագիրը)։ Այդ վանդալներին կարելի է հասկանալ։ Գիրքը մի ճշմարտություն ունի, որն անփոփոխելի է. դա իր բովանդակությունն է։ Այս կամ ընդունելի է, կամ մերժելի։ Բոլոր խնդիրները միանգամից և մեկընդմիշտ լուծող մերժման կտրուկ ձևը գոքի ոչնչացումն է։ Դրա միջոցով ոչնչացվել են նաև տվյալ գրականությամբ ներկայացող ժողովրդի, մշակույթի հիշողությունն ու ազգային ինքնագիտակցությունը։

\* \* \*

Գոքի հաջորդ տեսակի միջազգային համբավը ձևավորվեց ու ծավալվեց միջնադարում։ Խոսքս, ի տարբերություն կավե սալիկի և պապիրուսի, մեզ լավ հայտնի **մագաղաթի** մասին է։ Ասորական ծագում ունեցող, բայց մեզ հարազատ այս բառով նշանակված առարկան աշխարհին հայտնի է **պերգամենտ** տարբերակով։ Գրանցութի անվան այս վերջին ձևի հիմքը Փոքր Ասիայի համանուն քաղաքն է (Պերգամոն), որտեղից սկսվել է մագաղաթի միջազգային հաղթարշավը։ Որպես գրանցութ՝ մագաղաթն Արևելքի ժողովուրդներին հայտնի է եղել դեռևս անտիկ ժամանակներում։ Սակայն Պերգամոնում կենդանիների կաշվի մշակումով ստացված տարբերակը շատ պես է որակյալ էր։ Դրա շնորհիվ այն գործածությունից դուրս մղեց պապիրուսին։ Մագաղաթի հիմնական առավելություններից էին բազմակի օգտա-

գործնամ հնարավորությունը, ճկունությունը, մեզ քաջածանոթ գրքի ձև (կազմ, բազմաթիվ էջեր, բացվող և փակվող ուղղանկյուն-քառակուսի կառուցվածք և այլն) ստանալու հարմարավետությունը և այլն:

Մագաղաթ պատրաստելը հեշտ գործ չի եղել. այն տարբեր գործիքներով և քիմիական զանազան նյութերով տևականորեն մշակելու մասնագիտական հմտություններ է պահանջել: Արդյունքը միանգամայն փոխատուցում էր գործադրված ջանքերը: Վկան՝ միջնադարում Ասիայի և Եվրոպայի ակտիվ մշակութաստեղծ ժողովուրդների ստեղծած հսկայական ժառանգությունը: Այդ թվում՝ նաև հայերիս: Մագաղաթե գիրքն արդեն միանգամայն այլ արժեք էր, արդյունք ոչ միայն գրավոր տեքստի հեղինակի (գիտնական, ստեղծագործող, գործնական ինչ-որ մասնագիտության ներկայացուցիչ (բժիշկ, իրավաբան, կառավարիչ ...) և այլն), այլ նաև կաշեգործի, նկարիչ-ծաղկողի, կազմը պատրաստող զարդագործի և այլն: Ուստի մագաղաթյա գիրքն ուսումնասիրության շատ ավելի բազմազան նյութ է (ոչ միայն բովանդակությունը), քան գրքի նախորդ տարբերակները: Գրքարտադրության ակտիվացումն ընդարձակեց կրթօջախների, գրադարանային և գրապահոցային ցանցերը: Միայն պատկերացնել կարելի է գրքերի այն անհաշվելի քանակը, որից մեզ հասածն ընդամենը մնացորդն է տարբեր պատճառներով (պատերազմ, գաղափարական պայքար, աղետներ, խնամքի պակաս և այլն) եղած կորստից հետո:

\* \* \*

Ահա և հասավ պահը ներկայացնելու գրքարտադրության համար օգտագործված և օգտագործվող այն նյութը, որն ամենքիս լավ հայտնի է: Դասկանալի է, որ խոսքը **թղթի** մասին է: Մեր ժամանակների գիրքը թղթի տարբեր տեսակներից է: Գրքարտադրության մեջ թղթի օգտագործումն սկսվել է միջին դարերի վերջից և նոր ժամանակների սկզբից: Բայց դա չի նշանակում, որ թուղթը մինչ այդ մարդկությանը հայտնի չի եղել: Ինչպես բազմաթիվ գյուտեր ու նորարարություններ<sup>32</sup>, թուղթը ևս չինական

ծագում ունի (դեռևս մեր թվականության սկզբին): Այնուհետև թղթի տնայնագործական արտադրությունն աստիճանաբար տարածվել է և Ասիայի, և Եվրոպայի երկրներում: Ժամանակի ընթացքում թղթարտադրությունը կատարելագործվեց և ֆաբրիկային ու գործարանային մասշտաբների հասնելով՝ թուղթը դարձրեց գրքարտադրության հիմնական նյութը: Թղթի արտադրության այդպիսի ծավալումը, հասկանալի է, պայմանավորված չեր միայն գրքարտադրության պահանջարկով: Դուք ել լավ գիտեք, որ թուղթը մեծ պահանջարկ ունի շինարարականից մինչև կենցաղային կիրառության բազմաթիվ ոլորտներում: Սակայն մանավանդ գրքարտադրության մեջ այն դարձավ անփոխարինելի նյութ, որովհետև նոր ժամանակներում (ագրարայինից արդյունաբերական տնտեսավարման (ֆեռագիզմից կապիտալիզմի) անցում, լուսավորության տարածում և այլն) գործի բանակի նկատմամբ հասարակական պահանջմունքն այլևս հնարավոր չեր բավարարել մինչ այդ օգտագործված որևէ այլ նյութով: Մյուս կողմից ել թուղթը շատ համապատասխան նյութ էր ծեռագիր գրքից մեքենայական արտադրության (տպագիր) գործի անցման համար:

Իրեն գրանյութ՝ թուղթը, իհարկե, ամենադիմացկուններից չէ: Այն հեշտությամբ ոչնչանում է ջերմության, խոնավության, ուտիժների և այլ կարգի ներգործություններից, մարդու անգայույշ, անխնա վերաբերմունքից: Թղթի արտադրության ծավալների ավելացումը տեղի է ունենում աշխարհի անտառների (երկրագնդի թոքերը) հաշվին, որը մոլորակի բնապահպանական վիճակի վատքարացման պատճառներից մեկն է: Սակայն թղթից ստեղծված գիրքն անհամենատ թեթև է, հեշտությամբ տեղափոխվող, վերարտադրվող, օգտագործվող և այլն: Գոնե այսօրվա դրությամբ չի ստեղծվել որևէ այլ նյութ, որը կկարողանա արտադրական ծավալներով փոխարինել թղթին:

\* \* \*

Վերջին տասնամյակներում օրավուր ծավալվում է գրքարտադրության (գործի ստեղծման) մի նոր, ժամանակակից տարրե-

րակ, որն ընդունված է անվանել **Էլեկտրոնային-համակարգչային**: Այստեղ օգտագործվող նյութերն ու միջոցները զգալիորեն տարբեր են ավանդականներից: Սա գրքի ստեղծման, հեղինակ-ընթերցող կապի և անմիջականության, և արագության իմաստով համապատասխանում է մեր ժամանակների կյանքի արագությանը: Գրքի ստեղծման և մասսայականացման այդ ձևը շրջանցում է խմբագրական-հրատարակչական-արտադրական որոշ գործընթացներ: Համակարգչային-էլեկտրոնային գիրքը ստեղծվելուց և համապատասխան ցանցի մեջ տեղադրվելուց անմիջապես հետո, ըստ էռթյան, մատչելի է դառնում աշխարհի ցանկացած մասի ընթերցողի, ով միայն համապատասխան լեզվի խնդիր չունի: Էլեկտրոնային գիրքը հեշտությամբ մատչելի է ոչ միայն համացանցի, նաև էլեկտրոնային կրիչների (այսինքն՝ դյուրակիր և այլն) միջոցով, որի ստեղծումը և տարածումը ևս անհամեմատ ավելի հեշտ, պակաս աշխատատար ու ծախսատար գործընթաց է, քան ցանկացած այլ նյութով գրքարտադրության մինչ այժմ հայտնի ձևերը:

Արագորեն տարածվող գրքարտադրության այս ձևը դեռ ինքնահաստատման, միջազգային ու միջազնական համաձայնեցումների, բոլորի կողմից ընդունելի և բնագավառը կարգավորող օրենքների, իրավական ակտերի մշակման կարիք ունի: Մասնավորաբար, առաջնահերթ խնդիրներից են գիրքը գրողի և շրջանառության մեջ դնողի հեղինակային իրավունքի պաշտպանվածության, գրքից օգտվողների պարտավորությունների և այլ հիմնահարցեր: Բացի այդ՝ ձեր իսկ փորձով գիտեք, որ համակարգչային կամ էլեկտրոնային կրիչների տարբերակներով ստեղծված գրքի ֆիզիկական գոյությունը հեշտությամբ խոցելի է: Այդպիսի գրքի գոյության երաշխիքը պարբերական վերարտադրությունն է կամ տպագրական եղանակով բազմացումը:

## ԳՐՔԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՏԵՔՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԶԵՎԻ

Տեքստի արձանագրման ծև ասելով՝ նկատի ունեմ գրքի տեքստը գրանյութի վրա կայացնելու տարբերակը։ Ասել է թե՝ տեքստի շարադրանքի որ վերջնական տարբերակով է պատվիրատուին, սպառողին, հաճրությանը հանձնվել գրքի բովանդակությունը։ Իսկ այն կարող է լինել ձեռագիր կամ տպագիր (կան նաև միջանկյալ ծևեր՝ մեքենագիր, էլեկտրոնային):

\* \* \*

Դազարամյակներ շարունակ մարդկությունը գիրք է ստեղծել **ձեռագիր** տարբերակով։ Դա ոչ միայն գրագիտություն պահանջող, նաև գրչության հաճախ դժվարին, հոգնեցնող և աչքի լույսը մարող (ժողովրդական խոսքով՝ աչքի լույսը քաղող) տևական աշխատանք է եղել։ Տեքստի հեղինակը կամ գրիչը ձեռագիրն իրականացրել է՝ ելնելով որպես գրանյութ օգտագործվող առարկայի (կավ, քար, մետաղ, մետաքս, փայտ, պապիրուս, մագաղաթ, թուղթ) առանձնահատկություններից։ Դրա համար էլ ձեռագիրը դարերի ընթացքում իրագործվել է տարբեր ծևերով՝ փորագրում, խազում, թանաքով գրելը և այլն։ Այսօր մեզ համար կարող է տարօրինակ լինել, բայց փաստ է, որ ձեռագիր գրքերն արձանագրվել են ոչ միայն փետուր-գրիչով, այլ նաև խազող գործիքով, անգամ... մետաղե հատիչով։ Թերևս հարկ չկա մանրանանելու նկարագրությունն այն տքնանքի, որի արդյունքը ձեռագիր գիրքն էր, այն է՝ ընդամենը ... մեկ օրինակով։ Ցանկացած գիրք բազմացնելու համար (պետք է ասեի՝ ևս մեկ օրինակ ստեղծել-ունենալու համար) գրիչը (տեքստն ընդօրինակող-արտագրողը) նորից էր լծկում աշխատատար նույն հանձնառությանը, ինչի արդյունքում ստեղծվել էր ընդօրինակված տարբերակը<sup>33</sup>։ Եվ այսպես՝ դարեր շարունակ...

Եթե սրան հավելենք նաև այն, որ տեղ խնայելու համար (հասկանալի պատճառներով) ձեռագիր գրքերին սովորաբար բնորոշ է եղել պայմանական նշանների, համառոտագրություն-

ների, այլ պայմանականությունների առատությունը, ապա պատկերը գոնե նասամբ կամբողջանա:

*Մշակութաբանի համար այս փաստը կարող է խորհենլու հետաքրքիր նյութ դառնալ: Ինչու՞ էին մարդիկ այդքան ջանք ու եռանդ ներդնում, ժամանակ ու միջոցներ ծախսում մի գործումնեռության մեջ, որից նյութական որևէ անմիջական փոխհատուցում չէին կարող ակնկալել: Եզրակացությունը մեկն է. հասարակական կյանքի առաջընթացի, ազգային ինքնագիտակցության պահպանման համար գրքի կարևորությունն այնքան նշանակալի ու գիտակցված էր, որ բոլոր քաղաքակիրք հասարակություններում նույնիսկ այդ գնով գիրք ունենալուն առաջնահերթ կարևորություն է տրվել:*

Չեռագիր գրքին վերաբերող մի կարևոր առանձնահատկություն ևս, որի վրա նույնպես ուզում եմ հրավիրել ձեր ուշադրությունը: Բայց ասելիքիս կարևորությունը հասու և ամբողջական դարձնելու համար սկսեմ մի քիչ հեռվից: այն, ինչ այս դեպքում գրքին է վերաբերում, առնչվում է ընդհանրապես յուրաքանչյուր մարդու ինքնատիպությամբ: Ինձ համար միշտ էլ անընդունելի է եղել մարդու թերագնահատումը, որի դրսենորումներից մեկը հայտնի է «Անփոխարինելի մարդ չկա» սահմանման ձևով: Այն ասել-կրկնելու սեր ունեցող մարդիկ միգուցե լրջորեն չեն մտածել դրա բովանդակության մասին: Նմարավոր է: Սակայն անհրաժեշտ է գիտակցել, որ նույնիսկ իմիջիայլոց ասվող այդ խոսքը ժամանակի ընթացքում կարող է շատ աննկատորեն դառնալ կենսակերպ, սկզբունքային վերաբերմունք յուրաքանչյուրի ու ամենքի նկատմանը:

Մինչդեռ իրականում ճիշտ է հակառակը. աշխարհի ստեղծման օրվանից սկսած՝ անփոխարինելի են երբեք ապրած, ապրող և բոլոր այն մարդիկ, որ դեռ նոր են լույս աշխարհ գալու: Ընդ որում, պիտի նկատի ունենալ, որ այստեղ խոսքը նրանց ապրածի, արած–ստեղծածի մեջ լավ ու վատի, ընդունելի–անընդունելի մասին չէ բոլորովին: Անփոխարինելի են այն առանձնահատուկ ինքնատիպությամբ, որով իրարից տարբեր են, իրար երբեք չեն կրկնում, եթե անգամ ցանկանան ել: Նույնիսկ նույն

շարլոն կենսապայմաններում իրենց կյանքն ապրող, անգամ նույն մեխանիկական գործն անող, նույն հմտությունն ունեցող և այդ տեղում ըստ անհրաժեշտության ցանկացած պահի իրար փոխարինելու ի վիճակի մարդիկ իրարով փոխարինելի չեն իբրև մարդ: Յուրաքանչյուր ոք մի բարդ ամբողջություն է և ամենօրյա կեցությամբ ու կենսագործունեությամբ կամա-ակամա, անընդմեջ ստեղծում ու վերստեղծում է իր անկրկնելի, եզակի միկրո-աշխարհը: Նրա այդ նկատելի-աննկատ տիրույթում կարևոր է նույնիսկ յուրաքանչյուր մանրութ, որովհետև մասնիկն ու կրողն է նրա ինքնատիպ ամբողջականության:

Ահա այդպիսի մի մանրութ էլ մարդու ձեռագիրն է: Ձեռագրեստ մասնագետների համար այն մարդու բնավորության, հոգեվիճակի, ընդհանրապես հոգեկերտվածքի և այլնի վերաբերյալ բազմախոսուն նյութ է: Ահա հենց դրա շնորհիվ յուրաքանչյուր ձեռագիր տեքստ ոչ միայն իր բովանդակությամբ, այլ նաև ձեռագրական առանձնահատկություններով հեղինակի կամ կրկնօրինակն ստեղծած գորիչ մարդկային նկարագրի խոսուն փաստական նյութն է: Եթե նաև այսպես մոտենանք ձեռագիր գրքի արժևորմանը, ապա հանգիստ կարող ենք ասել, որ այն հեղինակից մնացող թանկարժեք մասունք է: Վստահորեն կարող են պնդել, որ ձեզնից ոչ մեկը երբեք չի կարող ունենալ հոգու այն անբացատրելի ապրումը, ֆիզիկական մերձության և անմիջականության տպավորությունը, ասենք, Հովի. Թունանյանի որևէ ստեղծագործության նույնիսկ ամենաշքեղ տպագիր օրինակը ձեռքն առնելիս, ինչը որ կունենա դրա ձեռագրից: Այն կարող է դժվարընթեռնելի, ջնջումներով լի, խունացած լինել: Սակայն դա հեղինակից մնացած մասունք է, որը բովանդակությամբ տպագրի հետ նույնականությամբ հանդերձ՝ տարբեր է էական մի առանձնահատկությամբ: Այն հեղինակի ձեռ + ա + գիրն է՝ ձեռքով գրածը՝ մի ինչ-որ մասով նույն ինքը՝ հեղինակը: Շատ է խոսվում Գրիգոր Նարեկացու «Մատյանի» առողջարար ներուժի մասին: Պատկերացրեք այդ դրական ներգործության աստիճանը, եթե մեզ հասած լիներ հեղինակի ձեռագիր օրինակը: Անկասկած, այն հեղինակի էներգետիկ դաշտի շատ ավելի ներգործուն կարո-

դություններ ի հայտ կրերեր, քան կրկնօրինակ ծեռագրերը կամ տպագիրները<sup>34</sup>:

Սակայն հարկ է այստեղ կանգ առնել, որովհետև ակամա մոտեցանք մարդուն բնորոշ այնպիսի առանձնահատկությունների քննարկմանը, որը թերևս մետաֆիզիկայի, եզրերիկ դիտարկումների նյութ է: Իսկ այստեղ, ասեմ խոստովանելու պես, իմ իմացությունը սիրողական մակարդակի է, որի պատճառով էլ հարկ եմ համարում ծեռնպահ մնալ:

\* \* \*

Գրքի հաջորդ՝ տպագիր տեսակի չինական, այնուհետև՝ ասիսական շրջանի նախապատճությանը կարելի է ծանոթանալ առկա բազմաթեզու հարուստ գրականությունից: Իմ նպատակը տպագիր գրքի մշակութային նշանակության դիտարկումն է: Դարցի այդպիսի դրվածքը մեզ տեղափոխում է Եվրոպական մշակութային տարածք, որում զարգացման ու առաջընթացի կարևորագույն նախապայմաններից եղավ Յ. Գուտենբերգով սկզբնավորված գրատպությունը: Նախ՝ պետք է նկատի ունենալ, որ դա, մի կողմից, մշակութային հասունացած անհրաժեշտության արդյունք էր, մյուս կողմից՝ Եվրոպական (նաև համաշխարհային) մշակույթի հետագա զարգացման նախապայման: (Յիշե՛ք ընդհանրապես մշակույթին բնորոշ առանձնահատկություններից մեկը. այն մարդու գործունեության արդյունքն է և հետադարձ կապով նպաստում է այդ գործունեության ծավալմանը):

Գրատպության մշակութային նշանակությունը հարկ է դիտարկել հետևյալ հանգամանքներում: Եվրոպան մոտենում էր մշակութաստեղծ գործունեության հաջորդ՝ արդյունաբերական շրջափուլին: Մարդու արտադրական, առևտրական, սոցիալական, տնտեսական այլ կարգի գործունեության ոլորտների օրավուր ակտիվացումը միաժամանակ ձևավորել էր թե՛ գրավոր խոսքի (և քանակական, և բովանդակային առումներով), թե՛ գրաճանաչ ու գրագետ մարդկանց հարածուն պահանջարկ: Դրա արդյունքում տասնհինգերորդ դարի կեսին Յ. Գուտենբերգով Եվ-

րոպայում սկզբնավորվեց դարակազմիկ այն գործունեությունը, որը մենք ուղղակի գրատպություն ենք անվանում<sup>35</sup>:

Բոլորովին էլ չափազանցություն չի լինի ասելը, որ արդի մշակույթն ընդհանրապես անհնար կլիներ առանց գրատպության և տպագիր գրքի: Տպագիր խոսքի շնորհիվ հասարակական կյանքն արագորեն լցվում էր անընդհատ թարմացող և մատչելի տեղեկատվությամբ: Եվրոպական մշակույթի նոր ժամանակաշրջանի կարևորագույն բնութագրերից են գրագիտության հասարակական պահանջնունքը, գրքի հասարակական հեղինակության ու մշակութային նշանակության աննախադեպ բարձրացումը: Անկախ մասնագիտությունից, կրթությունից և այլ բնութագրերից՝ ընթերցասիրությունը դարձավ մարդու կարևորագույն հոգևոր պահանջնունքներից և գրադմունքներից մեկը: Գրատպության շնորհիվ գիրքը մատչելի դարձավ շատ շատերին: Զեավորվեց գրադարանների (հանրային, կրթական հաստատությունների, մասնավոր) նախադեպը չունեցած ցանց: Գրատպության մեծածավալ արտադրանքի օգնությամբ Եվրոպայի ազգաբնակչությունը հնարավորություն ստացավ ընդգրկվելու, պայմանականորեն ասած, ոչ պաշտոնական հեռակա կրթահամակարգի մեջ, լինելու իրազեկված և ակտիվ:

Գրքաստեղծման տպագրական (մեքենայական-արտադրական) ձևը գործնականում անսահմանափակ քանակի հնարավորությունից զատ՝ այլ դրական նշանակություն էլ ունեցավ: Մասնավորաբար, շատ կարևոր էր գրքի բովանդակության հարցութացումը մարդու աշխարհիկ, ամենօրյա կեցության ու գործունեության ոլորտների, հետաքրքրությունների անընդգրկելի բազմազանությամբ: Գիրք ստեղծելը հեշտացավ, գրանյութը (թուղթ) դարձավ մատչելի: Լիարժեքորեն արտահայտվեց մասնագիտականից մինչև ժամանցային–հանրամատչելի գրականություն ստեղծելու և սպառելու մարդու պահանջնունքը: Այս ամենի արդյունքում գրքի բովանդակությունը վերջնականապես աշխարհականացավ: Միջնադարյան ձեռագիր գրքի բովանդակությունը հիմնականում կրոնական էր, բարոյախրատական և տարակարծություն չթույլատրող, սերտելու համար շարադրված: Դրան հա-

կառակ՝ նոր ժամանակների տպագիր գիրքն ազատորեն մտածող հեղինակի և ընթերցողի հանդիպման ձև էր: Այդ գրքի բովանդակությունն անգիր անելու կարիք չկար. ընթերցողը կարող էր և՛ գրավոր, և՛ բանավոր արտահայտել իր կարծիքը, չհամաձայնվել կարդացածի հետ:

Եվրոպայում այս լրջագույն փոփոխությունների մեջ անհնար է անտեսել լուսավորության գաղափարախոսության և լուսավորիչ գաղափարախոսների գիտական, հրապարակախոսական, պրակտիկ գործունեության դերը: Ժամանակը Եվրոպային կանգնեցրել էր մշակութային լրջագույն խնդիրների առջև, որոնց լուծման դժվարին գործը հանձն էին առել ու իրագործում էին իր նվիրյալ մտավորականները:

Թեմային առնչվող էական մեկ այլ հանգամանք ևս: Շնորհիվ գործնականում անսահմանափակ տպաքանակի հնարավորության՝ գրքով արձանագրվող տեղեկույթը (խոսքը) շատ ավելի արագ էր դառնում հասարակության սեփականությունը: Այն լիարժեքորեն համապատասխանում էր և միաժամանակ նպաստում հասարակական կյանքի ու գործընթացների արագությանը:

Զի կարելի անտեսել խնդրի նաև տեխնիկական կողմը: Տպագիր գիրքը շատ ավելի հեշտությամբ է օգտագործվում: Նույն ծավալի մեջ այն ավելի տարողունակ է, ընթերցման համար մատչելի, անհամենատ ավելի զուրկ ընթերցումը դժվարացնող պայմանական նշաններից:

Մեծաքանակ տպագիր խոսքն արագացրեց նոր գրական լեզուների կազմավորումը, ազգային հոգեկերտվածքի ամբողջականացումը, ծևավորեց համազգային գիտակցություն և այլն:

Տպագիր խոսքի դրական նշանակության մասին կարելի է շատ խոսել, սակայն այստեղ դադար տանք՝ նշելով տեխնիկական բնույթի մի կարևոր հանգամանք ևս: Գրքի տպագրության գործում հեղաշրջում առաջացրեց տասնիններորդ դարի գիտատեխնիկական հեղափոխությունը: Գրքի հրատարակման արտադրական միջոցների կատարելագործումը շարունակվում է նաև մեր օրերում:

Թերևս տեղին է նաև նշելը, որ գրքարտադրության տարածմանը, դրանում ներառված մարդկանց քանակի ավելացմանը զուգահեռ ծավալվել է հասարակական մի գործառույթ ևս, որն ընդունված է անվանել գրաքննություն: Պատմական այդ իրողությունը ներկայացնելը դուրս է այս ձեռնարկի ընդգրկումներից: Բայց նշեն, որ դա միշտ էլ եղել է և արտահայտվել իբրև հսկողություն գրքի բովանդակության ու հեղինակի վրա: Արդյունքում ոչնչացվել են, արգելքի տակ դրվել հազարավոր անուն գրքեր, հալածվել տաղանդավոր մարդիկ: Սակայն բուն իմաստով գրաքննության գործադրության բազմաթիվ օրինակներից իրենց տևական հետևողականությամբ առավել հայտնի են հռոմեական կաթոլիկ եկեղեցունը և Խորհրդային Միությանը: Մասնավորաբար, 1559 թ. Յոհոն Իրապարակել է արգելված գրքերի մի ցանկ, որը լրացվել ու վերահրատարակվել է մինչև 1948 թ.:

Քսաներորդ դարը, սակայն, ցույց տվեց, որ տպագիր գրքի ձևով տեղեկութիւն տարածման արագությունն սկսում է հետ մնալ կյանքի նորովի արագացող տեմպից: Ի հայտ եկավ գրքի մի նոր՝ էլեկտրոնային-համակարգչային տարբերակը: Միա՛ արդեն միջազգային մասշտաբներով տարածման ու սպառման խնդրում կարող են ի հայտ գալ մի քանի դժվարություններ՝ պետական վերահսկողություն-գրաքննությունը, բնագրի լեզվի մատչելիությունը և այլն:

## ԳՐքի ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ

Յազարամյակների ընթացքում ինչի մասին, ինչ բովանդակությանը ասես գիրք չի գրվել: Յենց այդ անընդգրկելի բազմազանությունն է ստիպում խոստովանել, որ այս դեպքում թերի լինելու է դատապարտված ցանկացած դասակարգում, որը կարող է վերաբերել գրքի բովանդակությանը: Յամենայնդեպս, արժեք գոնե հպանցիկ անդրադառնալ մի քանի տեսակների:

\* \* \*

Հանրահայտ տեսակներից է **գիտական** բովանդակությամբ գիրքը: Սա աշխարհում երբեւ ստեղծված ամենալուրջ բովանդակությամբ, սպառողից գիտական մակարդակի պատրաստվածություն պահանջող գրականությունն է: Այն հասցեագրված է համեմատաբար փոքրաքանակ, որոշակի գիտական հետաքրքրություններ ունեցող մարդկանց: Գիտական գրականությունը բազմազան է՝ ըստ առ այսօր որոշակիացած այն բնագավառների, որոնք ժամանակի մեջ ինքնահաստատվել են ու ճանաչվել (համեմատաբար երիտասարդ գիտություններից մեկն էլ, անկասկած գիտեք, մշակութաբանությունն է): Գիտական բովանդակությամբ գիրքը հիմնականում շարադրվում է նկարագրության, փաստարկման, վերլուծության, ապացուցման և ընդհանրացնող կամ ամփոփիչ եզրակացությունների սկզբունքներով: Այդ տեքստում էական նշանակություն ունեն գիտական հասկացությունները, որոնք բովանդակության սյուներն են, բովանդակությունը կազմակերպող առանցքները:

Գիտական գրականության էական ու տարբերակիչ առանձնահատկություններից մեկն էլ հետևյալն է: Յուրաքանչյուր այդպիսի գիրք շարադրվում է որոշակի գիտական խնդրով կամ հարցադրումով (թեմա): Նրա գիտականությունն զգալիորեն պայմանավորված է նրանով, թե որքանով է ընդգրկվում այդ թեմայով արդեն առկա գրականության մեջ ընդունելին կամ մերժելին: Դրանից էլ ակնհայտ է դաշնում, թե գիտականորեն որքան կարևոր, առաջընթաց քայլ է յուրաքանչյուր գրքի բովանդակությունը: Եթե գիտական գրականության մեջ տիխուր կամ անպտուր գործունեություն է չիմացության պատճառով արդեն հայտնի ծշմարտությունների կրկնություն-վերահայտնագործումը (հեծանիվ հայտնագործելը), ապա անթույլատրելի է սպեկուլյացիան՝ արդեն հայտնի ծշմարտությունը գիտակցաբար նորույթի տեղ ներկայացնելը, ուրիշի մտավոր սեփականությունը յուրացնելը (գրագորություն): Գիտության մեջ ոչ ոք չի կարող մնայուն անուն թողնել, մասնագիտական միջավայրում հեղինակություն դար-

նալ, եթե այդ բնագավառում չի հավելել իր շատ թե քիչ էական ներդրումը:

Գիտական տեքստի լեզուն հստակ է, միանշանակ, սեղմ և հիմնականում ոչ պատկերավոր:

Գիտական գրականությունը սովորաբար բաժանվում է երկու մեծ խմբի՝ **բնագիտականի** և **հասարակագիտականի**. Առաջինի հետաքրքրությունների շրջանակում են բնությունը, նրա բաղկացուցիչներին վերաբերող օրինաչափությունների, հատկանիշների, առանձնահատկությունների հայտնաբերումը: Հասարակական գիտությունների ուսումնասիրության ոլորտում են մարդկային հասարակության և մարդու ներաշխարհի իրողությունները, մշակութաստեղծ գործունեությանը և դրա արդյունքներին բնորոշը: Այս ամենի մեջ թերևս պետք է առանձնացնել փիլիսոփայությունը, որն աշխատում է ի մի բերել, ընդհանրացված գիտելիքի տեսքով ներկայացնել բնության, հասարակության, մարդու ճանաչողության վերաբերյալ համընդհանուր օրինաչափությունները: Այլ կերպ ասած՝ փիլիսոփայություն աշխարհի ամբողջականությունն արտահայտող գիտություն է: Ու հենց դրանով էլ՝ մյուս բոլոր գիտությունների ձեռքբերումները համադրող, Արիստոտելի բառերով ասած՝ գիտությունների գիտությունը: Թեև կան փիլիսոփայությունը գիտություն չհամարող տեսակետներ ևս, սակայն մի բան անժխտելի է. գիտական մտածողությունը և գործունեությունն առանց տեսական-փիլիսոփայական մեթոդաբանության և օրինաչափություններ բացահայտող ընդհանրացող եզրահանգումների հնարավոր չէ:

Բնորոշ մի կարևոր իրողություն ևս: Յեղինակային գուտ անձնական-անհատական առանձնահատկությունները, կենսագրական իրողությունները գիտական գրականության մեջ չեն արտացոլվում: Ակնհայտողն դրսարվում է միայն այն, թե հեղինակը որքանով է օժտված տվյալ գիտության մեջ էական հավելում ունենալու կարողությամբ:

\* \* \*

Աշխարհում ամենից շատ ստեղծվող գրքերից է գեղարվեստական բովանդակությամբ գրականությունը: Այն էականորեն տարբերվում է գիտականից: Շարադրվում է արձակ կամ չափածո և պատկերների ամբողջություն է: ճիշտ է, գեղարվեստական գրականության այլաբանական բովանդակությունը, ենթատերստային շերտերն ու իրողությունները հաճախ մատչելի են միայն մասնագետներին, բայց և այնպես այն ստեղծվում է առաջին հերթին հանրային սպառնան համար: Այս գրականության մեջ էական է հանրորեն ընդունված գեղարվեստական պայմանականության հանգամանքը, որի շնորհիվ հեղինակի երևակայությամբ ստեղծված պայմանական իրականությունն ընդունվում, ապրվում ու իմաստավորվում է իբրև ռեալ, կենսական իրողություն:

Ի տարբերություն գիտական բովանդակությամբ գրքի՝ գեղարվեստական յուրաքանչյուր գիրք ուղղակի կամ այլաբանորեն արտացոլում է հեղինակի մարդկային–անհատական նկարագիրը, աշխարհը, կյանքը տեսմել–իմաստավորելու կերպն ու ինքնատիպությունը: Դրանով է պայմանավորված, որ հաճախ նույն կենսական իրողությունների, նման մարդկային ճակատագրերի ու հոգեկան ապրումների արտացոլմամբ ստեղծված գրքերը երբեք չեն կրկնում իրար: Նույնիսկ լրջորեն տարբերվում են իրարից ոչ միայն բովանդակությամբ, նաև ոճական, պոետիկայի առանձնահատկություններով: Ինչպիսին որ հեղինակն է, այնպիսին ու այնքանով էլ տարբեր–ինքնատիպ է իր ստեղծած գեղարվեստի աշխարհը: ճիշտ կլինի ասել, որ ամենքին տրված այս եզակի կյանքն ու աշխարհը նա վերստեղծում է ըստ իր էության ու ծանաչողության<sup>36</sup>:

Գիտական և գեղարվեստական գրքերի համադրությունը բացահայտում է էական մի տարբերություն ևս: Դա հետևյալն է: Գիտական գրականության բովանդակությունը որոշակի է. նրա ըմբռնման մեջ տարբերությունները բացառվում են: Մինչդեռ գեղարվեստական գիրքը կարող է ունենալ բովանդակության ենթաշերտեր, մանավանդ սերնդափոխության և հասարակական կյանքի հանգամանքների փոփոխության պատճառով տեղիք տալ

տարղնթերցումների ու տարղմբռնումների: Դա միանգամայն սովորական իրողություն է ընդհանրապես գեղարվեստի ոլորտի համար: Թե գեղարվեստական գրքի ձևաբովանդակային բաղկացուցիչներից հատկապես ինչը կկարենորվի, պայմանավորված է նաև ընթերցողի ժամանակաշրջանով, աշխարհայացքով, մարդկային նկարագրով:

Մարդկային ճանաչողությամբ անընդհատ ընդհարձակվող ու խորացող գիտական ճշմարտությունը հորիզոնի գծի պես է. որքան մոտենում ես, այնքան հեռանում է՝ բացելով իմացության նոր տարածություններ, բայց միշտ մնալով ամբողջությամբ չբացահայտված, անհասանելի: Եթե գիտությունը զարգանում է գիտնականների՝ իրար վրա հավելվող վաստակի ուղղահայաց շարվածքի սկզբունքով, ապա գեղարվեստում յուրաքանչյուր նոր գիրք ավելացնում է առևկա հորիզոննական շարվածքում մի ինքնօրինակ ներդրում ևս:

Նետնողականորեն յուրացնելով գիտական գրականությունը և աշխատելով այդ ուղղությամբ՝ հնարավոր է տվյալ բնագավառում որոշակի հաջողությունների հասնել: Մինչդեռ գեղարվեստական գրքեր ուսումնասիրող որևէ մեկը, անկախ իր նվիրումի ու ձգտման չափից, չափությունը ունենա, որ շատ թե թիս նկատելի գեղարվեստական տեքստի հեղինակ կարող է դառնալ: Այդպիսի նվիրումի միակ երաշխավորված արդյունքը գեղարվեստի հետ հարաբերվելու գեղագիտական հաճույքը կլիմի: Իսկ նշանակալի գեղարվեստական գիրք գրելու համար անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածությունը պետք է զուգադրվի բնատուր օժտվածությանը: Գեղարվեստական տեքստը հաճախ անբացատրելի ստեղծագործական ակտի արդյունք է, որում զարմանալիորեն միաձուլված են դրսևորվում մարդու գիտակությունը (միտքը) և ենթագիտակցությունը (զգացմունքը):

\* \* \*

Գրքի ձեզ լավ հայտնի տեսակներից մեկն էլ հատկապես կրթության ոլորտում է գործածվում. դա դասագիրքն է (նաև ուսումնական ձեռնարկը, կրթական օժանդակ գրականությունը և

այլն): Ուսուցողական բովանդակությամբ գրքի այս տեսակը բազմաթիվ տարրերակներ ունի, նայած թե ում է նպատակա-ուղղված՝ տարրականից մինչև բարձրագույն կրթություն ստա-ցողը: Դասագրքեր են ստեղծվել ու ստեղծվում մարդու գործու-նեության և ինացության բոլոր ոլորտների վերաբերյալ: Դրանք ընդգրկում են տվյալ բնագավառում անվիճարկելիորեն ընդուն-ված ու ապացուցված տեսական և գործնական ճշմարտություն-ներ: Դասագրքում ընդգրկված նյութի բազմակողմանիությունն ու բարդությունը պայմանավորված են նրանով, թե որ տարիքի, կրթական ինչ մակարդակի և հեռանկարի սովորողի համար է: Դասագրքերին բնորոշ են մատուցվող գիտելիքի շարունակակա-նությունը, պարզից դեպի բարդը, ընդհանուր զարգացման մա-կարդակի համար անհրաժեշտ նվազագույնից մինչև մասնագի-տական առանձնահատուկ գիտելիքի ապահովման նախապայ-մանը:

Դասագրքերը շարադրվում են հնարավորինս մատչելի (ցանկալի է նույնիսկ աշխույժ, հետաքրքրաշարժ) լեզվով՝ ըստ սովորողի տարիքային առանձնահատկությունների՝ մանկավար-ժական, ուսուցման որոշակի մեթոդներով, հնարներով և այլն: Սովորաբար ձախողվում են, չեն ընդունվում այն դասագրքերը, որոնք շարադրվում են ակադեմիական չոր ու ցամաք լեզվով և հաշվարկված են սովորողի կողմից միայն սերտելու, մեխանի-կորեն անգիր հիշելու համար: Միով բանիվ, դասագրքի դեպքում գիտելիքի չափ պարտադիր է նաև այն ամենը, ինչը սովորողի համար անմկանութեն կապահովի նաև ինացության հաճույքը, մատչելիությունը (ըստ անհրաժեշտության՝ գունավոր ձևավո-րում, նկարներ, քարտեզներ և այլն): Յուրաքանչյուր դասագրից նախապես ստեղծված և հաստատված համապատասխան կրթա-կան ծրագրի բովանդակության շարադրանքն է: Այդ շարադրան-քում նույնիսկ հանճարեղ գիտական բացահայտումները ներկա-յացվում են սովորողի կողմից յուրացվելու համար հնարավորինս պարզ ու մատչելի լեզվով:

Դասագրքերից անբաժան են դարձյալ կրթության գործին ծառայող գործնական առաջադրանքների, լրացուցիչ նյութերի ժողովածուները, քրեստոմատիաները և այլն:

\* \* \*

Ըստ բովանդակության տարբերակվող գրքերից շատ տարածված ու հայտնի են նաև հանրագիտարանը, բառարանը, հանրամատչելի ու հետաքրքրաշարժ գրականությունը և այլն: Ի վերջո, անհնար է ընդգրկել գրքի բովանդակային ողջ բազմագանությունը:

\* \* \*

Վերը թվարկված մոտեցումներից զատ՝ գրքերի տարբերակման համար կարելի է սկզբունք դարձնել նաև նրանց տեխնիկական ձևավորման, արտադրական գործընթացի առանձնահատկությունները: Այդ դեպքում կկարևորվեն գրքի չափն ու ձևը, գեղարվեստական ձևավորման առանձնահատկությունները, օգտագործված նյութերը, տպարանային արտադրության ձևերն ու եղանակները և այլն: Այստեղ ևս մարդկությունը հսկայական փորձ ու իմացություն է կուտակել, որին ցանկության դեպքում կարելի է ծանոթանալ (ինչպես որ արդեն ասել եմ) մի գիտակարգի օգնությամբ, որը հայտնի է իբրև գրքագիտություն:

## **ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

(Մշակութաբանական հիմնախմբիրներ քննարկելու համար)

Գլխավորն այն չէ, որ հնարավորին չափ շատ գիտելիք կուտակես, գլխավորն այն է, որ այդ գիտելիքը՝ շատ թե քիչ, պատկանի միայն քեզ, սնուցված լինի քո արյամբ, լինի քո սեփական ազատ ջանքերի պտուղը:

Ռոմեն Ռոլան

## ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՊԽՆԴԻՔ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐ

Կենդանի արարածներին վերաբերող զրույցներում մարդը միշտ ներկայացվում է արտոնյալի կարգավիճակով: Յասկանալի է, որ դա մեր ինքնագնահատականն է, որը, եսակենտրոն լինելով հանդերձ, հիմքում անառարկելի մի ճշմարտություն ունի. մարդը բանական է կամ ամենաբանականն է բոլոր արարածներից: Դրանից էլ բխում են մեր մնացյալ ինքնագնահատականները. մարդն ամենազոր է, մարդն է բնության զարդը և ննան այլ բնորոշումներ: Յանապատասխան մասնագետներին թողնելով բանականության ֆենոմենի կենսաբանական կամ ֆիզիոլոգիական էության վերաբերյալ խնդիրները՝ փորձենք հարցը քննել մշակութաբանական տեսանկյունով:

Նախ, պետք է նկատի ունենալ, որ չափազանց դժվար է որոշակի ասել, թե որտեղ է սկսվում բանականն անգամ մարդու պարագայում: Բազմաթիվ հոգեբանների մի շարք ուսումնասիրություններ անառարկելիորեն ցույց են տալիս, որ իր բանականությամբ մեծամտացած մարդը կենսագործունեության, ամենօրյա կեցության ժամանակի զգալի մասն անցկացնում է առանց գիտակցության օգնությամ<sup>37</sup>:

Մյուս կողմից էլ, հնարավոր չէ անտեսել բազմաթիվ կենդանիների (նույնիսկ ոչ կարնասութ) վարժագծում պարբերաբար նկատվող իրողություններ, որոնք վերկենսաբանական են, չեն կարող այլ սկիզբ ունենալ, քան բանականը: Խոսքն այստեղ մանավանդ խմբային կեցությամբ ապրող միջատների (օրինակ՝ մրջյունների, մեղունների) մասին չէ միայն, որոնց կենսագործունեության կազմակերպվածությունը, պարտականությունների բաշխվածությունը, համակեցության հիերարխիկ կառուցվածքը և այլն լավ մտածված սոցիալական կառույցի տպավորություն են թողնում: Խնդիրն ավելի հետաքրքիր է դառնում, եթե նկատի ենք ունենում, որ բանականին ննան վարքագիծ են դրսևորում նույնիսկ, ասենք, ագրավները, որոնք ծագումով շատ ավելի հին են, քան կաթնասունները:

Դա կարող է մի կարևոր բան նշանակել, որ, իմ կարծիքով, հետևյալն է: Բնության մեջ բանականության նախանշանները թերևս շատ ավելի վաղուց են եղել, մինչև կիասնեին մարդու տարբերակով դրսնորման ձևին ու մակարդակին:

Այս ամենը թողնենք համապատասխան մասնագետներին՝ իբրև նյութ՝ բանականության առումով մարդու եզակիության կասկածելի տեսակետը քննարկելու համար: *Սակայն իհարկե վիճարկելի չէ այն հանրահայտ իրողությունը, որ թե՛ հնուց անտի մեզ հայտնի, թե՛ ժամանակակից աշխարհում բանականությամբ ամենից շատ օժտվածը եղել և մնում է մարդը: Դրա շնորհիվ նա մշակութաստեղծ է: Ահա այստեղ է, որ մենք միակն ենք, ու հենց դրանով էլ ընդգծվում են այս երկրագնդում մեր դերը, կոչումը, գործունեության իմաստը և նշանակությունը հասկանալու հենց մեր պատասխանատվությունն ու պարտավորությունը: Դրանից է, որ ես այստեղ խնդիրը ներկայացնում եմ իբրև մարդ և մնացյալ աշխարհ հարաբերության հարց, որը մեծապես կայանում է բանականության միջնորդությամբ՝ որպես մարդու մշակութաստեղծ գործունեություն: Այդ գործունեությունն իրագործվում է միայն ու միայն բնության հաշվին՝ առկա աշխարհը վերափոխելով, ոչնչացնելով, որից պաշտպանված չէ նաև ինքը՝ մարդը: Դարցի նման դրվածքն է հաճախ առիթ դարձել մարդու մարդկային կամ գազանային նկարագրի շուրջ ծավալվող բանավեճերի: Փորձենք ինքներս էլ ինչ-որ չափով կողմնորոշվել հարցի նման դրվածքում:*

Այստեղ առաջին հերթին պետք է նկատի ունենալ, որ հիմնախնդրի նման դրվածքը (մարդը գա՞յլ է, թե՞ գա՞<sup>38</sup>) թերևս նույնքան հին է, որքան ինքը՝ մարդը: Երևի սխալված չենք լինի, եթե մտածենք, որ այդպիսի քննարկումները սկզբնավորվել են մարդու ինքնաճանաչման, ինքնագիտակցման հետ: Բայց մի էական գործոն նույնպես չպետք է անտեսել:

Մարդ և շրջապատող աշխարհ փոխհարաբերությունը երկու կարևոր շրջափուլ է անցել: Նախնական ժամանակաշրջանը նշանավորվել է բնության բաղադրիչը լինելու, նրանով իր կեցու-

թյան պայմանավորվածության գիտակցմամբ: Այսպիսի կենսակերպը և աշխարհիմբռնումը թերևս չէր կարող առաջադրել մարդու նկարագրի երկակիության (մարդը գա՞յլ է, թե՞ գառ) վերաբերյալ անլուծելի հարցը: Այն երկի ձևավորվել է մարդու մշակութաստեղծ գործունեության այն շրջանում, երբ բնությունն աստիճանաբար ներառվել է նրա ակտիվ ներգործության ոլորտ, որի արդյունքում ի սկզբանե տրված շրջակա աշխարհը նկատելիորեն վերափոխվել է: Այդպես որոշակիացել է մարդու երկակի եւրեյան կամ նախասկզբների գիտակցումը. մարդը կենդանի է՝ տեսակին բնորոշ նկարագրի ու կենսակերպի բոլոր իրողություններով, բայց և էականորեն տարբեր է մյուս բոլոր տեսակներից իր բանականության և դրա գործիքը հանդիսացող մարմնի կարողություններով:

Միանից հետո ամենից հեշտն ու հանրորեն մատչելին խնդիրն ամենօրյա խոսք ու զրույցի մակարդակից մինչ բարոյագիտական, կրոնական-խրատական մակարդակներում քննարկման հարց դարձնելու էր: **Նման քննարկումներն ավելի հաճախ եղել են մարդու մեջ գագանին (չարը) զսպելու, մարդու մեջ մարդկայինի (բարին) հաղթանակին հասնելու նպատակն ու ձգտումը:** Բայց հազարամյակների ծիգ ու ջանքին հակառակ՝ դա արդյունք չի տվել: Չէր էլ կարող տալ, որովհետև բարոյաբանական հարցադրումներն ու քննարկումները սովորաբար աչքի են ընկնում իրենց վերացակամությամբ: Դրա պատճառով էլ բարոյական ծշմարտությունները, եթե անգամ ընդունելի ու հանրորեն շատ ցանկալի են, միևնույնն է, զուրկ են վճռորոշ արդյունավետությունից, ներգործության կարողությունից, առավել ևս՝ կյանքը, մարդու ամենօրյա ակտիվ կենսագործունեության սկզբունքները, ձևերը փոխելու կարողությունից: Այլապես կարելի է նտածել, թե բարոյական քարոզմներով կարելի է հասնել մարդու բնականորեն նախասահմանված, ծրագրված նկարագրի ու կենսաձևի փոփոխությանը: Դա հնարավոր կլիմեր միայն մի դեպքում. եթե ստացվեր տեսակի այդ ծրագրվածությունից դուրս, ըստ մեր ուսուցիչամերի կազմավորված մշակութաստեղծ նոր էակ:

Մյուս կողմից էլ, բարոյական ծշմարտությունները միշտ էլ աչքի են ընկել իրենց հարաբերականությամբ, որի պատճառով էլ գրեթե երբեք հնարավոր չի եղել և այժմ էլ հնարավոր չէ դրանք կենսական իրադրությունների նկատմամբ գործադրելով՝ միանշանակ ծշտել, թե որն է չարը կամ բարին (գայլը կամ գառը): Պատահական չէ, որ դարերի փորձով ժողովրդի ձևակերպած ծշմարտությունը (չկա չարիք առանց բարիքի և հակառակը) կենսականորեն ավելի համոզիչ է, մարդու երկրային առաքելության ավելի հարմար եկող: Արդեն քանի հազար տարի մարդկությանը բարու, գեղեցիկի, վեհի, ազնիվի (թվարկումը կարելի է շարունակել) դասեր տվող, դրանց օգտակարությունն ու նպատակահարմարությունը պնդող, բացատրող ու ցույց տվող արվեստը, ցավոք սրտի, մազաչափ անգամ չի կարողացել փոխել մարդու նկարագրի մեջ գայլայինը:

Խնդրի գուտ բարոյական ինաստավորմամբ քննարկումները և դրանցից օգուտի ակնկալիքներն անհեթեթ լավատեսության, հույսի, ինքնախաբեռության երանգ ունեն: Դրա համար էլ ցավալիորեն անհամոզիչ են Ս. Գորկու ստեղծագործության («Հատակում») հերոսի պարետիկ հիացումն ու համոզնունքը. „Կելօք! Էտո վելիութեա! Էտո զեւուտ... գործո!,, («Սարդ: Դա հրաշալի է: Դա հնչում է ... հպարտ»):

Հարցի բարոյաբանական դրվածքի պայմանականությունն ակնհայտ է նաև հետևյալ առումով: Չարի և բարու, գազանայինի և ոչ գազանայինի բնութագրման համար գտնված խորհրդանիշերը շատ պայմանական են ու վիճարկելի: Նախ, գայլի ու գառան հակադրությունը կեղծ է այն պարզ պատճառով, որ նրանցից յուրաքանչյուրն իր տեսակի պահպանման բնական կանխորոշվածություն-կենսակերպն է իրականացնում, որի մեջ եթե գառը նախատեսված է որպես սնունդ գայլի համար, ապա դրանում վերջինս դեր և մեղք չունի բոլորովին: Միակ բանը, որ այդ իրադրությունը փոխելու համար կարող է գայլն անել, սնվելուց «գիտակցաբար» իրավարկելը կլինի, այսինքն՝ ինքնասպանությունը, որը նույնն է, թե ժխտի բնությունից իր համար կանխորոշված դերն ու նկարագիրը: Այ դա արդեն ավելի անհասկանալի,

անբացատրելի, առավել ևս անհմաստ կլինի, քան իր գիշատչային նշանակման մեջ հետևողական վարքագիծը:

Մյուս կողմից էլ, ի՞նչ հիմք կա անտեսելու, որ իր տեսակի պահպանման համար բնության նախատեսած սննդի նկատմանք գառը նույնքան ճարակող, անխնա է, որքան գայլը: Գառն էլ իր տեղում է նույնքան գազան, սպառող, անխնա, որքան գայլը: Իսկ գայլն էլ մի այլ տեղ է զոհ ու անպաշտպան, որքան գառն իր դիմաց: **Եվ այսպես շարունակ՝ բնական շրջապոլոյտի,** տեսակների բազմազանության, փոխապայմանավորվածության այն անընդգրկելի աշխարհում, որի կեցության ու կենսագործունեության տրամաբանությունը, օրյեկտիվ բովանդակությունը տանու են տրվում բոլոր այն դեպքերում, երբ տեղափոխվում են բարոյական հարցադրումների, ինաստավորումների ու գնահատականների ոլորտը: Նույն այդ աշխարհի նասնիկն է նաև մարդը, որի նկարագրի վերաբերյալ չպետք է ունենալ ռոմանտիկ պատրանքներ, ըստ որոնց՝ մարդու մեջ գազանային նկարագիրն իր անհամոզիչ է կամ գարմանայի:

\* \* \*

Վստահ եմ, որ խնդիրը պետք է քննել շատ ավելի իրատեսական, որոշակի և իմանալի հարցադրումների, իրողությունների շրջանակում: Իսկ դա միակն է. **մարդը երկրային է նույնքան,** որքան բնության ցամկացած շնչավոր ու անշունչ, իսկ նրա նկարագիրն ունի զուտ երկրային փոխապայմանավորվածություններ: Այդ նկարագրի նույնիսկ ամենաանցանկալի ծշմարտություններից չպետք է խուսափել պատրանքներով, ինքնախարեւությամբ, սին ակնկալիքներով: Նույն այդ մարդու համար շատ ավելի օգտակար կարող է լինել ծշմարտությունն իրական գույներով: Այդպիսի մոտեցմանը, կարծում եմ, կունենանք իրողության հետևյալ պատկերը: Մարդն ինքնաբավ բնության բաղադրիչ արարածներից մեկն է՝ կեցության, տեսակի պահպանման նույն սկզբունքներով: Դա պարտադիր պայման է տեսակների գոյության փոխապայմանավորվածությամբ պահպանվող նախասահմանված համակեցության համար: Ակնհայտից էլ ակն-

հայտ է, որ ներդաշնակ համակեցությունը բնության բոլոր բաղադրիչների մեջ ամրակայել է տեսակի պահպանման ու շարունակման պահանջմունք: Յուրաքանչյուր տեսակ իր այդ գերխնդիրն իրագործում է ինքնամոռացման աստիճանի նվիրումով, հազար ու մի աներևակայելի ձևերով: Սակայն ոչ մի կենդանու կիրքը, հնարավորությունները չեն գերազանցում նախորոշված թույլատրելիի սահմանը, որը կարող է վտանգել համակեցությունը: Դրա շնորհիվ երաշխավորված են բոլոր տեսակների գոյությունն ու շարունակականությունը:

Այդպես չէ մարդու պարագայում: Կույր թվացող, բայց ամեն ինչ հրաշալիորեն ներդաշնակի սահմաններում պահպանող բնագդներին հավելվում է գիտակցություն-բանականությունը, և խախտվում է այդ ներդաշնակությունը: Մինչդեռ, ըստ բանականության վերաբերյալ մեր ինքնամեծար կարծիքի, թվում է, թե հակառակ արդյունքը պիտի ունենայինք: *Ուրեմն ի՞նչ, բանականությունն աշխարհի ներդաշնակությանն սպառնացող մարդ տեսակի էգոիզմի կրողն ու իրականացնո՞ղն է, այն անհամարելի՞ է համերկրային համակեցությանը: Միգուցե համատիեզերական ստեղծարար ուժի վրիպու՞ն է դա, տալու մեջ անթույլատրելիորեն շռայլ լինելու ողբերգական սիսա՞լը: Բոլոր այս հարցերը պաթետիկ են, զգացմունքային և մարդու բուն էությունը ճանաչելուց շեղող:*

Ըստ Էության, մարդը նույնպես տևական բնական էվույուցիայի արդյունք է, և նրա Էությունը հենց այն է, ինչ միայն կարող էր լինել: Յետևաբար կարող է միայն մի հարց լինել. ո՞րն է բանականության ամենաշատ չափաբաժինն ստացած մարդու դերը (կողավորվածությունը, ծրագրավորվածությունը) այս աշխարհում: Յարցն առավել ևս կարևորվում է հետևյալ ոչ բարդ ճշմարտության գիտակցումից. մարդու մեջ ակնհայտ է անհաղթահարելի մի երկվություն: Դա, կարծում եմ, պայմանավորված է նրանում առկա բանականի և ոչ բանականի չափաբաժիններով: *Մարդու մեջ դրանցից մեկը, թերևս, կամ ավել է, կամ պակաս: Մարդու վերաբերյալ մեր դրական պատկերացումներին մարդու համապատասխանության համար նրա մեջ ավել է, ամուր է*

նստած կենդանականը, և պակաս է բանականը: Պակասը փշաց-նում է մարդու մեջ և՝ մարդկայինը, և՝ կենդանականը: Արդյունքում ստացվել է անկարծեք արարած, որը բանականությամբ գորացած, անզուսպ, պահանջմունքների անսահմանափակությունից տառապող կենդանի է:

Բնության մեջ ոչ մի տեսակ հնքն իրեն և շրջապատի մյուս տեսակներին չի կարող բացասել. գայլերը չեն կարող ոչնչացնել եղերուներին, իսկ եղերուները, որքան էլ կենսունակ ու արագավագ, չեն կարող գայլերին սովի մատնել, և այսպես շարունակ: Բնության այս մասով ամեն ինչ հրաշալիորեն ծրագրված է ու կոդավորված, փոխապայմանավորված ու ներդաշնակ: Մարդու դեպքում, ցավոք, այդպես չէ: Մյուս կենդանիների համեմատ՝ ավելը (բանականությունը) այնքան չէ, որ նրան գիտակցորեն պահի բնական ներդաշնակ համակեցության մեջ: Մյուս կողմից էլ այդ ավելն այնքան քիչ չէ (ինչը բնորոշ է մի շարք կենդանիների), որ մարդը մեծագույն ցանկության դեպքում անզամ չկարողանա խախտել նախասահմանված համակեցությունը: Կարելի է մտածել, որ իր անկատարության պատճառով մարդը կործանման է տանում բնությունը, ուրեմն՝ նաև իրեն:

Խնդրի բովանդակությունը շատ ավելի տեսանելի կլինի, եթե դիտարկենք երկու հակադիր մշակութային միջավայրեր:

Ընդունված է ժամանակակից մարդու ինքնամեծար վերևներից ներողամիտ ժպիտով նայել ու ներկայացնել Աֆրիկայի, Ավստրալիայի, Հարավային Ամերիկայի բնիկներին, նրանց համարյա նախնադարյան կենսակերպը: Բայց նրանց կեցության մեջ կա հետաքրքիր մի ֆենոմեն. նրանք ասեն թե զուրկ են մարդու երկվության վերը նշված բնութագրից: Հավաքչության, որսորդության և քոչվոր անասնապահության մակարդակում մնացած այս ցեղերի կենսակերպը ներդաշնակ է իրենց կենսուլորտին: Նրանք կուշտ են, պաշտպանված նույնքան, որքան որ իրենց շրջապատի յուրաքանչյուր բույս կամ կենդանի: Նրանց տեսակի գոյությունը բնության կողմից երաշխավորված կամ վտանգված է նույնքան, որքան մնացած տեսակներինը: Եզրակացությունը միանշանակ է. ըստ էության՝ չառաջադիմող նրանց

կենսակերպը բարիք է ողջ բնության համար, մյուս տեսակների գոյության երաշխիքը:

Մյուս կողմում էլ արդի քաղաքակրթությունը մոլուցքով առաջ նղողն ակտիվ մշակութաստեղծ մարդն է, սպառնալի իրադրության հետ լրջորեն հաշվի չնստող մարդը: Հաճախ է մատնանշվում արևմտյան կենսակերպը, որում կարծես թե ի վերջո ձևավորվել է մարդու մի նկարագիր, որն ընդօրինակելի է իր բարձր կենսամակարդակով, մարդասիրությամբ և բնապահպանական մտահոգություններով: Բայց դժվար չէ այդ ամենի հիմքում ընկած կեղծիքը տեսնելը: Արևմուտքի քաղաքացին բարեկեցիկ է շնորհիվ նաև այն բանի, որ դարեր շարունակ թալանել և անխնա ունեզրկել է մնացյալ աշխարհը և անպաշտպան ժողովուրդներին:

Այժմ էլ նույն գործընթացներն են շարունակվում ավելի վայրենի ձևերով, քանի որ օրավուր ակնհայտ են դառնում աշխարհի գերբնակեցվածության սպառնալիքը և դրան համարժեք կենսամիջոցների սղության անլուծելի գերխնդիրը: Երբեք չափուի մոռանալ, որ երկրագնդի վրա ծավալված ամենադաժան ավերածությունների, կոտորածների նախաձեռնողն ու իրականացնողը եղել են Արևմուտքի «քաղաքակրթ, մարդասիրական մշակույթ» ստեղծած ժողովուրդները և նրանց իշխանությունները: **Ինչպիսին մարդն է, այնպիսին էլ միջմարդկային, միջպետական, միջազգային հարաբերություններն են:** Այստեղ պատրաճը հերթական հիասքափության ցավալի առիք կարող է լինել միայն. մարդու բարեփոխվելու, քաղաքակրթվելու, սպառողական մոլուցքից ազատվելու ակնկալիքները սին պատրաճ են: Յավոր սրտի, դա հնարավոր է գիտակից անհատների և ոչ թե ազգերի, առավել ևս՝ մարդկության մակարդակով: Յետքը դիրի է, որ մարդկության ստեղծած մշակույթն այս առումով մի առեղծվածյան իրողություն է արձանագրել բոլոր ազգերի կենսափորձում: Դա այն է, որ ամեն ինչը ոչինչ է, իսկ ոչինչը՝ ամեն ինչ: Այսինքն՝ և ամեն ինչ ունենալը, և ոչինչ չունենալը կյանքը, գոյությունը զրկում են իմաստից: Բայց առ այսօր աշխարհում չի եղել մի ազգ, պետություն, որն իր բարեկեցության մեջ հայտնա-

բերած լինի ավելին ունենալ-կուտակելու (հատկապես ուրիշների հաշվին) անհմաստությունը և իր կենսական էներգիան, նյութական հնարավորություններն ուղղորդի դեպի մարդու ոգեղեն եռթյան անդառնալի բարելավումը:

Այս ամենը կարող է երկու բացատրություն ունենալ. կամ մարդու տեսակը բնության արարչության վրիպումն է, շեղումն օրինաչափությունից, կամ էլ ամեն ինչ այնպես է, ինչպես պետք է լինի:

Առաջինը քիչ է հավանական: Բնության մեջ, տիեզերքում ամեն ինչ այնքան ճշգրիտ է հաշվարկված, այնքան ամուր են փոխապայմանավորող կապերը, յուրաքանչյուր տեսակի ներքին ու արտաքին ներդաշնակությունն իր կենսատարածքի, ընդհանուր կենսոլորտի հետ, որ հազիվ թե բնությունը տասնյակ հազարավոր տարիներ հանդուրժեր ողջ համակարգին սպառնացող որևէ շեղում կամ պատահականություն (այս դեպքում՝ մարդուն): Թերևս նաև այս խնդրի լուծման փնտրությունը արդյունքն է մարդու այլմոլորակային ծագման կամ նրա՝ այլմոլորակային միջամտության արդյունք լինելու վերաբերյալ չապացուցված վարկածը: Նրա բացառումը հենց ինքը՝ մարդն է՝ իր քինհական բաղադրությունից սկսած և ֆիզիկական կառուցվածքի արդյունք նկարագրով, հոգեկերտվածքով, կենսակերպով:

Իսկ եթե ամեն ինչ հենց այնպես պիտի լինի, ինչպես որ է (երկրորդ տարբերակը) ... Այդ դեպքում ամեն ինչ շատ ավելի իրական նկարագիր է ձեռք բերում և միանգամից ազատվում մեր զգացմունքային ընկալումներից ու գնահատականներից: **Ուզենք** թե ոչ, պետք է մտածնք, որ երկրագնդի վրա եղած (թե՝ ստեղծված), ոչնչացած (թե՝ ոչնչացված), առաջացած (թե՝ վերստեղծված) բազմաթիվ կենսահամակարգերից մեկն էլ սա է, որի բաղկացուցիչն է մարդը՝ այն սպառելով ոչնչացնելու առաքելությամբ: Եվ իսկապես, քաղաքակրթական ձեռքբերումները, որոնցով մենք ավելի հաճախ հպարտանում ենք, քան դիտարկում բոլոր երեսների համարությամբ, հանգիստ կարելի է ներկայացնել նաև ստվերոտ կողմերի շեշտադրմամբ: Նրա համար պետք կլինի ընդամենն ազատվել տեսակի էգոիզմից, ամեն

ինչին նայել կողքից, ամեն ինչ իմաստավորել բնության այն բաղադրիչների տեսանկյունից, որոնց հաշվին կայացել է այդ քաղաքակրթություն կոչվածը: Ահա այդ դեպքում այն մեզ կներկայանա որպես բնության մեջ եղածի հերթական ոչնչացման, սպառնան դրսևորում, աղետ, որն սպառնում է նաև մեզ: **Եթե բույսերը, անկենդան և կենդանի մատերիան մեզ հասկանալի լեզու ունենային, ապա տիեզերքով մեկ կաղաղակեին, որ բոլորի մեջ մարդն իսկապես միակ ամենան է, բայց որպես չլսված-չտեսնված գազան:**

Մարդու մշակութաստեղծ լինելու կարողությունը կարելի է ընկալել նաև որպես արարչությանը մասնակից լինելու բնության թույլտվություն: Այս դեպքում ականա մտածում ես, որ առկա բնական հաճակեցության համար մարդու տեսակի նպատակահարմարությունն է փորձարկվում, նրա գոյության հնարավոր իմաստը: Չէ՞ որ եղել են նախորդող կենսահամակարգեր, որոնք մշակութաստեղծ էակներ չեն ունեցել:

### Ուրեմն ի՞նչ է լինելու:

Դույս ու ակնկալիք ունենալ, որ մարդն աշխարհի բոլոր ժագերում մի օր ինչ-որ ցանկալի հրաշքով կվերափոխվի այնքամ, որ հաշիվ կտա իրեն իր գործումնեությամբ աշխարհում ստեղծված վիճակի վերաբերյալ ու համապատասխան վարքագիծ կղուսնորի թե՛քանակական ածի, թե՛տնտեսավարման ձևերի, թե՛միջնարդկային ու միջազգային հարաբերությունների առումով, քիչ է հավանական: Թերևս կարելի է ակնկալել անցանկալին. ուժեղներն ավելի անզիջում, ավելի անխնա կղառնան մնացյալի նկատմամբ: Ցավոք սրտի, համաշխարհային փորձն է ստիպում այդպես մտածել: Ցանկացած ազգ, պետություն, երբ կուտակել է ներքին որոշակի կարողություն, որով հնարավոր է թվացել մյուսներին ճնշելն ու ունեցրկելը, եռացել, դուրս է քափկել իր կաքսայից, չարիք դարձել մոտ կամ հեռու հարևանների համար<sup>39</sup>: Կանա-ականա գալիս ես այն եղրակացության, որ միջազգային, միջանական հարաբերություններում պատերազմներն անխուսափելի են որոշ խումբ հարցերի լուծման ժամանակ: Նետնաբար լրջորեն կասկածելի են այն մարդ-

*կանց անկեղծությունն ու մարդասիրությունը, ովքեր տեղից, ժամանակներից ու հանգամանքներից դուրս, վերացական պացիֆիզմ են քարոզում: Եիշտ նույնքան էլ համոզիչ չէ մարդուն նաև անվերապահորեն մեծարողների լավատեսությունը:*

\* \* \*

Գիտեմ, որ այս և հարակից հարցերը կարելի է քննարկել անվերջ: Ինչ այստեղ շարադրեցի, ընդամենը չնչին մասն է ենթադրվող ընդգրկման: Բայց այդքանն էլ արեցի ոչ թե վերջին աստիճանի ծշմարտություններ ասողի միամիտ համոզվածությամբ, այլ, ինչպես զգացիք, քննարկման համար վաղուց հասունացած հարցեր, խնդիրներ առաջադրելու անհրաժեշտության գիտակցմանբ: Մի բան ևս. չէի ցանկանա, որ մարդու վերաբերյալ այս էջերում առկա անցանկալի ծշմարտություններն առիթ դառնային հիասքափության կամ հոռետեսության: Ուղղակի պիտի նկատի ունենալ, որ շատ ավելի հեշտ է դարձնում ապրելը, եթք ինքնախաբեռությամբ չես օրորում ինքդ քեզ, եթք ճիշտ ես ճանաչում բնության արարածի եռությունը: Իսկ նա արարվել է անիմանալի այն նախանյութից, ինչ որ տիեզերքն իր ամեն ինչով: Եվ որքան իմ կենսափորձն է ինձ թույլ տվել ճանաչել մարդում, ապա նրա նկարագիրը համարժեք է տիեզերքին: Նրա հոգում և մտքի մեջ լույս ու խավարի հարաբերակցությունը նույն է, ինչ որ տիեզերքում: Երկուսում էլ, ցավոք սրտի, գերիշխում են ցուրտն ու խավարը:

Բայց դրա գիտակցումից չպետք է արժեզրկվի միայն մեկ անգամ տրված կյանքը լավատեսորեն ապրելու անհրաժեշտությունը: Բոլոր ժամանակներում էլ մարդը եղել է և մնալու է ընդամենն իր էռության կատարածուն: Ուղղակի պետք է գիտակցել, որ մեր կենսահամակարգին լրջորեն սպառնացող գործոններից մեկն էլ հենց մարդու գործունեությունն է: Ողջախոհության կոչող, ինքնասիրահարվածությունից մարդուն սթափեցնելու ահազանգերը վաղուց են հնչում, սակայն կարծես թե առանց լուրջ հետևանքների:

Որպես օրինակ՝ բերեն հայտնի աստղագետ-ֆիզիկոս Ս. Շոքինգի դատողություններից մի խումբ, որը քաղել եմ էլեկտրոնային աղբյուրներից:

- Վտանգն այն է, որ իրար և շրջապատող միջավայրն ավերելու և ոչնչացնելու մեր կարողությունը հասունանում է ավելի արագ, քան այդ կարողությունն օգտագործելու իմաստությունը:

- Մենք հակված ենք բանականությունը համարել էվոլյուցիայի անխուսափելի հետևանքը: Սակայն բոլորովին էլ ակնհայտ չէ, որ գոյատևման առումով բանականությունը նշանակալի արժեք է: Մանրէները գերազանց ապրում են առանց նրա և կվերապրեն մեզ էլ, եթե, այսպես ասած, բանականությունը հասցնի միջուկային պատերազմում ինքնառչացման:

- Որոշ մարդիկ միջուկային գենքի համար մեղադրում են էյնշտեյնին, քանի որ նա բացահայտեց մասսայի և էներգիայի հարաբերակցությունը: Բայց ինքնաթիռների կործանման համար նույնայիսի հաջողությամբ կարելի է մեղադրել նաև Նյուտոնին, որովհետև նա է հայտնաբերել ձգողականության ֆենոմենը:

- Մարդկային ռասայի հաշվեկշռում այնքան էլ շատ չեն բանական մեծագործությունները:

- Կասկածից դուրս է, որ այն, ինչ մենք անվանում ենք ինտելեկտ և գիտական մտածողություն, անցյալում առավելություն է տվել գոյության համար պայքարում: Սակայն այնքան էլ պարզ չէ, թե դրանք արդյոք տալի՞ս են նման առավելություն նաև այսօր:

- Դժվար է կանխատեսել, թե ազատ կամքն ինչպես կարող է գործել, եթե մեր վարքագիծը որոշվում է ֆիզիկայի օրենքներով: Այնպես որ մենք հավանաբար ոչ այլ ինչ ենք, քան կենսաբանական մեքենաներ, իսկ կամքի ազատությունն ընդամենը պատրամք է:

## ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ

Երկրագնդի բնակեցումը հնարավոր դարձավ առաջին մարդկանց ընտանիքների ու տոհմերի տեղաշարժերի շնորհիվ: Այս գործընթացը դժվար է արտագաղթ անվանել: Դա լրացուցիչ կենսամիջոցներ հայթայթելու, արդեն բնակեցված տարածքները բեռնաբափելու, անբնակ վայրերը յուրացնելու և այլ նպատակներ էր հետապնդում: Մեր այսօրվա ըմբռնմանը արտագաղթի մասին կարելի է խոսել միայն այն պահից, երբ բնիկ ժողովուրդը լքում է դարերով իրենը դարձած կենսատարածքը՝ հայրենիքը: Դայրենիքից այդպիսի հեռացումը երբեք չի լինում կամովին: Այսինքն՝ չի կարող լինել այնպես, որ առանց որևէ լուրջ պատճառի մարդկանց շատ թե քիչ նկատելի ինչ-որ քանակ լքի հայրենի բնակավայրը: Դրա համար էլ թվում է, թե միանգանայն ավելորդ է բռնագաղթ հասկացությունը: Արտագաղթը միշտ էլ հետևանք է որևէ բռնության (ներազգային կամ միջազգային), որը, սակայն, ըստ այդ բռնության տեսակի և իրականացնան ձևերի, կարող է շատ ակնհայտ կամ համեմատաբար աննկատ լինել: Ակնհայտ է ազգային, քաղաքական, պատերազմական (շրջադարձային իրադարձություններ) հանգանաքներում ծավալվող արտագաղթը, իսկ հասարակության կառավարման, սոցիալական, տնտեսական և նման այլ հանգանաքների պատճառով ծավալվող արտագաղթը սովորաբար ավելի տևական է ու դանդաղ, իր մասշտաբներով համեմատաբար ուշնկատելի: Մարդկության պատմությունը լի է ժողովուրդների արտագաղթի բազմաթիվ դրսնորումներով:

Մեր պատմությունն այդ առումով ցավալիորեն տարբերվում է շատ ու շատ ժողովուրդների պատմությունից. այն մեզ համար սովորական է դարձել արտագաղթ, գաղթօջախ, գաղթական և նման բառերով անվանվող ցավալի իրողությունները: Դարավոր ու անընդմեջ այդ գործընթացների արդյունքում ձևավորվել է համարյա ողջ աշխարհն ընդգրկող մեր Սփյուռքը: Ես չգիտեմ՝ աշխարհի քանի ժողովուրդ ունի սփյուռքի համրագիտարան: Մենք ունենք, և այն ներկայացնում է յոթանասուն երկրներում եղած հայկական գաղթօջախների պատմությունը: Նպա-

տակս հայության պարբերաբար կրկնված արտագաղթերի մասին խոսք ու գրուց սկսելը չէ: Բացեք «Դայ սփյուռք. հանրագիտարան» ցավալիորեն ծավալուն գիրքը և շատ բան կիմանաք դրա վերաբերյալ: Մասնավորաբար այն, որ դարավոր փորձից ելնելով՝ կարելի է հայրենիքից ժողովուրդների արտագաղթի երեք հիմնական պատճառ մատնանշել՝ տնտեսական, կրոնական և քաղաքական:

**Սակայն ես ուզում եմ, որ մեր դեպքում արտագաղթի իրողությունը փորձենք հասկանալ արդեն սովորական դարձած մեկնաբանություններից տարբեր մոտեցմամբ:** Այսինքն՝ փորձենք հասկանալ, թե դարեր շարունակ մեր պատմությունից արդեն անբաժան արտագաղթի կործանարար իրողությունը մեզ համար արդյոք չի՝ դարձել ազգային օրինաչափ կենսակերպ, ազգային նկարագրից և հոգեկերտվածքից բխող վարքագիծ: Թվում է, թե նաև սա է մեզ շատ ու շատ այլ ժողովուրդներից զանազանող կարևոր իրողություններից մեկը: Մենք աշխարհին կարծես թե արդեն սովորեցրել ենք մեզ նայել ներողամիտ ժամանակով, մեզ ճանաչել ու գնահատել որպես հալածյալ, որպես իր պատմության ցավալի ու ողբերգական հանգամանքներին դիմակայել չկարողացած ժողովրդի: Մեզ էլ, կարծես, լոջորեն դուր է գալիս ցավակցողի նրանց վերաբերմունքը, որովհետև դա հույս է ներշնչում, որ ի վերջո կգտնվի մի հովանավոր երկիր, որը մեր փոխարեն իր շալակը կառնի մեր չլուծած խնդիրների բեռը:

**Իսկապես, բոլոր ժողովուրդների կյանքում էլ եղել են քաղաքական, սոցիալ-տնտեսական ծանրագույն իրավիճակներ, որոնք սկզբնավորել են արտագաղթեր: Բայց սա մի բան է, և միանգամայն այլ բան, երբ արտագաղթը դառնում է յուրաքանչյուր նման դեպքում իրավիճակից ելքի նախընտրված վարքագիծ: Սա կենսական հանգամանքներին թույլ դիմադրության, ավելի ծիշտ՝ ընդհանրապես չղիմադրելու վարքագիծ է: Զէ՞ որ բարեկեցիկ, ուժեղ պետություն և պաշտպանված հայրենիք ունեցող ոչ մի ժողովուրդ չի գնացել այդ ճանապարհով:**

Ահա այս նկատառումներից ելնելով է, որ ցանկանում են ձեր քննարկման համար առաջադրել հիմնախնդրին վերաբերող

հարցերի մի փոքր խունք: Ուզում եմ հավատալ, որ դրանց քննարկումն առիթ կդառնա նորովի գնահատելու և արտագաղթ կոչված կործանարար իրողությունը, և մեր եթնիկ նկարագիրն ու պատմական ճակատագիրը:

• **Ի՞նչո՞ւ է հայն այդքան հեշտությամբ իր ներսը դատարկում իր հայրենիքից, խորթանում իր ճակատագրին, խուսափում իր երկրում իր բարեկեցիկ կյանքը, ուժեղ պետականությունը ստեղծելու անհրաժեշտությունից, որն առաջնահերթություն է գոյատևել ցանկացող յուրաքանչյուր ժողովրդի համար: Ասեմ, որ դրա անհրաժեշտությունը հասկացել ու դրա իրականացման համար պայքարում են նույնիսկ ... քրդերը:**

• **Ի՞նչ կարող է լինել, եթե մեր կենսակերպից դժգոհ արտագաղթողների այդ քանակը մնա երկրում, ապահովություն չփնտորի այլ երկրներում:**

• **Աշխարհում երբեւ եղե՞լ է հայկական որևէ գաղթօջախ, որտեղ հայի կյանքը, կայքը, բարեկեցությունը չեն վտանգվել կամ էլ չեն վտանգվելու ապագայում:**

• **Գաղթօջախի հայը կարո՞ղ է ապրել տվյալ երկրի բնիկ ազգաբնակչության նման, հասարակության լիարժեք քաղաքացու կենսակերպով, քանի դեռ մնում է հայկական մշակույթի և կենսական արժեքների կրող:**

• **Աշխարհում երբեւ եղե՞լ է երկիր, որը, իր ցավալիորեն սակավ ազգաբնակչությունից արտագաղթողների այդքան կործանարար քանակ ունենալով, հաջողել է ոչ միայն շեն ու զարգացող լինել, նաև դիմակայել իր վերջնական բնաջնջմանը ձգտող թշնամի հարևաններին:**

Այստեղ ավելորդ չի լինի նկատի ունենալ նաև կենսաբնական հետևյալ անշրջելի օրինաչափությունը: Տեսակների մահը պրոցես է, որը բացառիկ դեպքերում է միանգամից լինում: Սովորաբար գալիս է մի պահ, երբ պոպուլյացիայի քանակը քչության առումով անցնում է այն սահմանային գիծը, որից հետո գենը կորցնում է կենսունակությունը, գոյատևման համար անհրաժեշտ բազմազանություն /տվյալ տեսակի սահմաններում/ պահպանելու կարողությունը:

Մնացյալ հնարավոր հարցերը հավանաբար դուք ինքներդ կառաջադրեք ձեր քննարկման ժամանակ՝ ըստ ձեր կենսափորձի և կենսական անհրաժեշտությունների: Միայն, որպես վերջին և կարևորագույն հարցադրում, ցանկանում եմ, որ լրջորեն մտածեք հետևյալի մասին: Մենք այս երկրից հեռանում ենք փախչել-ազատվելու պես: Բայց դա իրականում փախուստ է մեր կենսակերպից, թե՞ ինքներս մեզնից, մեր մասին մեր երևակայական կարծիքի և իրական նկարագրի անհամապատասխանությունից: Մի՞թե ամեն ինչ չի սկսվում ինքներս մեզ սխալ ճանաչելուց, մեզնից անհույս հիմքափությունից և իրականությունը փոխելու պատրաստակամության պակասից:

Մենք ոչ մի կերպ չենք ուզում հասկանալ, որ աշխարհում չի եղել ու չի էլ լինելու ոչ մի տեղ, որտեղ եթե չկա ամենօրյա նվիրյալ աշխատանք և ներքին ու արտաքին պայքար, ավելիին հասնելու անկանելի մղում, չի լինելու բարեկեցություն: Աշխարհի ոչ մի ժողովուրդ չի բարգավաճել առանց պայքարի, աշխարհում չկա մի տարածք, որտեղ ժողովուրդները գոյակցում են խաղաղ՝ միայն ստեղծելով ու վայելելով: Ինքն իրեն, իր կենսակերպին, երկրին, առկա սոցիալական ու քաղաքական հանգանանքներին խորրանալու, փախուստի ու մեկուսացման մարդկային վարդագիծը նորագույն ժամանակների եվրոպական փիլիսոփայության և մշակութաբանության հիմնախնդիրներից է: Այդ ամենին և արդի հայկական իրականության մեջ դրանց դրսևորումների գիտական վերլուծությանը կարելի է ծանոթանալ Մ. Յարությունյանի «Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը» մենագրությունից, գրականության ցանկում ներկայացված համապատասխան այլ աշխատություններից:

Բոլոր դեպքերում հարկ է իմանալ շատ կարևոր մի բան: Ոչ մի ժողովուրդ ու պետություն ապահովագրված չէ իր գոյությանը և առաջընթացին սպառնացող վտանգներից: Բայց միշտ շահում են նրանք, ովքեր ժամանակին գիտակցում են հասունացող անհրաժեշտություններն ու լրջորեն զբաղվում իրենց համար կենսական կարևորության հիմնախնդիրներով:

## ԵՂԵԼՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՅՈՒԹՅՈՒՆ<sup>40</sup>

**Մարդկության մշակութաստեղծ գործունեության ողջ ընթացքի մեջագույմ ձեռքբերումը խոսքն է:**

Եվ բոլորովին էլ կարևոր չէ, թե մարդու բանական-մշակութաստեղծ լինելը բացատրելու փորձերից որ տեսակետի (կրոնական, աշխատանքային-էնգելայան, գենետիկ-կենսաբանական և այլն) կողմնակիցը կարող է լինել յուրաքանչյուր ոք: Կարևոր է հետևյալ ակնառու ճշմարտությունը. գիտակցությունն անգամ անճարակ կլիներ, և մարդկային կեցությունը կզրկվեր իմաստից, եթե չլիներ խոսքը: Մի փոքր էլ չափազանցելով՝ կարող ենք ասել, որ մարդ տեսակի համար ամեն ինչ սկսվում է խոսքից և ավարտվում խոսքով: Նա է «խոսեցնում» տեղեկություն պարունակող բոլոր օբյեկտները, նաև ապահովում գոյությունը տեղեկատվական բոլոր համակարգերի: Խոսքի անփոխարինելի նշանակությունը ճշտելու համար բավական է միայն մի պահ պատկերացնել, թե ինչ կլինի, եթե այն դադարի գոյություն ունենալուց:

Խոսքը կարող է լինել արարիչ, կարող է նաև դատապարտել ոչնչացման, նայած թե ով է գործառում նրանով: Որովհետև նա ոչ միայն արձանագրում է մեզնից անկախը, մարդու մասնակցությամբ եղածը, նաև կամա-ակամա ծրագրում է լինելիքը: Մենք ամեն ինչ գիտենք այնպես, ինչպես ներկայացվում է խոսքի մեջ: Դեռևսաբար խոսքային է նաև եղելության գոյակերպը մեր իմացության մեջ:

\* \* \*

**Եղելությունն իմքնակա է, անկախ է մեր իմացությունից, մեկնարանությունից, իմաստավորումից:** Յուրաքանչյուր եղելության նախորդում է պատճառը, և հաջորդում հետևանքը: Այս շղթայի ամեն միավորը միաժամանակ և պատճառ է, և եղելություն, և հետևանք, նայած թե ժամանակի ինչ կտրվածքում է

դիտարկվում: Սակայն այս շղթայի մշտապես դերափոխվող միավորների մեջ ամենակարևորը թերևս եղելության գոյակերպն է: Մարդու համար այն փաստի նշանակություն է ստանում, եթե դառնում է ըստ ամենայնի և օբյեկտիվորեն ճանաչված: Ժամանակի յուրաքանչյուր հատույթում եղելությունը փաստի է վերածվում (ներառվում է ինացության ոլորտ, փաստվում կամ փաստագրվում է) խոսքով: Դա է մեր գիտակցության մեջ եղելության գոյության հնարավոր միակ, ավելի ճիշտ՝ լավագույն կերպը: Սակայն երբ եղելությունը «վերածվում է» խոսքի, մասամբ կամ ամբողջապես զրկվում է ամբողջականությունից կամ օբյեկտիվ բովանդակությունից: Պատճառները շատ են. նշենք միայն, որ փաստողը կամ փաստագրողը մարդն է, որը, մեծագույն ցանկության դեպքում անգամ, գործնականում համարյա չի կարող՝ ա. եղելությանն իրազեկ լինել ամենայն մանրամասնությամբ.

բ. եղելությունը փաստել կամ փաստագրել բացարձակ անկողմնակալությամբ (սոցիալական հանգամանքներ, ընդունակություններ, աշխարհայացք, համակրանքներ ու հակակրանքներ և այլն):

Հենց այդ պահից էլ և այդ ու այլ պատճառներով սկսվում է մեկ այլ բան, որը եղելության հիմքով է, բայց ավելի հաճախ եղելությունը չէ: Դա պատմությունն է<sup>41</sup>: Պատմության գոյակերպն առաջին հերթին խոսքային է, և այն մեզ լավ ծանոթ է իրու պատմագրություն, մատյան, ուսումնասիրություն, դասագիրք, համրամատչելի և գեղարվեստական գրականություն, առասպել, էպու... Ընդհանրացված՝ մարդկային հիշողության (հատկապես հասարակական և պատմական<sup>42</sup>) ու ինացության բանավոր կամ գրավոր խոսքային դրսնորման ցանկացած կերպ:

\* \* \*

Եղելությունը չի կարող պատմություն դառնալ, քանի դեռ ֆիզիկապես գոյություն ունեն այդ իրողությունները որպես կենսագրություն ապրած սերունդները: Յաջորդ սերունդները, իրենց կենսական հանգամանքներից և կենսական անհրաժեշտություն-

Աերից Ելմելով, հետահայաց (ռետրոսպեկտիվ) իմաստավորմանք պատմելով կամ վերապատմելով Են Եղելությունը պատմություն դարձնում: Դա Եղելության իմաստավորումն է պատմողի նիշնորդությամբ, որը մարդու մշակութաստեղծ գործունեությանը բնորոշ կարևորագույն հանգամանք է ընդհանրապես: Նույնիսկ ինքնակա բնությունն ու իր իրողությունները մենք ընկալում, իմաստավորում ու արժենորում Ենք իրենց օբյեկտիվ գոյակերպը, գոյության իմաստն ու արժեքն արհամարհելով: Մեր վերաբերնունքն այդ ամենի նկատմամբ ոչ թե մեր՝ որպես ամբողջի բաղկացուցչի գոյությամբ հայտնաբերված վերաբերնունք է, այլ նախկին տիրոջից ժառանգություն ստացածի լիիրավ տիրոջ պահվածք, որի եսակենտրոն շահն այդ ամենի իմաստավորման միակ դիտանկյունն է:

**Դետևաբար պատմությունն արդեն իսկ կայանում է որպես մի փաստ, որի մանավանդ բովանդակությունը կարող է լրջորեն տարրեր լինել Եղելության բովանդակությունից: Նրանում, ինչպես արդեն ասվեց, անպայման (բացահայտ կամ անգամ հնարավորինս չեզոք պահվածքի թվացյալ օբյեկտիվության շրջանակներում) էական մասնակցություն Են ունենում ժամանակի պահանջմունքը, պատմող անհատի էությունը<sup>43</sup>:**

ճիշտ է, թե սխալ, լավ է, թե վատ, միևնույնն է, Եղելության իմացությունը (այնպես, ինչպես մենք Ենք այն իմաստավորում) զգալիորեն հեռանում է Եղելության ժամանակից, օբյեկտիվ, անկախ կեցությունից ու բովանդակությունից: Այսինքն՝ մեր գիտակցությունը չի կարող Եղելությունը ճանաչել առանց պատմության փոխարկելու, ուրեմն և վերահմաստավորելու: Դետևաբար շատ կասկածելի է այն համոզմունքը, թե մենք ճշգրիտ գիտենք կամ կարող Ենք իմանալ Եղելությունն իր բոլոր հանգամանքներով և նախնական, ամբողջական բովանդակությամբ: Դրա համար էլ նույն Եղելությունը յուրաքանչյուր անգամ պատմվում է վերստեղծվելով ու վերահմաստավորվելով: Սա օրինաչափություն է մարդու կենցաղային, կենսագրական իրողություններից մինչև համազգային ու համաշխարհային նշանակության Եղելությունները պատմության փոխարկվելու գործընթացում<sup>44</sup>:

Դրանում, ինչպես տեսանք, էական է խոսքը:

Պատմությունը կյայանում է նաև այլ արտեֆակտերով՝ անհատական կամ պետական կարևորության իրեղեն հավաքածուներ (արխիվ, թանգարան)<sup>45</sup>, հուշարձաններ, տեղանուններ, հիշատակի ու տոնակատարության օրեր, որոշ անհատների շուրջը համազգային հարգանքի ու մեծարանքի մթնոլորտի ձևավորում և այլն<sup>46</sup>:

*Այսպես թե այնպես, ի վերջո եղելության փոխարկումը պատմության անպայման տեղի է ունենում ժամանակների համարության կամ հակառակության (եղելության ժամանակ և պատմողի կամ պատմագրողի ժամանակ) սկզբունքով։ Այստեղ ու այսպես հանդիպում են անցյալն ու ներկան։ Այդ հանդիպման ժամանակ անցյալի եղելությունը մեզ համար պատմության է փոխարկվում։ Իմաստավորվելով կամ վերահմաստավորվելով ըստ ներկա հանգամանքների պահանջմունքների, կենսական անհրաժեշտությունների և մարտահրավերների։ Սակայն այդ հանդիպումն իմաստավորվում է մի կարևոր առումով ևս, որի մասին քիչ հետո...*

\* \* \*

Եղելությունը պատմության փոխարկվելիս խախտում է ժամանակի վերաբերյալ երեք չափումներով բնութագրվող (անցյալ, ներկա, ապագա) գժային և պարզունակ մեր պատկերացումը։ Բայց մինչ դրա մասին ասելը հարկ է նշել, որ նույնիսկ նման պարզագույն ընկալման մեջ էլ առկա է մի կարևոր պայմանականություն։ Դա ներկայի և ապագայի հարաբերականությունն է, որն ակնհայտ է առաջին իսկ հայացքից։ Միակ որոշակին և անվիճարկելին անցյալն է, որը, անկախ իր տևողության վերաբերյալ (սկզբի անորոշությունը) մեր իմացությունից, անընդհատ և անկասելիորեն մեծացող միավոր է։ Ապագան, ըստ ամենայնի, նույնպես մեծ (վերջն անհմանալի է), բայց ամեն ակնթարթ նվազող միավոր է։ Իսկ ներկան, որը, մեր ընկալումներում վայրկյան, րոպե, ժամ, օր և այլն լինելուց բացի, եթե անգամ դար էլ լինի, միևնույն է, փոքր և անկայուն տևողություն է։ Էլ չեմ ասում խնդիրը տիեզերական անվերջության մեջ դիտարկելու մասին։

Անվերջություն, որի համադրությամբ անցյալ–ներկա–ապագա չափումը (մանավանդ մարդկային կյանքի տևողությամբ որոշակիացող), ըստ Էռլեյան, աննկատ, անգոյ պայմանականություն է: Բայց նույնիսկ մեր ընկալումների սահմաններում էլ ներկան նաև խաբուսիկ միավոր է. այն ամեն ակնթարթ անցյալի փոխարկվող ապագան է:

*Ժամանակի մարդկային ընկալման վերաբերյալ այս փոքրիկ դիտարկումն անգամ ակնհայտ է դարձնում անցյալ–ներկա–ապագա միավորներից յուրաքանչյուրի նկատմամբ հոգեբանական վերաբերմունքի բնույթը: Պատահական չէ, որ մարդու համար իմաստով լեցուն, խորհրդատու, համեմատաբար կայուն և իմանալի, շատ թե քիչ վստահելի միակ տիրույթն անցյալն է: Ահա թե ինչու անցյալին վերադարձը, անցյալը նորից ու նորովի «խոսեցնելու» պահանջմունքը մշտապես տրոփող պահանջմունք է և՝ շարքային քաղաքացու, և՝ գիտնական մասնագետի, և՝ ազգի համար:*

Սակայն եթե շարունակենք խնդրի քննարկումն առօրեական ընկալումներից ու պատկերացումներից դուրս հանգամանքներում, ապա հնարավոր կլինի ցույց տալ ներկայի թեև պայմանական, բայց շատ ավելի «շոշափելի» գոյակերպեր: Դրանցից, նկատի ունենալով հոդվածի բովանդակությունը, կարելի է առաջին հերթին առանձնացնել այս մեկը՝ պայմանականորեն անվանելով մշակութային ներկա: Դրա անորոշ թվացող ընդգրկման մեջ կողմնորոշվելու համար պիտի հաշվի առնել հետևյալը: *Անցյալից այն ամենը, ինչը մենք համարում կամ ընկալում ենք որպես մեզ վերաբերող, մեր նկարագրի ու կենսակերպի առումով էական, շարունակում է գոյատևել ու մասնակից լինել մեր ֆիզիկական ներկային: Եվ հակառակը: Նետևաբար անցյալին վերաբերող մեր հիշողության դաշտը որոշակիորեն բովանդակավորված ռեալություն է, որը ծևավորվում է որոշակի ընտրությամբ գոյացած մշակութային արժեքների խմբով: Եվ անհատները, և՝ ազգերը, թեկուց բազմաթիվ միջնորդավորումներով, զգալիորեն դրանով են իմաստավորում իրենց ֆիզիկական ներկան ու ապագան: Ընդ որում, պիտի նկատի ունենալ, որ այս դեպքում մշակու-*

թային ներկան ու իմացությունը դառնում են միանգամայն տարբեր ընդգրկումներով հասկացություններ: Տարբեր աղբյուրներով ծևավորված իմացության նույնիսկ հսկայական ծավալից կարող է մի չնշին մասը միայն վերածվել մշակութային ներկայի: Միայն այն մասը, որը, անկախ ժամանակների ու սերունդների հեռավորությունից, այդ հիշողությունը կրող անհատը կամ սերունդն ապրում ու վերապրում է իրեն անձնական ծակատագիր:

Կոնկրետ ժամանակից ու կենսական հանգամանքներից վերացարկմամբ ծևավորվող ներկայի մի տարբերակն էլ կարելի է անվանել երևակայական ներկա: Սա դրսևորվում է երևակայական (մտապատկերներ) կամ պայմանական ռեալության (դեկորացիա) հանգամանքներում: Ըստ Էռթյան՝ երևակայական ներկան խաղն է (և՝ մանուկների, և՝ մեծահասակների) և օժտված մարդու ստեղծագործական աշխատանքը: Մարդու գործունեության այս ձևի մեջ ներկայի դրսևորման առանձնահատկություններին անդրադարձը վերաբերում է ավելի շատ թերևս արվեստագիտությանը, հոգեբանությանն ու մանկավարժությանը, որի պատճառով էլ այն մանրամասնելը հարկ է թողնել ավելի պատեհ առիթի: Բայց մի նկատառում անելու հրապուրանքից չեն ուզում ինձ գրկել: Այն հետևյալն է. ներկայի այս տարբերակը հեշտությամբ է ներառում ոչ միայն իր արարողին, այլ նաև իր պայմանականությանը հարաբերվող, հաղորդակից մարդկանց: Այժմ դրան զգալիորեն նպաստում են նաև օգտագործվող տեխնիկական միջոցները:

Սակայն վերադառնանք ներկայի դրսևորման առանձնացված տարբերակի դիտարկմանը, որի վերաբերյալ ասվածը կարելի է ամփոփել այսպես: Արդեն ասվեց, որ պատմությունը կայանում է եղելության (անցյալ) և պատմողի կամ պատմագրողի (ներկա) ժամանակների հանդիպման ձևով: **Թեև ներկան հարահոս ակնթարթ է, բայց անտեսել չի կարելի, որովհետև հենց նշված հանդիպումից է ոչ միայն իմաստավորվում կամ վերահմաստավորվում անցյալը, նաև կողավորվում ապագան:** Պատմվելով կամ վերապատմվելով ձևավորվող պատմությունը կամակամա ամբողջացնում—ամրապնդում է ազգային տարբերակից

առանձնահատկությունների այն համախումբը, որն ընդունված է անվանել արժեհամակարգ: Նաև դրանք մարմնավորող ազգային (հաճախ նաև այլազգի) այն գործիչներին, որոնք աստիճանաբար դառնում են արքետիպեր: Արժեհամակարգը պահպանելը, արքետիպերին ընդօրինակելը և հաջորդ սերունդներին ոչ միայն փոխանցելը, այլ նաև նրանցից նույնը նախանձախնդրորեն պահանջելը դառնում են նույնիսկ չգիտակցված, բայց կենսական կարևորության համազգային նպատակ, վարքագծի դեկավար, գոյության իմաստ: *Ուստի կարելի է վստահորեն պնդել, որ դեռևս գոյատևող ազգերի կյանքում ինչ լինելու է, արդեն եղել է, ինչ ասվելու է, վաղուց ասվել է*<sup>47</sup>: Այսինքն՝ եղելությունների կրկնություններն արդեն ըստ այնմ, թե մենք նրանց ինչ իմաստներ ենք վերագրում, հաճախ անխուսափելի են այնքանով, որքանով որ պատմության միջոցով դրանք նախապատրաստվում-ծրագրվում են: Իսկ ապագայի ծրագրումը, արդեն դժվար չէ գլխի ընկնելը, տեղի է ունենում երկու ձևով՝ կամ եղելությունը գաղափարականացնելով (եղելության պատմություն), կամ գաղափարը պատմականացնելով (պատմությունն իբրև եղելություն): Առաջինը եղելության իմաստավորումն է, երկրորդը՝ չեղած, բայց անհրաժեշտ եղելության հորինումը:

\* \* \*

**Պատմության գոյության իմաստն ու նպատակն ազգային հոգեկերտվածքի, ինքնագիտակցության ձևավորումն է:** Նշանակալին այն է, որ նրա կարևորագույն, իր գոյությունն իմաստավորող գործառությը նազաքափ չի պասիվանում նույնիսկ այն դեպքում, եթե պատմողն անզամ չի գիտակցում դա: Իսկ պատմվում է, ըստ էության, ոչ թե այն, ինչ և ինչպես իրականում եղել է, այլ պատմվում է ըստ արդեն իսկ ձևավորված արժեհամակարգի պահանջարկ ունեցողը կամ այն, ինչը հիմնավորում է այդ արժեհամակարգի անհրաժեշտությունը, ճշտությունը, նպատակահարմարությունը:

**Ինքնըստինքյան հասկանալի է, որ մենք էլ մեր ձևավորած պատմության (եղելությունների իմաստավորման) արդյունքում**

դարք դարի վրա ունեցել ենք այն, ինչն ակնհայտ է որպես ազգի փաստացի կեցություն: Իսկ դրանից դժվար չէ գիշի ընկնել, որ մեր կեցությունը բացարձակ նույնական է մեր արժեհամակարգին և ազգային ինքնագիտակցության կողավորվածությանը<sup>48</sup>:

Ասվածն ապացուցելու համար կարելի է վկայաբերել միշտը օրինակներ, որոնք մեր կեցության և գիտակցության նորմերից են:

• *Մենք զարմանում ու փորձում ենք հասկանալ, թե ինչպես կարելի է բազմաթիվ ճակատամարտերում հաղթելուց հետո ի վերջո պատերազմը տանով տալ (Սպարտակ, Դաննիբալ, Նապոլեոն և այլք): Բայց նույնիսկ չենք էլ փորձում հասկանալ, թե կարո՞՞ն է արդյոք հաղթանակը ... բարոյական լինել, իսկ ողբերգությունը՝ նույնիսկ ... լավատեսական: Մինչդեռ մի քիչ սթափ հայացքն անգամ հեշտությամբ կարող է նկատել, որ բարոյական հաղթանակ ասվածն անձարակի միսիթարություն է, հոգեբանական սպեկուլյացիա և մտածողության աբսուրդ:*

• *Մենք մեզ համոզել և համառորեն շարունակում ենք համոզել, որ անցյալում պետականությունից հիմնականում զուրկ ժողովուրդ ենք եղել ու հետևաբար՝ հիմա էլ չենք կարող ունենալ:*

• *Իբր մենք մշտապես մաքառել ենք ու պայքարել (իմա՝ դիմացել) գոյատևման համար: Այսինքն՝ գոյատևումն է եղել հազարամյակների մեր գերխմնդիրը:*

• *Պետականություն չունեցած ժամանակ մեր եկեղեցին իբր փոխարինել է նրան: Մեր եկեղեցուն մեծարելու ակնհայտ նպատակով այսպես ասողները չեն էլ գիտակցում, որ եկեղեցուն ու հոգևորականությանն ավելի լուրջ մեղադրանք հնարավոր էլ չէ ներկայացնել: Այն պարզ պատճառով, որ մեր մեծագույն և անդառնալի կորուստները եղել են հենց պետականությունից զուրկ շրջանում:*

• *Մեր ծախողումների և կորուստների մեջ մեղավոր են*

հզորները, որոնք մեզ կամ հալածել ու կոտորել եմ, կամ կարող էին հովանավոր լինել, բայց չեն եղել: Այդպես մենք լռությամբ անգիտանում ենք մեր պարտքն ու պատասխանատվությունը մեր գոյության համար:

• Ազգի մեր տեսակի վերաբերյալ մեր և այլոց պատկերացումները մենք սովորաբար ձևավորում ենք սկսած քրիստոնեության ընդունման ժամանակահատվածից: Դրանից առաջ ասես ոչ եղել էինք, ոչ էլ նկարագիր ունեինք:

• Զգիտես ինչու, վստահ ենք, որ հենց այդ թվականին և այդքան հապշտապ քրիստոնեանալը շատ անհրաժեշտ էր ու միակ ճիշտ քայլը, որ չձուլվեինք այլոց:

• Մեզ համար լրացուցիչ փաստեր բերելու անհրաժեշտություն երբեք էլ չի եղել, որպեսզի մի ավելորդ անգամ էլ համոզվենք իայի անմիաբանությամբ աքսիոնայի մեջ: Մեր մի մասն անսխալական, անքննելի հայրենասեր է, մյուսը՝ դավաճան. ոչ թե այլընտրանք փնտրող, առկա ստերեոտիպին չհամակերպվող, այլ անպայման դավաճան:

• Այս աշխարհում իայի առաջնահերթ կոչումն է հոգևոր արժեքներ ստեղծելը և դրանց մեջ իր գոյությամ երաշխիքը տեսնելը: Ըստ դրա էլ առանձնացնում ենք մեր գոյությամ իմաստի առաջնահերթությունները՝ լեզու, ընտանիք, հավատ... Մինչդեռ այդպես իրավունք ունի մտածելու միայն գաղթօջախի հայությունը, որովհետև այլ երկրում պետականորեն կազմակերպվելու մասին խոսք լինել չի կարող: Նետևաբար մեր խեղճությամ պատճառն այն է, որ, գիտակցենք, թե ոչ, մեր երկրում ապրել ենք գաղթականի հոգեկերտվածքով: Պետք է մեկընդմիշտ գիտակցել, որ եթե հաճախ ապավինել ենք մեր հոգևոր արժեքներին, ապա դա բոլորովին էլ չի նշանակում, թե գոյատևման առաջնահերթ երաշխիքը դա է: Զե՞ որ թշնամին ընկրկում է ոչ թե հոգևոր սիրանքի ու մեծագործության, այլ այն բռունցքի առաջ,

որի անունն է պետականություն, պետականորեն կազմակերպված համագօյին կամք ու վճռականություն:

• Դայը կռվող է, պատերազմում՝ անվախ, իսկ թուրքը՝ ոչ: Մեզ նեղություն էլ չենք տալիս հասկանալու համար, թե այդ ինչ-պես պատահեց, որ չկռվող թուրքն իրեն երբեւ չպատկանած տարածքների վրա ձևավորեց երեք պետություն (Թուրքիա, Աղրբեջան, Կիպրոս): Իսկ մենք ...

• Ոչինչ, որ Աղրբեջանը տնտեսապես և գինական ուժով մեզնից արդեն առավել է: Դրան հակակշիռ՝ մենք ուժեղ ենք ոգով և կամքով ու հնարավոր նոր պատերազմում անպայման հաղթելու ենք: Մենք չենք ուզում մեզ հաշիվ տալ, որ ոգու և կամքի ամրությունը, եթե զուրկ է տնտեսական թիկունքից (երկի թե հիմար չեն այդ տեղում միջոցներ չխնայող ժողովուրդներն ու պետությունները), ուղիղ գժով տանում է ընդամենը նահատակության, որի «բարիքները» մենք շատ ենք ճաշակել:

• Մենք բարիքը վերածում ենք չարիքի՝ անընդհատ մեզ համոզելով, որ ամուր ընտանիքն է պետության հզորության երաշխիքը: Այդպես մեր ընտանիքների բարորությունը մեզ համար դառնում է գերիննդիք՝ բացառելով համագօյին սոցիալ-քաղաքական այլ կառույցների կարևորության ըմբռնումը և որանց համար շահագրգռությունը:

Եվ այլն, և այլն ...

Վերևում ողջ ասվածից ակնհայտ է, որ պատմությունը մեծագույն ցանկության դեպքում անգամ չի կարող արտացոլել եղելության օբյեկտիվ բովանդակությունը: Պատմությունը զգալիորեն սոցիալ-քաղաքական պատվերի արդյունք է: Նետնաբար շատ զգույշ պետք է լինել՝ հաշվի առնելով, որ պատմությունը թեև կայանում է անցյալի նյութով, բայց ձևավորում է էթնիկ ինքնազիտակցությունը և նպատակառուղիված է ապագային:

Յուրաքանչյուր վրիպում կարող է անհատուցելի կորուստների պատճառ դառնալ:

Այսօրվա մեր կենսակերպը, կենսական կողմնորոշումներն այդ առումով լրջորեն մտահոգվելու առիթ են տալիս: Մասնավորաբար այն, ինչը բնորոշ է մեր վարքագծին ու նկարագրին օտարների և յուրայինների հետ շփումներում: Առաջին դեպքում մենք ինքնաստորացման չափ շահադիտականորեն օտարասեր ենք: Այստեղ ինքնասիրության մեր կորուստները հետևողականորեն փոխհատուցում ենք եթնիկ շրջանակներում միջմարդկային փոխհարաբերություններով, որոնց բնորոշ բռնությունը, ստորակարգության ընդգծումը մեզ համար անթաքույց հիացմունքի ու բավարարվածության աղբյուր են, ինքնահաստատման ձև: Ընդ որում, ցավալին այն է, որ դա եթնիկ նկարագրի հատկանիշ է դառնում՝ վարակելով սոցիալական բոլոր շերտերին: Դժվար չէ գլխի ընկնելը, որ դա ստրուկի (ոչ թե սոցիալական կարգավիճակով, այլ հոգեկերտվածքով ստրուկի), ինքն իր տեսակից խռովածի վարքագիծ է:

Բոլորովին էլ մտադիր չեմ գույները թանձրացնելու. մեր անցյալին վերաբերող պատմության արդյունք ներկան այնքան է մտահոգիչ, որ դա ավելորդ գրադմունք կլինի: Ժամանակն է հանուն վաղվա օրվա կանգ առնելու և լրջորեն վերագնահատելու մեր ճակատագրում ու նկարագրում մեր իսկ հյուսած պատմության գաղափարախոսական նշանակությունը: Պատասխանատու և անհետաձգելի գործ, որը կարող է լավագույնս իրականացնել մեր ժամանակների մարտահրավերները լրջորեն գիտակցող հատկապես նոր սերունդը: Արդի աշխարհաքաղաքական հանգամանքները հապաղելու ժամանակ չեն թողնում: Շատ ակնհայտ է, որ ժամանակակից քաղաքական շահերի գաղափարախոսական պայքարում պատմությունը դարձել է ֆաստ ֆուտ (fast food). ցանկացած պահի այն անպատիծ թիվում է նորովի՝ չլսված, անհնարին, անգամ ֆանտաստիկ սպեկուլյացիաներով: Ահա սա է, որ ներկայացվում է որպես պատմություն (իմա՝ եղելություն) ու հրաշալիորեն ծառայեցվում ինչ-որ մեկի շահի սպասարկմանը:

## ՄԱԾՏՈՑՔ ԵՎ ՆԱԽԱՄԱԾՏՈՑՅԱՆ ՀԱՅՈՑ ԳՐԻ ԽՆԴԻՐԸ

Զեռնարկիս նպատակից ու ընդգրկումից ելնելով՝ չեմ պատրաստվում այստեղ մանրամասն ներկայացնել ու քննարկել խնդրին վերաբերող տեսակետները կամ շարադրել իմ կարծիքը: Ուսումնական ձեռնարկը համարժեք տեղ չէ բազմաթիվ քննարկումների նյութ դարձած այդ հարցը վերլուծելու համար: Խնդրը մշակութաբանական, պատմաբանասիրական, քաղաքական լուրջ բովանդակություն ունի, որի մեջ հավասարապես պետք է կարևորել թե՛ առկա կարծրատիպերի հաղթահարման, թե՛ նոր հնագիտական նյութեր հայթայթելու անհրաժեշտությունը:

Սակայն, համենայնդեպս, որոշեցի խնդրի վրա հրավիրել ձեր ուշադրությունը՝ ելնելով ուսանողներից, նույնիսկ որոշ մասնագետներից իմ ստացած հիասթափեցնող տպավորությունից: Իսկ դրա պատճառն այն է, որ մեր մշակույթի մեծագույն գործչի՝ Մաշտոցի անձն ու մեծագործությունն ընկալվում են շատ մակերեսորեն, դպրոցական-դասագրքային պարզունակությամբ: Ըստ դրա՝ նա գրագետ, լեզուներ իմացող մարդ էր, որը հաջողությամբ գծագրեց-նկարեց հայերենով գրելու համար անհրաժեշտ պայմանական նշանները՝ տառերը: Միջազգային մասշտաբների նրա ազգային-քաղաքական գործունեությունը (երկիրը ճգնաժամից հանած, ազգային մշակույթը փրկած, հակառակ իր հավակնութության՝ ամբողջությամբ հաջողված) այդպես ներկայացնելն առնվազն սեփական պատմությունը չիմանալուն է համարժեք:

Ին ընկալմանը Մաշտոցի մեծագործությունը և նրա գաղափարներին հետևող աշակերտների մեկ-երկու սերնդի (Կորյուն, Մ. Խորենացի, Ղ. Փարպեցի, Ղ. Անհաղթ) հետևողական գործունեությունը հայի՝ դարերով կոփկած հեթանոս ոգու կենսունակության վերջին համճարեղ պոռթկումն էին, որոնցով ազգը փրկվեց հարյուրամյա ճգնաժամից: Այս մտավորականներն անտիտղոս և անպաշտոն քաղաքական այնպիսի գործիչներ էին, որոնց արածի նշանակությունն ավելի շատ որոշակիացել է դարերի մեջ, քան գնահատվել իրենց երկրային կյանքի ընթացքում: Նրանց կենսական ժամանակի ընթացքում, դրանից առաջ ու դրանից

հետո էլ երկիրը եռում էր ազգային-քաղաքական անցուդարձերից: Ու այդ մեծամեծերն իրենց կյանքի իմաստը տեսնում էին ոչ թե պարզապես տառեր նկարելու, ուսուցչի կենսագորություն արձանագրելու, պատմություն շարադրելու կամ վերացական փիլիսոփայական տրակտատներ հորինելու, այլ ազգի ու պետության առաջ կանգնած լրջագույն հիմնախնդիրների լուծնանը ծառայելու մեջ:

Ես հիմա չեմ պատրաստվում դիտարկել խնդրին առնչվող պատմանշակութային բոլոր հանգամանքները<sup>49</sup>: Միայն գգուշացնեմ հետևյալը. երբեք չպետք է վախենալ այն մտքից, որ մի օր կճշտվի, որ Մաշտոցը ոչ թե ստեղծել է մեր գրերը, այլ, ասենք, վերագտել, կատարելագործել կամ ննան այլ բան: Հենց միայն գրի հանգամանքը նրա փառքի կարևորագույն հիմնաքարերից չէ. չէ՝ որ տարբեր լեզուների համար եղել են գիր ստեղծողներ, որոնք սակայն կնախանձեին Մաշտոց պետական գործին:

Այս նկատառումներից ելնելով է, որ առաջարկում եմ Մաշտոց գործի և նախամաշտոցյան հայոց գրի խնդիրը քննարկել ստորև բերվող և ըստ դրանց՝ նաև ձեր մտահղացած հարցերի շրջանակում: Նաևկանալի է, որ ես ձեզ վերջնական լուծումներ չեմ առաջադրելու: Միայն մի վերապահում: Նախամաշտոցյան գրի նաև ի խոսելիս պետք է նկատի ունենալ, որ խոսքը ոչ այնքան հենց հայատար, որքան հայալեզու գրի նաև ի, որը կարող էր լինել ինչպես հայատառ, այնպես էլ որևէ այլ լեզվի գրով: Երկու դեպքում էլ մենք կունենայինք հայոց լեզվով գիր: Ի վերջո հարցերի հարցը հայալեզու գիրն է, հետո միայն դրա գրության ձևը՝ հայատառ, թե՝ ոչ:

Ահա նախատեսածն դիտարկելի նկատառումները:

• **Գրի ծագման և ծևավորման պատմությունն ուսումնասիրելով՝ տեսնում ենք, որ մշակութաստեղծման ծանապարհին գիր ստեղծած կամ փոխառած ժողովուրդներից ոչ մեկը չի ունեցել գործունեության որևէ ոլորտ, որը բացակայել է նախամաշտոցյան հայկական մշակույթում, ինչի պատճառով կարող էր չհասունանալ ու չգիտակցվել սեփական լեզվով գրի ամհրաժեշտությունը:**

• Յայաստանն ակտիվ մշակութային կապեր ուներ Միջազգետքի, Մերձավոր Արևելքի, Պարսկաստանի, Փոքր Ասիայի, Հունաստանի հետ: Այդ տարածքները եռում էին գրավոր խոսքով, գրապահոցներով, դպրության կենտրոններով: Դրան հավելած, որ գրի կորուստն Ուրարտուից հետո Յայաստանի համար կարող էր միայն մշակութային հետղնթացի (ռեգրեսի) հետևանք լինել: Մի բան, որը մեր պատմության մեջ չի նկատվել. հայոց մշակութային դաշտը չի ենթարկվել որևէ վրարի: Այդ դեպքում ինչո՞ւ պետք է ուրարտական մշակույթի ժառանգմամբ տարածաշրջանում ինքնահաստատված ժողովուրդը չպահպաներ սեփական լեզվով գրավոր խոսք ունենալու արդեն ձևավորված ավանդույթը:

• Արժե մեկ անգամ էլ վերընթերցել պատմագրության մեջ պահպանված տեղեկությունները՝ համոզվելու համար, թե արդյոք կարելի՞ է այդքան միարժեքորեն պնդել, որ.

ա) մենք նախամաշտոցյան շրջանում որևէ գրային համակարգով հայալեզզու գիր իսկապես չենք ունեցել.

բ) Յայաստանում և մանավանդ հարակից տարածաշրջաններում Մաշտոցն իր ժավալած գործունեության ընթացքում գրալված էր միայն գիր ստեղծելով.

գ) կարծում եմ՝ ձեզ համար իմաստավորված կլինի որոշակիացնելը նաև, թե ինչպիսին կարող էր լինել պարսից արքունիքի վերաբերմունքը ազգային գիր ունենալու կամ վերականգնելու հայոց նախածերնությանը:

Առաջադրված թենայի քննարկման ամփոփը կարող է լինել Մաշտոցի մեծագործության դասերի որոշակիացումը հատկապես հետևյալ մոտեցումներով.

ա) մրցունակ մշակույթի ազգապահպան նշանակությունը.

բ) ազգային մշակույթի արտահանման նշանակությունը.

գ) ազգային-քաղաքական նշանակության մշակութային ծրագրերի կենսական անհրաժեշտությունը բոլոր ժամանակներում, հատկապես մեր օրերում՝ որպես հակակշիռ համաշխարհայնացման (գլոբալացման) ուժացնող մարտահրավերներին:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բոլոր ժամանակների, հատկապես ժամանակակից գիտության համար դեռևս անլուծելի խնդիրներից մեկը երկրի վրա կյանքի ծագման՝ առաջին կենդանի բջջի գոյացման հարցն է: Առաջ են քաշվում տարբեր տեսակետներ: Մասնավորաբար դրանցից մեկն էլ փորձում է համոզել, որ կյանքը ոչ թե երկրային, այլ տիեզերական ծագում ունի: Իբր կյանք կրող նյութը թափառում է տիեզերքում և հայտնվելով համապատասխան պայմաններ ունեցող մոլորակների վրա՝ էվոլյուցիայի միջոցով ձևավորում կենդանի օրգանիզմների բազմազանություն: Եթե նույնիսկ այս տեսակետը ճշմարիտ էլ լինի, միևնույնն է, միանգամայն ակնհայտ է, որ երկիրը բնակեցրած և բնակեցնող բոլոր տեսակները, այդ թվում՝ նաև մարդը՝ իբրև ավարտուն և կայացած օրգանիզմներ, գուտ երկրային ծագում ունեն:

Կարծում եմ՝ հավաստի չէ այն տարածված տեսակետը, թե իբր մարդը բնիկ չէ, երկիր է տեղափոխվել այլ մոլորակից: Ու ընդհանրապես, գոնե առայժմ իհմնավորված չեն բոլոր այն խոսակցությունները, որոնք վերաբերում են այլմոլորակայիններին: Թեև երկրի վրա կան գիտակցված գործունեության բազմաթիվ անբացատրելի արտեֆակտեր, բայց դրանք դեռևս չի կարելի համարել այլմոլորակայինների գոյությունը կամ երկրի վրա ծավալած գործունեությունը գիտականորեն ապացուցող փաստարկ:

2. Իսկապես հետաքրքիր ու բազմազան են փիլիսոփայության և մշակութաբանության մարդաբանական ուսմունքները: Դրանցից մեկն էլ, որ հարկ և օգտակար է իմանալ, ներկանտական է. Կասիրերինն է („Օպыт о человеке. Введение в философию человеческой культуры”): Այն կարելի է համառոտ ներկայացնել այսպես:

Դագարամյակների կենսագործունեության ընթացքում մարդը (ըստ նրա՝ խորհրդանշիշեր ստեղծող կենդանի) ձևավորել է իր համար կենսական կարևորության խորհրդանշիշերի մի համակարգ, որի բաղկացուցիչներն են լեզուն, առասպելը, արվեստը, պատմությունը, գիտությունը և կրոնը: Փորձի և նտաշողության մեջ մարդկային ողջ առաջընթացը միայն հղկում ու ամրապնդում է այդ ցանցը: Եվ որքան ծավալվում է մարդու գործունեությունը խորհրդանշիշերի այդ համա-

կարգում, այնքան նա հեռանում է բնական-ֆիզիկական ռեալությունից: Այդպես ծևավորվում է արհեստական-հորինածոն մի միջնորդ, առանց որի մասմակցության մարդն այլևս չի կարող որևէ քան տեսնել, հասկանալ, գնահատել կամ իմանալ: Դրա արդյունքում նա ավելի շատ ապրում է երևակայական զգացմունքների, հույսերի ու վախերի, պատրանքների ու դրանց կորստի, սեփական ֆանտազիայի, քան կենսական ռեալության մեջ: Ընդ որում, դա դարձել է կենսակերպ, որը բնորոշ է ինչպես գործնական կյանքին, այնպես էլ հոգենտավոր գործունեությանը:

3. Նկատի ունենալով, որ մարդուն բնորոշ բանականության խնդիրը և դրան առնչվող հարցերի քննարկումը շատ տեղ կզբաղեցնեն այստեղ, նպատակահարմար համարեցի դրա վերաբերյալ իմ դիտարկումները ներկայացնել «Հավելված» բաժնում («Բանականության իհմնախնդիրը և հարակից հարցեր»):

4. Այստեղ հարկ եմ համարում ձեր ուշադրությունը հրավիրել մի կարևոր հանգամանքի վրա: Մարդու մշակութաստեղծ գործունեության վերաբերյալ մանավանդ մեծարական գաղափարներով լեցուն մասնագիտական և ոչ մասնագիտական գրականության մեջ հաճախ կարելի է հանդիպել «արարում» և «ստեղծում» հասկացությունների անհետևողական կիրառության: Դրա արդյունքում մարդու մշակութաստեղծ գործունեությունը հաճախ համարվում է արարում: Դա անընդունելի է: Հստակորեն պետք է գիտակցել, որ արարման արդյունք է տիեզերքը՝ «միկրո» և «մակրո» բոլոր բաղկացուցիչներով: Մինչդեռ մարդն ստեղծում է: Սրանց միջև կան եւկան տարրերություններ, որոնցից գոնե հետևյալ երկուսը պետք է իմանալ.

ա) մարդն ստեղծում է՝ շատ ավելի պարզունակ տարրերակներով կրկնելով բնության արարման իհմքում ընկած գաղափարները.

բ) մարդու ստեղծածը, հակառակ արարչության արդյունքների, կենսունակ չէ, չի կարող վերարտադրվել (ինքնավերարտադրվող չէ):

5. Խոսքն այստեղ տվյալ կենսամակարդակի ներսում ընթացող էվոլյուցիայի, տեսակների բարեփոխման մասին է: Սակայն գիտությանը հայտնի է էվոլյուցիայի նաև կտրուկ-հեղափոխական տարրերակը: Այն դրսևորվել է իրու առկա տեսակների (մանավանդ դոմինանտ տեսակի ներկայացուցիչների) մեջ մասի ոչնչացում համեմատաբար

կարծ ժամանակահատվածում: Որքան համապատասխան գիտությունները կարողացել են ճշտել, դրա հիմնական պատճառը եղել են բնական աղետները: Դրանք սկզբունքորեն փոխել են երկրային կենսապայմանները՝ միաժամանակ նաև հնարավոր դարձնելով գերակայության պոտենցիալ կարողություններ ունեցող նոր տեսակի ակտիվացումը, նոր կենսահամակարգի ձևավորումը:

6. Հարկ է նկատի ունենալ, որ և կենդանու, և մարդու մասին ասվածք վերաբերում է չհասունացած առանձնյակին, որը դեռ չի հասցրել կուտակել խնբային կամ սոցիալական կեցության կենսափործ: Իսկ ինչինչ հանգանանքներում արդեն հասուն տարիքում որոշակի ժամանակ արդեն միայնակ ապրելուն դատապարտված մարդկանց եթե անգամ հաջողվել է գոյատևել, գրաղվել մշակութաստեղծ գործունեությամբ, ապա միայն ի հաշիվ իրենց արդեն ունեցած կենսափործի, որը հասցրել են կուտակել նախկինում ունեցած համակեցության շնորհիվ: Հայտնի են այդպիսի բազմաթիվ վավերական դեպքեր, որոնց հիման վրա գրվել են գեղարվեստական ստեղծագործություններ, նկարահանվել ֆիլմեր:

7. Ելնելով հնագիտական ուսումնասիրությունների բացահայտումներից՝ կարելի է որոշակիորեն առանձնացնել այն առաջնային ձեռքբերումները, որոնք էական նշանակություն են ունեցել մարդու սոցիալական էվոլյուցիայի գործընթացում: Մասնավորաբար լեզուն, կրակի օգտագործումը, գործիքների և կացարանների պատրաստումը, սոցիալական ինստիտուտների (ընտանիք, տոհմ, ցեղ և այլն), համակեցության նորմերի, աշխարհաճանաչողության նախնական պատկերացումների ձևավորումը և այլն:

8. Գիտեն, որ մեր ցավոտ խնդիրներից է հայության մանավանդ ժամանակակից արտագաղթի հարցը, սակայն տեղը չէ դրա քննարկման: Միայն հընթացս նշեմ, որ, ի տարրերություն մասնագիտական և ոչ մասնագիտական շրջանակներում լայնորեն տարածված տեսակետի, ես դրա պատճառը տեսնում եմ ոչ այնքան սոցիալական հանգանանքների, որքան եթնիկ նկարագրի մեջ: Իսկ դա արդեն ավելի լուրջ հարց է և դրավոր արմատներ ունի՝ ծանաչման համարժեք լրջություն պահանջող: Ուստի իբրև խնդրին ի մոտո նախնական ծանոթություն՝

առաջարկում են ընթերցել և քննարկել «Հավելված» բաժնի համապատասխան նյութը («Արտագաղթի հայկական ֆենոմենը»):

9. Այս ճամկի տես «Մշակութաբանություն», Ե., 2007, էջ 7–27:

Հավելեն նաև, որ արօրյա գործածության մակարդակում, անգամ մասնագիտական գրականության մեջ «մշակույթ» հասկացությունը հաճախ կիրառվում է միայն հոգևոր արժեքների իմաստով: Դա, մանավանդ երկրորդ դեպքում, ընդունելի չէ: Նույնպիսի, բայց շատ ավելի տարածված թյուրիմացություն է, եթե մշակութային դաշտից անտեսվում են մարդկանց համակեցության կազմակերպման սոցիալական ինստիտուտները: Իսկ դրանք՝ ընտանիքից մինչև պետության կազմավորման ու կառավարման մարմիններ, չափազանց կարևոր են, շատ ու բազմազան, հաճախ փոփոխվող բովանդակությամբ և կենսական իմաստավորմանը՝ նայած ժամանակաշրջանի և պատմական հանգամանքների:

10. Յարկ է նշել, որ նախնական մշակույթի նկատմամբ մասնագիտական վերաբերմունքը միանշանակ չէ: Երբեմն այն թերագնահատվում է հազարամյակներով կուտակված մշակութային հարստության ու բազմազանության արդի հեռավորության բարձունքից: Բնորոշ օրինակ է եքզիստենցիալիզմի հայտնի ներկայացուցիչ Կ. Յասպերսի տեսակետը („Ըմաց և հանհաւություն“): Նա մարդկության անցած պատմական ժամանակաշրջանը բաժանում է չորս մասի՝ նախապատմություն, հնագույն մշակույթներ, առանցքային ժամանակ և գիտատեխնիկական դարաշրջան: Ըստ նրա՝ նախապատմական ժամանակաշրջանում չի եղել պատմություն (դրանից էլ նրա նախընտրած հասկացությունը՝ նախապատմություն): Իր տեսակետի ամրակայման համար նա պնդում է, որ այդ ժամանակաշրջանում իր մարդուն բնորոշ չի եղել պատմության, տեղի ունեցող իրադարձությունների, սեփական արմատների գիտակցումը, բացակայել է փաստագրությունը (գրավոր խոսքը): Իբր նախապատմության ժամանակաշրջանում մարդը ձևավորվել է որպես տեսակ, որի արդյունքում էլ ամրակայվել են կենսաբանորեն ժառանգորդվող նրա հատկանիշները:

Ըստ Կ. Յասպերսի՝ պատմությունն սկսվում է մ. թ. ա. 5-3-րդ հազարամյակներում ծագած հնագույն պետական (Շումեր, Եգիպտոս, Շնդկաստան, Զինաստան և այլն) մշակույթների ձևավորումով: Այդ ժամանակաշրջանի արտեֆակտերի մեջ կարևորում է ձևավորումն իրենց

միասնությունը գիտակցող ժողովուրդների, որոնք ունեին ընդհանուր լեզու, առասպել, մշակույթ, արդեն ընտելացրել էին ձիուն:

Վերջինիս կարևորությունը նա չի անտեսում, որովհետև մինչև նոր ժամանակներն այդ կենդանին է եղել մարդու համար ցանքում մրցակիցը չունեցող փոխադրամիջոցը (ակամա հիշեցի Պ. Սևակի՝ ձիերին նվիրված բանաստեղծությունը): Իմիջիայլոց, ասեմ նաև, որ ըստ մասնագետների հաշվարկների՝ ձիու շնորհիվ մարդու կյանքի տեմպը, մշակութաստեղծ գործունեությունն արագացել են մոտավորապես տասն անգամ: Այստեղ թերևս տեղին է նաև նշել, որ, ինչպես ցույց են տալիս հնագիտական պեղումները, ձին Հայկական լեռնաշխարհում ընտելացվել է դեռևս նախնական մշակույթի շրջանում:

Կ. Յասպերսը կարևոր նշանակություն է վերապահում մասնավորաբար գրավոր խոսքին, որովհետև դա համարում է վավերական, վստահելի և խոսուն տեղեկատվություն: Դրա հիման վրա էլ իր առանձնացրած պատմության շրջանը համարում է մարդու կողմից գիտակցված անցյալ, իսկ նախապատմության շրջանը՝ չգիտակցված, թեև չի թերագնահատում ու չի անտեսում այդ ժամանակաշրջանում մարդու գործունեության արդյունքները, որի վերաբերյալ տեղեկությունները ստացվուն են իմանականում հնագիտական նյութերից:

Գրիս նպատակադրումից դրուս նյութ կրառնա պատմության, պատմական-կենսափորձային գիտակցության, գրավոր աղբյուրների հավաստիության, հնագիտական նյութի տեղեկատվական կարևորության ու օբյեկտիվության և այլնի վերաբերյալ բանավեճը հայտնի գիտնականի հետ: Միայն նշեմ, որ մարդկության անցած պատմական ուղղությունը գանկացած աշխարհացք ու տեսություն չի կարող ամբողջական լինել, եթե անտեսվի ելման կետի ժամանակաշրջանը: Դա նախնական մշակույթն է, սկիզբը բոլոր սկիզբների, որի մեջ մարդու տեսակային էությունը նույնական է հետագայում իր անցած պատմական ժամանակաշրջաններում դրսնորածին: Իր կենսափորձը գիտակցող և իմաստավորող սուբստանցը, վստահ եմ, միշտ էլ նույն է եղել. ուրիշ հարց է, որ մեզնից տասնյակ հազարամյակներ առաջ ապրած մարդու ներքին ու արտաքին կեցության վերաբերյալ մեր իմացությունը, ամենայն հավանականությամբ, շատ աղքատիկ ու թերի է:

Այս առումով շատ ավելի համոզիչ է Ա. Ստեփանյանի («Պատմության հետագիծը») տեսակետը: Նա Ք. ա. 10-5-րդ հազարամյակները համարում է մարդկության գործունեության այն ժամանակաշրջանը, երբ արդեն կայանում է քաղաքակրթական մակարդակը: Որպես իր ասածի ապացույց՝ թվարկում է այդ հազարամյակներում մարդկությանը բնորոշ գործունեության հիմնական ձևերը, համակեցության կազմակերպման առանձնահատկությունները, այդ ամենի մշակութաբանական իմաստները: Դարկ է նաև նշել, որ հայ գիտնականն իր տեսակետը փաստարկում է՝ հենց հնագիտական հայտնագործությունների կարևորությունը նշելով:

11. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. Երկրորդ, Ե., 1972, էջ 394: Պետրոսյան Հ., Յայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 264: Խաչատրյան Լ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008, էջ 36–39 և այլն:

12. Օրինակ՝ հոգեբանական տեսանկյունը տես Նալչաջյան Ա., Էթնիկական հոգեբանություն, Ե., 2001:

13. Այս իրողությունը լավագույն դրսևորվել է լեզվով գործառող արվեստում՝ գեղարվեստական գրականության մեջ: Բնորոշ օրինակ է Գ. Նարեկացու Փենոմենը: Դատկապես բառաստեղծման մեջ նա մրցակից չունի: Իսկ դա նշանակում է, որ լիարժեք ինքնարտահայտման համար նա կարիք է ունեցել նոր, հայերենի բառանյութում չեղած բառերի, որոնք ել ստեղծել են: Այս և Գ. Նարեկացու գրականության լեզվական առանձնահատկությունների մասին տես Միրզոյան Հ., Նարեկացիագիտական հետազոտություններ, Ե., 2010:

14. Սա խոսքին վերաբերող ամենահետաքրքիր իրողություններից մեկն է: Յեղինակ–խոսք–ընթերցող (լսող) փոխհարաբերությունը բազմաթիվ շերտեր ունի: Այն ուսումնասիրության անսպառ նյութ է մի շարք գիտությունների (բանասիրություն, հոգեբանություն, պատմագիտություն, սոցիոլոգիա և այլն) համար: Այստեղ որքան հետաքրքիր են խոսքի հեղինակի, այնքան էլ՝ խոսքն սպառողի անհատականության և նրանց հնարավոր փոխհարաբերությունների դրսևորումները: Այդ ամենի հնարավորությունն ընձեռողը խոսքն է: Իսկ վերջինս բազմաշերտ օրգանիզմ է, որն ընդգրկում է կյանքի հեղինակային արտացոլման ինչպես գիտակցական, այնպես էլ ենթագիտակցական իրողությունները,

հեղինակի վերստեղծած իրականության հետ (սուբյեկտիվ ճշմարտություն) նաև ռեալ իրականության (օբյեկտիվ ճշմարտություն) բազմաթիվ փաստեր և այլն: Ահա այս և այլ հանգամանքների առկայությամբ են պայմանավորված ժամանակի մեջ գրավոր խոսքի տարընթերցումն ու տարրմբոնումը, տարբեր սերունդների վերահնաստավորող անդրադարձները:

Դարմար առիթը բաց չթողնելով՝ խոսքի վերաբերյալ (գրավոր, թե բանավոր) ասեմ նաև հետևյալը: Խոսքը պետք է լինի հնարավորինս հակիրծ և միանշանակ, որպեսզի հեշտացնի միջնարդկային հաղորդակցությունը, տեղիք չտա թյուրըմբոնումների: Սա ընդհանրապես: Սակայն կենսական ինչ-ինչ հանգամանքներից ելնելով՝ մարդը միտումնավոր կարող է ձևավորել նաև բազմանշանակ խոսք, որի համար պետք է ճկուն միտք ունենալ: Դա ձևով ավարտուն, բայց բովանդակությամբ բազմաշերտ-բազմապլան, հաճախ նույնիսկ հակասական ընթունումների տեղիք տվող խոսքն է: Իր ձևական ավարտունությամբ հանդերձ՝ այն բովանդակությամբ առկախ է: Դա լսողին կամ կարդացողին դուռը է հոգեբանական և մտավոր դիլեմայի առաջ՝ ստիպելով ինքնուրույն որոշակիացնել խոսքային անորոշությունը, ընտրել հավանական մտքերից հենց այն մեկը, ինչը որ կարող էր նկատի ունենալ խոսքի հեղինակը:

Ասեմ մի քանի օրինակ: Եթե մի առիթով ձեր ունեցած զգացողությունները գրուցակցին բացատրելու համար ասեք, որ այն նույնն էր, ինչ որ մարդը կարող է ունենալ պարտքը վերադարձնելիս, ապա չի բացառվում, որ կարող եք նաև սխալ հասկացվել: Որովհետև եթե պատասխանատու մարդու համար պարտքը վերադարձնելը խղճին հանգստություն է բերում, ապա նույնը ճի կարելի ասել այլ նկարագիր ունեցողների մասին: Չե՞ որ պատահաբար չի ասվել հայտնի խոսքը, որ պարտք վերցնելով՝ ծախսում ես ուրիշի փողը, բայց ստիպված ես լինում վերադարձնել քո ունեցածը:

Ասեմ մեկ այլ, ավելի ակնառու օրինակ: Նեռուստահաղորդումներից մեկը տարբեր սերունդներ ներկայացնող հայերի միջանձնային հարաբերություններին բնորոշ խնդիրների վերաբերյալ էր: Երիտասարդ հաղորդավարութիւն տարիքով մի կնոջ տվեց հետևյալ (կարծում եմ ըստ տեղի և հանգամանքների աննորբանկատ) հարցը.

– Դուք գո՞հ եք Ձեր հարսից:

Ես հաճելիորեն զարմացա՝ լսելով այդ կնոջ նրբանկատ ու իմաստուն պատասխանը.

– Մենակ մի բան կասեմ. թող աստված իմ հարսին իր նման հարստա:

Դուք ևս փորձեք գլուխ հանել ասվածից. ի վերջո այդ կինը գո՞հ էր իր հարսից, թե՞՞ ոչ:

15. Ասվածում ավելի համոզվելու համար գրքի «Գրականություն» բաժնում ներկայացված համապատասխան ժողովածուների միջոցով կարող եք ծանոթանալ խոսքի (խոսելու) և լրության (լրելու) վերաբերյալ առած-ասացվածքներին, իմաստուն (խոսքի հարգն իմացող) մարդկանց ասույթներին:

16. Պարզ է, որ այստեղ ասվածը չի վերաբերում մարդու կենսաբանական վերաբարտադրությանը:

17. Այստեղ քննարկված հարցերի խորացված վերլուծությունը տրված է «Հավելված» բաժնի «Եղելություն, պատմություն և ազգային ինքնագիտակցություն» նյութի մեջ:

18. Ավելի մանրամասն տեղեկանալու համար կարելի է օգտվել սույն ձեռնարկի «Գրականություն» բաժնի համապատասխան աղբյուրներից:

19. Այստեղ իհարկե տեղը չէ մեր մշակույթի ամենահանելուկային հարցերից մեկի՝ նախամաշտոցյան գրի խնդիրը քննարկելու: Սակայն, իբրև ինքնուրույն աշխատանքի թեմա, ուսանողներին առաջարկում են հարցը դիտարկել «Հավելված» բաժնում իմ ներկայացրած նկատառումներով, որոնք, վստահ են, կարող են մշակութաբանական հետաքրքիր քննարկման նյութ լինել («Մաշտոցը և նախամաշտոցյան հայոց գրի խնդիրը»):

20. Մարդու նկարագրի երկակիության վերաբերյալ տե՛ս գրքի «Հավելված» բաժնի «Բանականության իիմնախնդիրը և հարակից հարցեր» նյութը:

21. Քիշեք թեկուզ այն անցանկալի իրողությունը, որը տասնինը-քսաներորդ դարերում գոյացավ մեր ազգային կյանքում ու մշակույթում ոչ միայն քաղաքական, այլև գրական երկու լեզուների (արևելահայ և արևմտահայ) ձևավորման պատճառով:

22. Այստեղ հարկ է նկատի ունենալ նաև, որ մաշտոցյան գրեթին վերաբերող աստվածային ծագման գաղափարն առկա կարծրատիպի պարզ ընդօրինակում չէ: Մեր պարագայում այն ստանում էր ազգային–քաղաքական հավելյալ, գուցե նույնիսկ առաջնային իմաստ: Քրիստոնեության ընդունումից հետո գոյացած հարյուրամյա համազգային ճգնաժամը (կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ առանց բացառության, նույնիսկ կրոնաեկեղեցական) հաղթահարելու անհրաժեշտության գիտակցումը պահանջում էր Աստվածաշնչի թարգմանություն: Իսկ դրան կարելի էր հասնել՝ Յայաստանում ծանրորեն նստած ու հաստատված հույն և ասորի բազմաքանակ հոգևորականների դիմադրությունը հաղթահարելով: Սուրբ գիրքը գրավոր հայերենով կարելի էր շարադրել միայն լրջագույն կրվանների փաստարկումով: Այդպիսին դարձավ հայկական ազգային գրի աստվածատուր լինելու կրվանը հնարամտորեն մտահյանալը:

23. Կարծում եմ՝ ձեզ համար հետաքրքիր կլինի իմանալը, որ հայերենում «գիր(ք)» բառին համարժեք իմաստ է ունեցել պահլավերենից փոխառված «նամակ» բառը: Օրինակ՝ Շահնամե (շահերի մասին գիրք), Գահնամակ (իշխանական տների մասին գրություն), Չարենց–Նամե, Իրան–Նամե և այլն: «Նամակ»–ից զատ՝ «գրքի» իմաստն ունեն նաև «Երկ»–ը, «աշխատություն»–ը, «մատյան»–ը, «դավթար»–ը, անգամ «տետր»–ը (իշե՛ք Ս. Բաղրամյան, Նոր տետրակ, որ կոչի հորդորակ):

24. Անմիջապես ասեմ, որ կա գրքի վերաբերյալ գիտական իմացության մի բնագավառ, որն այդպես էլ կոչվում է՝ գրքագիտություն: Ցանկության դեպքում կարելի է մանրամասն ու բազմազան իմացության տեր դառնալ համապատասխան գրականության օգնությանք:

25. Օրինաչափ և ծիշտ է գրքի ձևի՝ գեղարվեստական, արտադրական-տեխնիկական ձևավորման պայմանավորվածությունը բովանդակությամբ, նրանով, թե ում է այն հասցեագրված:

26. Մեր միջավայրում գրքի նկատմամբ ժամանակակից վերաբերմունքով էլ, որին դուք լավատեղյակ եք, կարող եք գնահատել իրավիճակը, պատկերացնել մեր մշակույթին ու ազգային հեռանկարին սպառնացող մարտահրավերների հնարավոր անցանկալի հետևանքները:

27. Հարկ եմ համարում որոշակիացնել, որ իմ օգտագործած «գրականություն» բառը չպիտի հասկանալ խոսակցական լեզվում ամրակայված իմաստով, որը նույնական է «գեղարվեստական գրականություն» բառակապակցության իմաստին: Իմ օգտագործմամբ այն ունի բառացի իմաստ՝ ցանկացած բովանդակության գրավոր տեքստ՝ գիրը:

28. Ես կարող էի վկայակոչել անհամենատ ավելի ընդօրինակելի, ասենք, եվրոպական որևէ երկրի մշակութային փորձը: Սակայն այդպես չվարվեցի, որպեսզի ցույց տամ, որ պետականաշինության մեջ նույնիսկ անհատուցելի կորուստներ ունեցած խորհրդային մշակույթը համաշխարհային մասշտաբների ձեռքբերումներով անառարկելի հեղինակություն դարձավ շնորհիվ նաև գրքի ու գրագիտության նկատմամբ հասարակության մեջ ձևավորված նպաստավոր վերաբերնունքի:

29. Այստեղ, իբրև ասվածի բացատրություն, կարելի է վերիիշել խոսքի մշակութային նշանակության վերաբերյալ թեմայի բովանդակությունը:

30. Շումերներն այդ սալիկներն անվանում էին դուաք(բ): Յետագայում պարսկերենի միջնորդությամբ հայերենին անցած այդ բառից կազմվել են ձեզ հայտնի բազմաթիվ բառեր՝ դպիր, դպրոց, ատենադպիր, դպրատուն, դպրություն և այլն:

31. Ի դեպ, այսօր «դյուրակիր» է անվանվում ամենքիս լավ հայտնի «ֆլեշկան», որում կարելի է ամբարել ծավալուն տեղեկույթ:

32. Քիշեք նաև ածուխը, վառողը, տպագրական հաստոցը և այլն:

33. Այստեղ հարկ եմ համարում նշել, որ ձեռագիր գրքի ստեղծման դժվարության մասին խոսելիս նկատի ունեն միայն ու միայն տեքստը գրանյութի վրա շարադրելու տեխնիկական բարդությունները և աշխատատարությունը: Մինչդեռ ձեզնից յուրաքանչյուրը լավ գիտի, որ գրքի տեքստը (մանավանդ եթե այն ինտելեկտուալ կամ գեղարվեստական է) մտահղանալ–շարադրելն ինքնին դժվարագույն գործընթաց է, որի մասին տեղին չէ այժմ խոսելը:

34. Ընդհանրապես պետք է իմանալ, որ թե՛ բանավոր (բարձրաձայնված, ներքին (մտածված-չարտասանված), թե՛ գրավոր խոսքին բնորոշ է ներգործության (ոչ միայն բովանդակությամբ) ակնհայտորեն

նկատելի կարողություն: Այն կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքի հանգեցնող:

Անենայն հավանականությամբ, դա իր և շրջապատի վրա մարդու եներգետիկ դաշտի ազդեցության ծևերից մեկն է, որն իրագործվում է խոսքով: Մարդկությունը դրա մասին վաղուց գիտի: Հաճախ մենք չենք նկատում, բայց մեր ամենօրյա կյանքը լի է դրա գործնական դրսություններով (աղոթք, անեծք և այլն): Կան դրա անգամ պարադոքսալ (առեղջվածային) դրսնորումները: Օրինակ՝ դուք ել նկատած կլինեք, որ մայրերն իրենց դեռևս չլսող ու չտեսնող նորածինների հետ խոսում են, նրանց համար երգում: Մայրերի փորձը ցույց է տվել, որ խոսքը ներգործում է ոչ միայն բովանդակությամբ:

Խոսքի ներգործությունը կարող է իրականանալ ոչ միայն անմիջականորեն, այլ նաև միջնորդավորված (օրինակ՝ մարդու սպառած ջրով): Հանգեցնելով անգամ կենսաբանական էական փոփոխությունների: Դրա վերաբերյալ արդեն կան գիտահանրամատչելի բազմաթիվ գրքեր ու ֆիլմեր:

35. Եվրոպայում գրատպության սկզբնավորումը հետաքրքիր նախապատմություն ունի: Այդ ընթացքին հայերի մասնակցության մասին տե՛ս Գ. Սուլիմայանի «Հայկական գրատպության կամ տպագրական քաղաքակրթության 500–ամյակը (1512–2012)» հոդվածը «Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում» ժողովածուում (Ե., 2010):

36. Ընդհանրապես արվեստին բնորոշ այս իրողությանը կարելի է ի մոտո ծանոթանալ, ասենք, գեղարվեստական գրականության օրինակով: Դրա համար կարելի է վերընթերցել ու համադրել թեկուզ էպոսի ու ժողովրդական հեքիաթների գրական մշակումները: Կարծում եմ՝ պակաս հետաքրքիր չի լինի նաև թափառող սյուժեների մոտիվներով տարրեր հեղինակների ստեղծագործությունների ընթերցումն ու համարությունը:

37. Նալչաջյան Ա., Գիշերային կյանք, Ե., 2000, էջ 81–82:

38. Որպես օրինակ՝ կարելի է ծանոթանալ Ե. Ֆրոնի «Մարդը գա՞յլ է, թե՝ գառ» նյութին («Գարուն» ամս., Ե., 1999, թիվ 1):

39. Այս առիթով ևս ցանկանում եմ որոշ պարզաբանում տալ: Իրականում այդքան էլ հեշտ բան չէ աշխարհակալ ժողովուրդ լինելը:

Դա լրջագույն մարտահրավերներ է պարունակում, մանավանդ եթե նվաճողն այդ տարածքում չի հաստատվում ակտիվ, կայուն ու նստակյաց կենսագործունեությամբ: Աշխարհակալությունն ամենաբանկ արժեքի՝ մարդու արտահանումն ու ծախսն է, սեփական ներուժի նոսրացում-սփռումը: Եթե դա փոխհատուցվի միայն մայր երկիր բերված թալանով, կարող է և օգուտը ծախսածին համարժեք չլինել (օրինակ՝ մոնղոլների մի քանի դար տևած աշխարհակալությունը, որին հավասարը երբեւ չէր եղել ու չեղավ էլ):

Ուրեմն աշխարհակալ լինելն ամեն ժողովրդի բան չէ: Պատմական փորձը ցույց է տալիս, որ դրա համար ևս անհրաժեշտ է ազգային առանձնահատուկ օժտվածություն: Որքան թույլ է տալիս եզրակացնել իմ իմացական փորձը, առ այսօր ամենահաջողակ աշխարհակալ ազգը եղել և մնում է անգլիացին: Արժե ավելի մանրամասն ու իհմնավոր իմանալ մարդու այդ տեսակն ու նրա ստեղծած մշակույթի ոգին:

Իմիջիայլոց, ասեմ նաև, որ աշխարհի ժողովուրդներն ավելի հաջողել են իրենց ազգային-ազատագրական պայքարը, քան աշխարհակալական ջանքերը:

40. Նյութն առաջին անգամ տպագրվել է «Վեմ» ամսագրի 2011 թ. 2-րդ (34) համարում: Այստեղ ներկայացվում է որոշ վերանայումով:

41. Ազարյան Վ., Արվեստի պատմության պատմության մասին: Տե՛ս «Գարուն» ամս., Ե., 2005, թիվ 9, էջ 27–32:

42. Անհատական, հասարակական և պատմական հիշողության առանձնահատկությունների վերլուծությամբ գրաղվել են հանրահայտ գիտնականներ (Մ. Զալբվակս, Պ. Նորա, Մ. Սխուրսոն, Է. Շիլս և այլք): Նրանց տեսակետների ներկայացումը և վերլուծությունն այս դեպքում դուրս են իմ նպատակադրումից:

43. Ստեփանյան Ա., Պատմությունն իբրև տեքստ: Տե՛ս «Պատմություն և կոթություն» ամս., Ե., 2005, թիվ 1–2, էջ 9–22:

44. Պատմական գիտելիքի օբյեկտիվության հիմնախնդրի վերաբերյալ տեսակետների վերլուծությունը տե՛ս Смоленский Н. И., Теория и методология истории, М., 2008, с.160–197:

45. Տե՛ս «Թանգարան» ամս., Ե., 2009, հ. 1, էջ 17–44:

46. Մարության Յ., Դայ ինքնության պատկերագրությունը, հ. 1, Ե., 2009, էջ 27–170:

47. Մինչև վերջ ամկեղծանալով՝ խոստովանելու պես ասեմ, որ ընդգծումով գրված այս տողերի ծշնարտությունն ափսոսանքի ու ցավի շաղախով զգացումի առիթ է ինձ հաճար: Թվում է՝ այդ ծշնարտությունն ամենից շատ վերաբերում է հենց մեզ, մեր անցած պատմական ուղուն ու ներկային: Մենք եզակի համառությամբ և կործանարար անլրջությամբ արհամարհում ենք մեր պատմական փորձի դասերը: Ահա թե ինչու այդ տողերը կարելի է մասամբ վերածնավորել այսպես՝ մասնավորեցնելով իբրև հենց մեզ վերաբերող ծշնարտություն:

*Ինչ որ լիմում է, արդեն եղել է:  
Ինչ որ ասվում է, վաղուց ասվել է:  
Բայց դե մե՞զ ինչ,  
թե ինչ է եղել,  
թե ինչ է ասվել ...*

Դարմար առիթը բաց չքողնելով՝ ասեմ նաև, որ ինձ հաճախ է զբաղեցնում ներկայի մեջ անցյալի ինաստավորման կամ վերահինաստավորման մշակութաբանական հիմնախնդիրը: Դա անհատ մարդուց, ազգերից, ընդհանրապես մարդկությունից անբաժան գործունեություն է, մի տեսակ խաղ, որն ինաստավորվում է ըստ կոնկրետ ժամանակի կենսական հանգամանքների ու իրավիճակի պատվերի: Որպես պարզագույն օրինակ՝ կարելի է հիշել Հովի. Թումանյանի «Նեսոյի քարաբաղնիսի» հերոսների գրույցը Նեսոյի մահվանից առաջ և հետո:

Կենսական փաստի ինաստավորման, ընդհանրապես մարդու գոյության ինաստի, հարակից այլ հարցերի վերաբերյալ մտորումներն ինձ բերել են այն համոզման, որ կեցության և ժամանակի փոխհարաբերությունը կամ ժամանակի մշակութաբանական բովանդակությունը կարելի է սահմանել այսպես:

*Անցյալը մեր շալակի թեռն է, ներկան՝ ազատության շանսը, իսկ ապագան՝ կենսատու իմքնախարեռությունը:*

48. Նալչաջյան Ա., Էթնիկական հոգեբանություն, Ե., 2001, էջ 48–74:

49. Խորհուրդ կտայի դրանց վերաբերյալ ծեր իմացությունը հարստացնել և սեփական կարծիք ծևավորել «1600. հայոց գրեր» (Ե., 2006) ժողովածուի նյութերն ընթերցելով:

## ՑԱՆԿ

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ազգ	Լեզվամտածողություն
Ազգային	Լեզու
ինքնագիտակցություն	
Ազգային ինքնություն	Կենսագործունեություն
Ազգային նկարագիր	Կենսահամակարգ
Աշխարհայացք	Կենսատարածք
Առասպել	Կենսոլորտ
Արժեհանակարգ	Կոնցեպտ
Բանականություն	Ցանակեցություն
Գաղափարագիր	Ցնչուն (հնչույթ)
Գիտակցություն	Ցնչունագիր
Գիր	Ցոգեկերտվածք
Գիրք	Չեռագիր
Գրականություն	
գեղարվեստական	Մշակութաբանություն
Գրականություն գիտական	Մշակութաստեղծում
Դասագիրք	Մշակույթ
Եղելություն	Մշակույթ նախնական
Եվոյուցիա	
կենսաբանական	Պատմագրություն
Եվոյուցիա մշակութային	Պատմություն
Եվոյուցիա սոցիալական	Սալիկ կավե
Ժառանգորդում	Տպագիր
	Փիլիսոփայություն

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

- Ավետիսյան Զ., Գեղարվեստական մտածողության հետքերով, Ե., 1985, 160 էջ:
- «Աֆորիզմներ», Երևան, 1989, 702 էջ:
- Բաղդասարյան Ա., Ինչպես է ստեղծվում գիրքը, Ե., 2010, 208 էջ:
- «Գարուն» ամս., Ե., 2005, թիվ 9:
- «Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում», Ե., 2010, 132 էջ:
- Գլուխով Ա., Հնչում են միայն գրեթը, Ե., 1988, 219 էջ:
- Գևորգյան Յ., Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ, Ե., 2005, 528 էջ:
- «Թանգարան» հանդես, Ե., 2009:
- «Թանգարան» հանդես, Ե., 2012:
- Թոֆլեր Է., Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ, Ե., 2006, 232 էջ:
- Թումանյան Յովիկ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 7-րդ, Ե., 1995 թ., 718 էջ:
- Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. Երկրորդ, Ե., 1972, 721 էջ:
- Լոռւկոտկա Զ., Գրի զարգացումը, Ե., 1955, 360 էջ:
- Խաչատրյան Լ., Բառաշխարիկ գաղտնիքները, Ե., 2014, 265 էջ:
- Խաչատրյան Լ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008, 302 էջ:
- «1600. հայոց գրեր», Ե., 2006, 600 էջ:
- Յայ սփյուռք. հանրագիտարան, Ե., 2003, 732 էջ:
- Յարությունյան Ե., Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Ե., 2004, 152 էջ:
- Յարությունյան Մ., Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը, Ե., 2014, 648 էջ:
- Մարության Յ., Յայ ինքնության պատկերագրությունը, հ. 1, Ե., 2009, 432 էջ:
- Մելքոնյան Գ., Մշակութաբանություն, Ե., 2001, 236 էջ:
- Միրզոյան Յ., Նարեկացիագիտական հետազոտություններ, Ե., 2010, 395 էջ:
- Մկրտչյան Ն., Բառերի կենսագրությունից, Ե., 1999, 383 էջ:
- Մշակութաբանություն (Ա. Սարգսյան և ուրիշներ), Ե., 2007, 396 էջ:

- Մովսիսյան Ա., Յայկական մեհենագրություն, Ե., 2003 թ., 272 էջ:
- Մովսիսյան Ա., Նախամաշտոցյան Յայաստանի գրային համակարգերը, Ե., 2003, 400 էջ:
- Նալչաջյան Ա., Գիշերային կյանք, Ե., 2000, 496 էջ:
- Նալչաջյան Ա., Եթնիկական հոգերանություն, Ե., 2001, 544 էջ:
- Պետրոսյան Յ., Յայերենագիտական բառարան, Ե., 1987, 686 էջ:
- Պիկիչյան Յ., Գրի և գրքի հետ կապված ծիսակարգը հայոց ավանդույթում: «1600. հայոց գրեր», Ե., 2006, 600 էջ:
- Պողոսյան Գ., Յարությունյան Մ., Առաքելյան Վ., Յայաստան. օտարացած հասարակություն, Ե., 2007, 169 էջ:
- Սարգսյան Ա., Մշակույթի տեսություն, Ե., 2003, 176 էջ:
- Սարգսյան Ա., Փիլիսոփայության դասընթաց, Ե., 2010, 524 էջ:
- Սարգսյան Ա., Մշակույթի տեսություն և հայկական մշակույթի պատմություն, Ե., 2004, 228 էջ:
- Ստեփանյան Ա., Պատմությունն իբրև տեքստ: «Պատմություն և կրթություն» ամս., Ե., 2005, թիվ 1-2:
- Ստեփանյան Ա., Պատմության հետազիջը, Ե., 2014, 496 էջ:
- Սուքիասյան Գ., Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն, Ե., 2013, 160 էջ:
- Վորոնցով Վլ., Բանականության սիմֆոնիա, Ե., 1981, 752 էջ:
- Ֆրոն Է., Մարդը գա՞յլ է, թե՞ գառ: «Գարուն» ամս., Ե., 1999, թիվ 1:
- Владимиров Л., Всеобщая история книги, М., 1988, 312 с.
- Епископосян Л., Когда генетика и история сталкиваются, Е., 2008, 156 с. Книга и культура, М., 1979, 288 с.
- Ляхов В., Очерки теории искусства книги, М., 1971, 256 с.
- Энциклопедия новейших афоризмов: ХХ век. Минск, 1999, 752 с.
- Кассирер Э., Опыт о человеке. Введение в философию человеческой культуры, 1998, 784 с.
- Ясперс К., Смысл и назначение истории, М., 1991, 527 с.
- Смоленский Н., Теория и методология истории, М., 2008, 272 с.
- Гетманова А., Логика, М., 2013, 415 с.
- Коллингвуд Р., Идея истории. Автобиография, М., 1980, 484 с.
- Лебон Г., Психология народов и масс, М., 2011, 238 с.
- Petrosyan H., Writing and the Book // Armenian Folk Arts, Culture and Identity,  
Bloomington and Indianapolis, Indiana Univ. Press, 2001.

Սերգեյ Ա. Աղաջանյան

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳԻՐԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՍՏԱՐԳՈՒՄ  
Ուսումնական ձեռնարկ

Сергей А. Агаджанян

**ЯЗЫК И ПИСЬМЕННОСТЬ В СИСТЕМЕ КУЛЬТУРЫ**

(Учебное пособие, на армянском языке)

Sergey A. Aghajanyan

**LANGUAGE AND WRITING IN THE SYSTEM OF CULTURE**

(Educational Manual, in Armenian)

Խմբագիր՝ Ա. Սահակյան  
Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հանձնված է արտադրություն 15.10.2015 թ.:

Չափսը՝ 60x84<sup>1</sup>/<sub>16</sub>, 8.75 տպ. նամուլ:

Տպաքանակը՝ 100 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչության տպարան,  
Երևան, Մարշալ Բաղրամյան 24